Գիրքը հրատարակվել է ԵՀԽ հայաստանյան Կլոր սեղան հիմնադրամի հովանավորությամբ

ՀՀ դատավորների միությունը շնորհակալություն է հայտնում ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտին, ՀՀ իրավաբանների միությանը, Զարգացման հայկական ինստիտուտին իրենց առաջարկություններով ու դիտողություններով ընտանեկան հանրամատչելի իրավաբանական գրադարանի ստեղծմանն աջակցելու համար

Ընտանեկան հանրամատչելի գրադարանի շարքի մյուս հրատարակություններին կարող եք ծանոթանալ՝ այցելելով ՀՀ դատավորների միության ինտերնետային կայքէջ հետևյալ հասցեներով՝

www.datavor.am
www.judge.am

ASSOCIATION OF JUDGES
OF THE REPUBLIC OF ARMENIA

VAHE YENGIBARYAN
ARTUR CHAKHOYAN

MILITARY SERVANT RIGHTS

FAMILY LAW MANUAL

Edited by: **HRACHIK SARGSYAN**
President of the Association of Judges of the Republic of Armenia, Chairman of Common Jurisdiction Court of Armavir Marz

Lingvo-stylistic editor: **Armine NAZARYAN**

Yerevan
«Antares»
2011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ

ՎԱՀԵ ԵՆԳԻԲԱՐՅԱՆ
ԱՐԹՈՒՐ ՉԱԽՈՅԱՆ

ԶԻՆՇԱՌԱՅՈՂԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

ԸՆՏԱՆԵԿԱՆ ՀԱՆՐԱՄԱՏՉԵԼԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Խմբագիր՝ **Հրաչիկ ՍԱՐԳՍՅԱՆ**
ՀՀ դատավորների միության նախագահ,
Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության
դատարանի նախագահ

Լեզվաոճական խմբագիր՝ **Արմինե ՆԱՉԱՐՅԱՆ**

Երևան
«Անտարես»
2011

ՀՏԴ 341.231.14 : 355/ 359 : 349
ԳՄԴ 67.91 + 68
Ե 472

Տպագրվում է
ՀՀ դատավորների միության խորհրդի որոշմամբ

Ենգիբարյան Վահե, Չախոյան Արթուր
Ե 472 Զինծառայողի իրավունքներ / Վահե Ենգիբարյան, Արթուր Չախոյան; Խմբ. Հ. Սարգսյան.- Եր.: Անտարես, 2011.- 92 էջ:

Ձեռնարկում համակարգված և հանրամատչելի եղանակով ներկայացված են զինծառայողի իրավունքներին վերաբերող հիմնահարցերը, ինչպես նաև այս բնագավառում ՀՀ օրենսդրությունը:

ՀՏԴ 341.231.14 : 355/ 359 : 349
ԳՄԴ 67.91 + 68

ISBN 978–9939–51–292–1

© ՀՀ դատավորների միություն, 2011
© Սարգսյան Հրաչիկ, 2011
© Ենգիբարյան Վահե, 2011
© Չախոյան Արթուր, 2011

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Բաժին 1. Ընդհանուր դրույթներ 9
Ինչ իրավական ակտերով են կարգավորվում զինծառայողների իրավունքները 9
Ինչ դեր ունի ՀՀ Սահմանադրությունը զինծառայողների իրավունքների կարգավորման հարցում 9
Զինծառայողների իրավունքների պաշտպանության ինչ երաշխիքներ կան 10
Որն է Պաշտպանի գործունեության հիմնական ուղղությունը 10
Ինչ լիազորություններ ունի Հանրապետության Նախագահը ՀՀ պաշտպանության իրականացման հարցում 11
Ինչ լիազորություններ ունի Հանրապետության կառավարությունը ՀՀ պաշտպանության իրականացման հարցում 12

Բաժին 2. Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովությունը և պաշտպանությունը 14
Ովքեր են համարվում զինծառայողներ 14
Ովքեր են համարվում զինծառայողներին հավասարեցված անձինք 14
Ինչ պարտավորություններ ունեն պետական մարմինները և գործատուները զինծառայողների սոցիալական ապահովության բնագավառում 15
Զինծառայողների համար աշխատանքային և նյութական ապահովության ինչ երաշխիքներ կան 15
Ինչպես է կարգավորվում զինծառայողների աշխատելու և հանգստի ժամանակը 18
Որքան է զինծառայողներին տրամադրվող արձակուրդի տևողությունը 18
Զինծառայողներն ապահովվում են, արդյոք, անվճար բժշկական օգնությամբ 19
Զինծառայողներն ունեն, արդյոք, բնակարանային ապահովության իրավունք 20
Զինծառայողներն ունեն, արդյոք, ամենամսյա դրամական օգնության իրավունք 21
Զինծառայողներն ունեն, արդյոք, անվճար երթևեկելու իրավունք 22
Կրթություն ստանալու ինչ երաշխիքներ կան զինծառայողների համար 22
Ուրիշ ինչ երաշխիքներ կան զինծառայողների համար 23

Բաժին 3. Զինվորական ծառայություն անցնելը 25
Ինչ իրավական ակտերով են կարգավորվում զինվորական ծառայություն անցնելու հետ կապված հարցերը 25
Ինչ է զինվորական ծառայությունը 25
Ինչպես է կազմակերպվում և իրականացվում զինվորական ծառայությունը 26
Զինվորական ծառայության ինչ տեսակներ և ժամկետներ կան 27
Որն է զինվորական ծառայության սկիզբը և ավարտը 28
Ինչպես է հաշվարկվում զինվորական ծառայության ժամկետը 29

Բաժին 4. Զինծառայողների հետ պայմանագիր կնքելը 30
Ինչ կարգով է կնքվում պայմանագիրը զինծառայողի հետ 30
Երբ է պայմանագիրը մտնում ուժի մեջ 30
Երբ է դադարում պայմանագրի գործողությունը 31
Ինչ կարգով է կնքվում առաջին պայմանագիրը 31
Որքան է առաջին պայմանագրի ժամկետը 32
Որ մարմիններն են ստորագրում առաջին պայմանագիրը 32
Առաջին պայմանագիրը կնքելուց կամ պայմանագրային զինվորական ծառայությունից հրաժարվելու ինչ հիմքեր կան 33
Որ դեպքերում է զինծառայողի հետ կնքվում նոր պայմանագիր 34

Բաժին 5. Զինվորական պաշտոնի նշանակելը, ազատելը, տեղափոխելը և կադրերի տրամադրության տակ թողնելը 36
Ինչ կարգով են նշանակում զինվորական պաշտոնի 36
Ինչ պայմաններ պետք է պահպանվեն զինվորական պաշտոնի նշանակելիս 38
Երբ կարող է զինծառայողը նշանակվել բարձր պաշտոնի 39
Երբ կարող է զինծառայողը նշանակվել հավասար պաշտոնի 40
Երբ կարող է զինծառայողը նշանակվել ցածր պաշտոնի 40
Զինծառայողը երբ է նշանակվում պաշտոնեական պարտականությունների ժամանակավոր կատարող 41
Զինծառայողները որ դեպքերում կարող են թողնվել կադրերի տրամադրության տակ 42
Զինծառայողը որ դեպքերում է ազատվում զինվորական պաշտոնից 43
Զինծառայողը որ դեպքերում է ծառայության նոր վայր տեղափոխվում 43
Որ զինծառայողներն են ենթակա պլանային փոխարինման կարգով տեղափոխման 45
Զինծառայողը կարող է, արդյոք, ծառայությունը շարունակել պետական լիազոր այլ մարմիններում 46

Զինծառայողները կարող են, արդյոք, գործուղվել պետական
այլ մարմիններ 47

Բաժին 6. Որակավորում 48

Ինչ նպատակով է կատարվում զինծառայողների որակավորումը 48

Ինչ պարտականություններ ունի զինծառայողին որակավորող
հրամանատարը 48

Ովքեր են ընդգրկվում որակավորման հանձնաժողովներում 49

Բաժին 7. Զինծառայողներին տրվող արձակուրդը 51

Զինծառայողներին տրվող արձակուրդի ինչ տեսակներ կան 51

Որքան է հերթական արձակուրդի տևողությունը 51

Զինծառայողին երբ է տրվում լրացուցիչ արձակուրդ 51

Որքան կարող է լինել պարտադիր զինծառայողի
արձակուրդի տևողությունը 52

Ինչ առանձնահատկություններ ունի հերթական արձակուրդը 52

Զինծառայողին երբ է տրվում հիվանդության արձակուրդ 53

Որքան կարող է լինել ուսումնական արձակուրդի տևողությունը 54

Կին զինծառայողներին հղիության, ծննդաբերության և երեխայի
խնամքի համար արդյոք տրվում է արձակուրդ 54

Բաժին 8. Զինծառայողին ծառայությունից ազատելը 56

Որ դեպքերում է զինծառայողն ազատվում ծառայությունից 56

Զինծառայողին ծառայությունից ազատելու ինչ հիմքեր կան 56

Որ մարմիններն են իրավասու զինծառայողին արձակելու
զինվորական ծառայությունից 58

Բաժին 9. Զինապարտության մասին 60

Ինչով են կարգավորվում զինապարտության մասին հարցերը 60

Ինչ է զինապարտությունը և ովքեր են համարվում զինապարտներ 60

Որ մարմիններն են պարտավոր ապահովել զինապարտությունը 61

Բաժին 10. Զինվորական հաշվառում 63

Որ մարմիններն են իրականացնում զինվորական հաշվառում 63

Ինչ պարտականություններ ունեն քաղաքացիները
զինվորական հաշվառման գործընթացում 63

Բաժին 11. Զորակոչ 65

Ովքեր են զորակոչվում պարտադիր զինվորական ծառայության 65

Ով կարող է ազատվել պարտադիր զինվորական ծառայությունից 65

Ընտանեկան դրության բերումով որ զորակոչիկին է զորակոչից տարկետում տրվում.....67
Ուսումը շարունակելու համար ում է տրվում տարկետում 68
Առողջական վիճակի պատճառով զորակոչիկներին արդյոք տարկետում տրվում 69
Պարտադիր զինվորական ծառայության զորակոչն անցկացնելու համար ինչ հանձնաժողովներ են ստեղծվում.....70

Բաժին 12. Զինծառայողների պատասխանատվությունը..... 72
Պատասխանատվության ինչ տեսակների կարող են ենթարկվել զինծառայողները.....72
ՀՀ քրեական օրենսգիրքը պատասխանատվություն նախատեսում է, արդյոք, զինծառայողների համար.....73
Որ հանցագործություններն են համարվում զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված 74

Քանի խմբի են դասակարգվում զինվորական կարգի դեմ ուղղված հանցագործությունները 75

Ինչ է սահմանում ՀՀ քրեական օրենսգրքի 356-րդ հոդվածը.....77
Ինչ է սահմանում ՀՀ քրեական օրենսգրքի 357-րդ հոդվածը.....78
Ինչ է սահմանում ՀՀ քրեական օրենսգրքի 358-րդ հոդվածը.....79
Ինչ է սահմանում ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածը.....80
Ինչ է սահմանում ՀՀ քրեական օրենսգրքի 360-րդ հոդվածը.....81
Ինչ է սահմանում ՀՀ քրեական օրենսգրքի 361-րդ հոդվածը.....82
Ինչ է սահմանում ՀՀ քրեական օրենսգրքի 362-րդ հոդվածը.....84
Ինչ է սահմանում ՀՀ քրեական օրենսգրքի 363-րդ հոդվածը.....85
Ինչ է սահմանում ՀՀ քրեական օրենսգրքի 364-րդ հոդվածը.....87
Ինչ է սահմանում ՀՀ քրեական օրենսգրքի 369-րդ հոդվածը.....87
Ինչ է սահմանում ՀՀ քրեական օրենսգրքի 370-րդ հոդվածը.....88
Ինչ է սահմանում ՀՀ քրեական օրենսգրքի 371-րդ հոդվածը.....89
Ինչ է սահմանում ՀՀ քրեական օրենսգրքի 379-րդ հոդվածը.....89
Ինչ է սահմանում ՀՀ քրեական օրենսգրքի 380-րդ հոդվածը.....90
Ինչ է սահմանում ՀՀ քրեական օրենսգրքի 381-րդ հոդվածը.....90

Բաժին 1
Ընդհանուր դրույթներ

Ինչ իրավական ակտերով են կարգավորվում զինծառայողների իրավունքները

Զինծառայողների իրավունքները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, օրենքներով, Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված միջազգային պայմանագրերով, այլ օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերով:

Ինչ դեր ունի ՀՀ Սահմանադրությունը զինծառայողների իրավունքների կարգավորման հարցում

Լատիներենում constitutio (Սահմանադրություն) հասկացությունը նշանակում է հիմնել, սահմանել: Սակայն ամեն մի «հիմնում» կամ «սահմանում» սահմանադրություն չէ: Վերջինս հիմնականում բնորոշվում է որպես պետության հիմնական օրենք (օրենքների ամբողջություն), որն ունի բարձրագույն իրավաբանական ուժ:

Սահմանադրության հիմնական բնութագրիչները պայմանավորված են այն հանգամանքով, որ դրանով սահմանվում են.

1. պետական կարգի հիմունքները,
2. մարդու և քաղաքացու իրավունքների ու հիմնարար ազատությունների ապահովման ու պաշտպանության երաշխիքները,
3. պետական իշխանության համակարգը, դրա գործառույթները, կազմակերպման սկզբունքներն ու կարգը,
4. քաղաքական իշխանության իրականացման և անհատի քաղաքական, տնտեսական, սոցիալական ազատությունների դրսևորման իրավական սահմանները:

«Սահմանադրություն» հասկացությունը հայերենում նույնպես առաջին հերթին ենթադրում է սահմանել: Սահմանադրությունը (հիմնական օրենքը) պետության՝ բարձրագույն իրավաբանական ուժով օժտված հիմնական օրենքն է և հենարան է ընթացիկ օրենսդրության համար:

ՀՀ Սահմանադրության հոդված 6-ի համաձայն՝ «Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ, և նրա նորմերը գործում են անմիջականորեն:

Օրենքները պետք է համապատասխանեն Սահմանադրությանը: Այլ իրավական ակտերը պետք է համապատասխանեն Սահմանադրությանը և օրենքներին:

Օրենքներն ուժի մեջ են մտնում «Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագրում» հրապարակվելուց հետո: Այլ նորմատիվ

իրավական ակտերն ուժի մեջ են մտնում օրենքով սահմանված կարգով հրապարակվելուց հետո»:

Զինծառայողների իրավունքների պաշտպանության ինչ երաշխիքներ կան

Զինծառայողների իրավունքների պաշտպանության հարցում կարևոր երաշխիք է հանդիսանում մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտը:

Մարդու իրավունքների պաշտպանի կամ, ինչպես ընդունված է ասել, օմբուդսմենի (այսուհետ՝ Պաշտպան) պաշտոնն իրավունքների և ազատությունների պետական պաշտպանության համակարգում գործող լրացուցիչ երաշխիքների մեջ համեմատաբար նոր, ժողովրդավարական, ինքնուրույն և անկախ խորհրդարանական ինստիտուտ է, որին, Սահմանադրության 18-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, իրավունք ունի դիմելու յուրաքանչյուր ոք՝ իր իրավունքների ու ազատությունների պաշտպանության համար օրենքով սահմանված հիմքերով և կարգով աջակցություն ստանալու նպատակով:

Պաշտպանը, ՀՀ Սահմանադրության և օրենքների, ՀՀ միջազգային պայմանագրերի, միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքների ու նորմերի համաձայն, իրականացնում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց կողմից խախտված՝ մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանությունը:

ՀՀ օրենսդրությունը թույլ է տալիս նույն նպատակով ՀՀ մարզերում ստեղծել Պաշտպանի ներկայացուցչություններ:

Ավելին՝ 2007թ. նշանակվել է Պաշտպանի խորհրդական՝ զինծառայողների իրավունքների պաշտպանության հարցում ՀՀ պաշտպանության նախարարին օժանդակելու համար:

Որն է Պաշտպանի գործունեության հիմնական ուղղությունը

Պաշտպանի գործունեության հիմնական ուղղությունն իրավունքի խախտման վերաբերյալ բողոքների քննարկումն է և որոշումների ընդունումը:

Նա կարող է ընդունել հետևյալ որոշումներից որևէ մեկը.

1) առաջարկել իրավունքի խախտում թույլ տված մարմնին կամ պաշտոնատար անձին՝ վերացնել թույլ տրված խախտումները՝ նշելով անհրաժեշտ և կատարման ենթակա միջոցառումները,

2) Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետում թվարկված նորմատիվ ակտերի՝ Սահմանադրության 2-րդ գլխի դրույթներին համապատասխանության կամ որ նույնն է՝ մարդու հիմնական իրավունքների և ազատությունների խախտման հարցերով դիմել ՀՀ սահմանադրական դատարան,

3) հայց ներկայացնել վարչական դատարան՝ իրավախախտի՝ օրենքին և այլ իրավական ակտերին հակասող նորմատիվ իրավական ակտն ամբողջովին կամ մասնակիորեն անվավեր ճանաչելու մասին, եթե իրավախախտն ինքը սահմանված ժամկետում անվավեր չի ճանաչում այն,

4) առաջարկել իրավասու պետական մարմիններին՝ կարգապահական կամ վարչական տույժի ենթարկել կամ քրեական պատասխանատվության կանչել այն անձին, ում որոշումներով կամ գործողություններով (անգործությամբ) խախտվել են մարդու իրավունքները և հիմնարար ազատությունները, և (կամ) ով խախտել է ՄԻՊ-ի մասին օրենքը:

Պաշտպանի՝ վեճի լուծման խնդրանքով դատարան դիմելու, այդ թվում իրավաբանական հարկադրանք կիրառելու համար, իրավասությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ պետական մարմինների թվում միայն դատարանն իրավունք ունի պաշտպանություն իրականացնելու իրավունք:

Ինչ լիազորություններ ունի Հանրապետության Նախագահը ՀՀ պաշտպանության իրականացման հարցում

Սահմանադրությունը Հանրապետության Նախագահին գերակա, թեև ոչ միանձնյա և մենիշխան, դերակատարություն է ընձեռում երկրի արտաքին, պաշտպանության, ներքին և արտաքին անվտանգության քաղաքականության բնագավառներում՝ նրան վերապահելով համապատասխան լիազորություններ, որոնք նա կարող է և պարտավոր է իրականացնել ինչպես այն պարագայում, երբ նա քաղաքական մեծամասնության լիդերն է, այնպես էլ «համակեցության» պարագայում:

Հանրապետության Նախագահի այս լիազորությունների խումբը սահմանվել է որպես պետության և ժողովրդի կենսական նշանակության գերագույն շահերի «երաշխավորի» խնդիր:

Հանրապետության Նախագահը գործադիր իշխանության կրողներից մեկն է, իսկ նրա կարգավիճակը՝ որպես պետության գլուխ, և դրա հետ կապված տարբեր խնդիրները և գործառույթները հիմնականում ներդաշնակ են ըստ կիսանախագահական կառավարման մոդելի գործող իշխանությունների բաժանման յուրահատկություններին:

Հանրապետության Նախագահի վրա է դրված երկրի համար կենսական նշանակություն ունեցող այնպիսի արժեքների երաշխավորումը, ինչպիսիք են Հայաստանի Հանրապետության անկախությունը, տարածքա-

յին ամբողջականությունը և անվտանգությունը: Հանրապետության Նախագահին նման խնդրի իրականացում վերապահելը մեծապես պայմանավորված է ժողովրդի կողմից նրա ուղղակի ընտրության փաստով:

Պետության անկախությունը, տարածքային ամբողջականությունը և անվտանգությունն այն հիմնարար արժեքներն են, առանց որոնց Հայաստանի Հանրապետությունը չի կարող գոյություն ունենալ որպես «ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն»:

Պետության անվտանգությունը ներառում է ինչպես ներքին, այնպես էլ արտաքին անվտանգությունը: Հանրապետության Նախագահի կողմից այս արժեքների երաշխավորումը ենթադրում է իր բնույթով գործադիր իշխանության իրականացում, քանի որ երկրի անկախության, տարածքային ամբողջականության և անվտանգության ապահովման համար անհրաժեշտ է սահմանել երկրի քաղաքականությունը պաշտպանության և անվտանգության բնագավառներում և դրանք իրականացնել գործադիր իշխանության համապատասխան մարմինների միջոցով: Սահմանադրությունն ակներևաբար ելնում է այս բնագավառներում Հանրապետության Նախագահի ղեկավար դիրքից, քանի որ Հանրապետության Նախագահին է վերապահում պաշտպանության բնագավառում պետական մարմինների գործունեության համակարգումը, ռազմական դրության, ընդհանուր կամ մասնակի զորահավաքի հայտարարումը և զինված ուժերի օգտագործման մասին որոշման ընդունումը: Բացի դրանից, Հանրապետության Նախագահը զինված ուժերի գերագույն գլխավոր հրամանատարն է, նշանակում և ազատում է զինված ուժերի և այլ զորքերի բարձրագույն հրամանատարական կազմը, իսկ պատերազմի ժամանակ կարող է նշանակել և ազատել զինված ուժերի գլխավոր հրամանատարին:

Ինչ լիազորություններ ունի Հանրապետության կառավարությունը ՀՀ պաշտպանության իրականացման հարցում

ՀՀ կառավարության կարևոր լիազորություններից է ՀՀ պաշտպանության իրականացման ապահովումը:

Սահմանադրական նշված դրույթի իրականացման նպատակով կառավարությունը լիազորված է ապահովել հանրապետության պաշտպանության քաղաքականության իրականացումը: Այդ առնչությամբ այն հաստատում է զինված ուժերի զինծառայողների ու աշխատողների հաստիքային և այլ զորքերի թվաքանակը, զինվորական հաշվառման, նախազորակոչային պատրաստության կարգերը, ինչպես նաև զինհաշվառման մասնագիտությունների ամրագրման ենթակա մասնագիտությունների և պաշտոնների ցանկերը, պաշտպանության բնագավառում պետական

լիազոր մարմնի (պաշտպանության նախարարության) և ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի կանոնադրություններն ու կառուցվածքները:

Կառավարությունը մշակում և հաստատում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների աշխատանքը ռազմական դրության աշխատանքային ռեժիմների փոխադրելու պլանը, կարգն ու պայմանները, պետական ու զորահավաքային պահուստի նյութական արժեքների կուտակման, ապամրագրման, թարմացման և փոխարինման ծրագրերը:

Իր լիազորությունների շրջանակներում կառավարությունը մասնակցում է ռազմական քաղաքականության հիմնական ուղղությունների, այդ թվում՝ ազգային անվտանգության ռազմավարության և ռազմական դոկտրինաների մշակման աշխատանքներին, քաղաքացիական պաշտպանության հանրապետական պլանի մշակման աշխատանքներին և ապահովում դրանց կատարումը, ինչպես նաև պաշտպանության նպատակով ՀՀ տարածքի օպերատիվ սարքավորման պլանի ռազմաարդյունաբերական համալիրի, սպառազինության և ռազմական տեխնիկայի զարգացման պետական ծրագրերի մշակման աշխատանքներին և ապահովում դրանց կատարումը:

Կառավարությունը որոշում է ընդունում պարտադիր զինծառայության զորակոչ կազմակերպելու, ընդհանուր կամ մասնակի զորահավաք անցկացնելու վերաբերյալ, կազմակերպում և համակարգում է պետական մարմինների գործունեությունը՝ զինված ուժերի և այլ զորքերի ֆինանսավորման, սպառազինման, բնակավորման, էներգետիկ և այլ ապահովման, ինչպես նաև զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների, զինծառայողներին հավասարեցված անձանց սոցիալական պաշտպանության ապահովման բնագավառներում:

Պաշտպանության բնագավառում կառավարությունը ծրագրում և ապահովում է ռազմական գիտության զարգացումը, ստեղծում, վերակազմակերպում և լուծարում է պաշտպանության ոլորտի կազմակերպությունները, ռազմաուսումնական և ռազմագիտական հաստատություններն ու դրանց կառուցվածքային ստորաբաժանումները:

Կառավարությունը կնքում է պաշտպանության ոլորտի միջկառավարական պայմանագրեր, որոշում է ռազմական սպառնալիքների նվազեցման և ՀՀ ու այլ պետությունների և միջազգային կազմակերպությունների միջև վստահության ամրապնդման ուղղությունները, կազմակերպում է զենքի և ռազմական տեխնիկայի, ռազմավարական նշանակության ապրանքների և տեխնոլոգիաների արտահանումն ու ներմուծումը, իրականացնում է օրենքով սահմանված այլ լիազորություններ:

Բաժին 2
Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովությունը և պաշտպանությունը

Ովքեր են համարվում զինծառայողներ

Համաձայն 1998 թվականի հոկտեմբերի 27-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի՝ զինծառայող են համարվում Հայաստանի Հանրապետության պաշտպանության, ներքին գործերի, ազգային անվտանգության հանրապետական գործադիր մարմինների (այսուհետ՝ համապատասխան մարմիններ) համակարգի հրամանատարական և շարքային անձնակազմի ծառայողները:

Ովքեր են համարվում զինծառայողներին հավասարեցված անձինք

Զինծառայողներին հավասարեցված անձինք են՝

ա) վարժական հավաքների կանչված զինապարտները՝ նրանց վրա տարածվում են «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 31, 33 (չորրորդ մաս), 34 (չորրորդ մաս), 35, 36 (առաջին մաս), 38, 39, 40-րդ հոդվածներով նախատեսված դրույթները.

բ) Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողությունների մասնակիցները, նրանց վրա տարածվում են Օրենքի 29 (երրորդ մաս), 33 (երկրորդ, երրորդ և չորրորդ մասեր), 34 (չորրորդ մաս), 37 (երրորդ մասի «ա»կետ), 38, 39, 40-րդ հոդվածներով նախատեսված դրույթները.

գ) Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկների ծառայողները, որոնց վրա տարածվում են Օրենքով նախատեսված դրույթները, և հարկադիր կատարողները, որոնց վրա տարածվում են Օրենքի 38-րդ հոդվածով նախատեսված դրույթները.

դ) պաշտպանության հանրապետական գործադիր մարմնում, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայությունում և Հայաստանի Հանրապետության ոստիկանությունում քաղաքացիական հատուկ ծառայության պաշտոններ զբաղեցնող կամ քաղաքացիական հատուկ ծառայության կադրերի ռեզերվում գրանցված անձինք՝ նրանց վրա տարածվում են Օրենքի 30-րդ հոդվածի չորրորդ մասով (երկարամյա ծառայության կենսաթոշա-

կի անցնելու դեպքում տրվող դրամական օգնությունը), 33–34-րդ հոդվածներով, 37-րդ հոդվածի երրորդ մասի «ա» կետով, 38–40-րդ հոդվածներով նախատեսված դրույթները:

Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտերին մասնակցած անձանց մարտական գործողությունների մասնակցի կարգավիճակ է տրվում Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

Օրենքի այն դրույթները, որոնք վերաբերում են զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքներին, տարածվում են նաև՝

ա) ծառայությունից սահմանված կարգով արձակված և, անկախ ժամանակաշրջանից, մահացած այն զինծառայողների ընտանիքների վրա, որոնց մահվան պատճառը ծառայության ընթացքում ստացած վնասվածքն է, խեղումը կամ առաջացած հիվանդությունը.

բ) ծառայողական պարտականությունները կատարելիս անհայտ կորած, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով անհայտ բացակայող կամ մահացած ճանաչված զինծառայողների ընտանիքների վրա:

Ինչ պարտավորություններ ունեն պետական մարմինները և գործատուները զինծառայողների սոցիալական ապահովության բնագավառում

Համապատասխան մարմինների՝ սոցիալական ապահովության խնդիրներ իրականացնող ստորաբաժանումները, ինչպես նաև բոլոր կարգի գործատուները, զինծառայողների (նրանց հավասարեցված անձանց) ու նրանց ընտանիքների անդամների պահանջով, պարտավոր են նրանց ապահովել Օրենքով սահմանվող սոցիալական ապահովության իրավունքներից և երաշխիքներից օգտվելու համար անհրաժեշտ փաստաթղթերով, որոնց ցանկը, տրամադրելու կարգը և պայմանները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Եթե զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության վերաբերյալ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված են այլ նորմեր, քան նախատեսված են Օրենքով, ապա կիրառվում են միջազգային պայմանագրերի նորմերը:

Զինծառայողների համար աշխատանքային և նյութական ապահովության ինչ երաշխիքներ կան

Զինծառայողները, բացառությամբ ժամկետային պարտադիր զինվորական ծառայության մեջ գտնվողների, չեն կարող ծառայությունից ար-

ձակվել մինչև երկարամյա ծառայության կենսաթոշակի իրավունք ձեռք բերելը, բացի այն դեպքերից, երբ ծառայությունը դադարեցվում է նրանց անձնական ցանկությամբ, առողջական վիճակի, հաստիքների կամ զինված ուժերի թվակազմի կրճատման, պայմանագրի ժամկետը ավարտվելու կամ պայմանագրի պայմանները չկատարելու կապակցությամբ, զինվորական կանոնադրությունների պահանջների պարբերական խախտումների պատճառով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ դեպքերում:

Հայաստանի Հանրապետության տարածքում գործունեություն իրականացնող բոլոր գործատուները պարտավոր են մինչև զորակոչվելն իրենց մոտ աշխատած ժամկետային զինծառայողներին, զինված ուժերից սահմանված կարգով արձակվելուց հետո՝ երկամսյա ժամկետում, ընդունել աշխատանքի՝ նախկինից ոչ ցածր պաշտոնով:

Աշխատողների թվակազմի կամ հաստիքների կրճատման ժամանակ այլ հավասար պայմանների դեպքում, զինված ուժերի շարքերից սահմանված կարգով արձակվելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, զինծառայողները, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, օգտվում են աշխատանքում թողնվելու նախապատվության իրավունքից:

Զինծառայողները պետական բյուջեի, իսկ պայմանագրային հիմունքներով ծառայություններ մատուցող ստորաբաժանումների զինծառայողները՝ մատուցվող ծառայությունների դիմաց ստացվող միջոցների հաշվին ստանում են դրամական բավարարում, ինչպես նաև պարենային և հանդերձանքի ապահովություն կամ դրա փոխարեն դրամական փոխհատուցում՝ իրենց ցանկությամբ:

Զինծառայողների դրամական բավարարում, պարենային և հանդերձանքի ապահովություն ստանալու կարգը և պայմանները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Պետական մարմիններ, հիմնարկներ, ձեռնարկություններ և ուսումնական հաստատություններ աշխատանքի գործուղված զինծառայողների համար պահպանվում են նյութական ապահովության, երաշխիքների և արտոնությունների բոլոր ձևերը:

Առողջության, տարիքի, ժամկետը լրանալու, հաստիքների կամ զինված ուժերի թվակազմի կրճատման պատճառով ծառայությունից սահմանված կարգով արձակվելու, ինչպես նաև երկարամյա ծառայության կենսաթոշակի անցնելու դեպքում զինծառայողներին տրվում է դրամական օգնություն՝

- մինչև 10 տարի ծառայած զինծառայողներին՝ ամսական դրամական բավարարման հնգապատիկի չափով.
- 10–15 տարի ծառայած զինծառայողներին՝ ամսական դրամական բավարարման տասնապատիկի չափով.

- 15–20 տարի ծառայած զինծառայողներին՝ ամսական դրամական բավարարման տասնհինգապատիկի չափով.
- 20-ից ավելի տարի ծառայած զինծառայողներին՝ ամսական դրամական բավարարման քսանապատիկի չափով.
- ժամկետային պարտադիր զինվորական ծառայության շարքային կազմին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հիմնական կենսաթոշակի 75 տոկոսի չափով, իսկ նշված կազմից երկկողմանի ծնողազուրկ (որբ) զինծառայողներին՝ հիմնական կենսաթոշակի տասնհինգապատիկի չափով:

Դրամական օգնություն չի տրվում դիտավորյալ հանցագործության համար դատապարտված կամ կարգապահական խախտում թույլ տալու համար ծառայությունից արձակված (ազատված) զինծառայողներին: Դատապարտված անձանց նկատմամբ հետագայում արդարացման դատավճիռ կայացվելու դեպքում դրամական օգնությունը ենթակա է վճարման, ընդ որում, դրամական օգնության չափը հաշվարկելիս հիմք է ընդունվում զինծառայողին աշխատանքից ազատելու պահը:

Առողջության, տարիքի, հաստիքների կամ զինված ուժերի թվակազմի կրճատման պատճառով ծառայությունից սահմանված կարգով արձակված (ազատված), երկարամյա ծառայության կենսաթոշակի անցած, դրամական օգնություն ստացած և հետագայում զինվորական ծառայությունում վերականգնված զինծառայողներին, սահմանված կարգով նորից արձակվելու (ազատվելու) դեպքում, դրամական օգնությունը վճարվում է արձակվելու (ազատվելու) կամ կենսաթոշակի անցնելու պահին դրամական բավարարման նկատմամբ սահմանված և նախկինում վճարված դրամական բավարարման բազմապատիկների տարբերության չափով:

Ծառայության ժամկետը լրանալու պատճառով ծառայությունից սահմանված կարգով արձակված (ազատված), դրամական օգնություն ստացած և կրկին ծառայության անցած զինծառայողներին՝ ժամկետը լրանալու կապակցությամբ դրամական օգնությունը վճարելիս կիրառվում են նույն ժամկետները և չափերը:

Հերթական անգամ վճարվող և նախկինում վճարված դրամական օգնությունների բազմապատիկների հանրագումարը չի կարող ծառայության ընդհանուր ստաժի տվյալ խմբի համար սահմանված դրամական բավարարման բազմապատիկից ավելի լինել:

Դրամական օգնության վճարման կարգը և պայմանները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Զինծառայողներին (բացառությամբ պարտադիր զինվորական ծառայության շարքային կազմի) տարվա ընթացքում մեկ անգամ վճարվում է նաև՝

ա) ծառայության նոր վայր տեղափոխվելու դեպքում դրամական օգնություն՝ պաշտոնային դրույքաչափի և զինվորական կոչման դրույքաչափի 50 տոկոսի չափով, եթե նախկին և նոր ծառայության վայրերի

հեռավորությունը 50–100 կմ է, պաշտոնային դրույքաչափի և զինվորական կոչման դրույքաչափի 100 տոկոսի չափով, եթե այդ հեռավորությունը 100 կմ և ավելի է, իսկ զինծառայողի ընտանիքի՝ նրան ուղեկցող յուրաքանչյուր անդամին դրամական օգնությունը վճարվում է վերը նշված դրույքաչափերի 25 տոկոսի չափով.

բ) միանվագ դրամական օգնություն՝ պաշտոնային դրույքաչափի և զինվորական կոչման դրույքաչափի կրկնակին չգերազանցող չափով՝ համապատասխան պետական լիազոր մարմնի ղեկավարի որոշմամբ:

Հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող զինծառայողներին, ծառայության ընթացքում զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքների անդամներին տարվա ընթացքում կարող է վճարվել միանվագ դրամական օգնություն՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով և չափով:

Ինչպես է կարգավորվում զինծառայողների աշխատելու և հանգստի ժամանակը

Զինծառայողների աշխատելու և հանգստի ժամանակի տևողությունն ու բաշխումը կարգավորվում են Հայաստանի Հանրապետության զինվորական կանոնագրքերով և համապատասխան այլ օրենսդրական ակտերով:

Զինավարժությունները, մարտական հրաձգություններն ու մարտական հերթապահություններն անցկացվում են շաբաթվա ցանկացած օր՝ առանց աշխատաժամանակի ընդհանուր տևողության սահմանափակման:

Սպաներին, ենթասպաներին, ինչպես նաև զինծառայող կանանց, ովքեր ծառայողական անհրաժեշտության բերումով զինվորական ծառայության պարտականությունները կատարում են տոնական և ոչ աշխատանքային օրերին, տրամադրվում են հանգստյան այլ օրեր:

Նշված օրերին զինվորական պարտականությունները կատարելու դեպքում ժամկետային զինվորական ծառայության զինծառայողների հանգստի ժամանակը սահմանում է համապատասխան հրամանատարը (պետը):

Զինծառայողների վերակարգերը և երթապահություններն անցկացվում են զինված ուժերի կանոնագրքերի, կանոնադրությունների և համապատասխան ենթաօրենսդրական ակտերի համաձայն:

Որքան է զինծառայողներին տրամադրվող արձակուրդի տևողությունը

Ժամկետային զինծառայողներին, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, տրվում է հերթական տարեկան արձակուրդ: Արձակուրդի տևողությունը կազմում է՝

- մինչև 15 տարի ծառայած զինծառայողների համար՝ 30 օր,
- 15–25 տարի ծառայած զինծառայողների համար՝ 40 օր,
- 25 և ավելի տարի ծառայած զինծառայողների համար՝ 45 օր,
- ժամկետային պարտադիր զինվորական ծառայության սպայական կազմի համար՝ յուրաքանչյուր լրիվ ծառայած ամսվա համար երկու և կես օր հաշվարկով:

Ծառայության հատուկ պայմաններ ունեցող կամ վնասակար աշխատանքներում զբաղված ժամկետային զինծառայողներին տրվում է լրացուցիչ տարեկան արձակուրդ՝ 10 օր տևողությամբ:

Նման արձակուրդի իրավունք տվող ծառայության տեսակների ցանկը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Ընտանեկան հանգամանքների բերումով, ուսման կապակցությամբ և այլ հարգելի պատճառներով, հրամանատարի (պետի) որոշմամբ, ժամկետային զինծառայողին կարող է տրվել լրացուցիչ տարեկան արձակուրդ՝ մինչև 10 օր տևողությամբ:

Ժամկետային պարտադիր զինվորական ծառայության շարքային կազմի զինծառայողներին, զինվորական ծառայության ընթացքում, որպես խրախուսանք կարող է տրվել արձակուրդ, զինվորներին՝ 15 օր, սերժանտներին և ավագներին՝ 20 օր տևողությամբ:

Հրամանատարի (պետի) որոշմամբ ժամկետային պարտադիր ծառայության շարքային կազմի զինծառայողներին կարող է տրվել մինչև 5 օր տևողությամբ լրացուցիչ արձակուրդ՝ ելնելով զինվորական ուսման կամ ծառայության բարձր ցուցանիշներից, իսկ ամուսնացածներին՝ ևս 5 օր՝ ամիսը մեկ անգամ:

Զինծառայողի կնոջը (ամուսնուն), իր ցանկությամբ, տարեկան արձակուրդ կարող է տրվել ամուսնու (կնոջ) արձակուրդի հետ միաժամանակ:

Զինծառայողը և նրա ընտանիքի անդամներն արձակուրդը Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող հանգստյան տներում անցկացնելու դեպքում օգտվում են ուղեգրի գնի փոխհատուցման իրավունքից: Ուղեգրի գնի փոխհատուցման կարգը և չափերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Զինծառայողներն ապահովվում են, արդյոք, անվճար բժշկական օգնությամբ

Եվ զինծառայողները, և նրանց ընտանիքների անդամներն ապահովվում են անվճար որակյալ բժշկական օգնությամբ՝ համապատասխան գերատեսչական բժշկական հիմնարկներում: Ծառայության անցկացման վայրում նման բժշկական հիմնարկների բացակայության, ինչպես նաև անհետաձգելի դեպքերում զինծառայողներին և նրանց ընտանիքների

անդամներին անհրաժեշտ բժշկական օգնություն ցույց է տրվում Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բոլոր կարգի բժշկական հիմնարկներում՝ համապատասխան մարմինների միջոցների հաշվին՝ բուժման ծախսերի հետագա փոխհատուցմամբ, որի կարգը և պայմանները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Բժշկական ցուցումների առկայության դեպքում զինծառայողներին տրվում է անվճար առողջարանային բուժման իրավունք: Առողջարանային բուժման ուղեգրի արժեքի, ինչպես նաև բուժման վայր մեկնելու և վերադառնալու հետ կապված ծախսերը փոխհատուցվում են համապատասխան մարմինների՝ այդ նպատակով հատկացրած միջոցների հաշվին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով և պայմաններով:

Կենսաթոշակի անցնելու կապակցությամբ օրենքով սահմանված կարգով պահեստ արձակված, հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող զինծառայողների, ծառայության ընթացքում զոհված (մահացած) զինծառայողների (նրանց հավասարեցված անձանց) ընտանիքների անդամների բժշկական սպասարկումը կատարվում է զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների համար «Զինծառայողների և նրանց ընտանիքի անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքով և Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

Զինծառայողներն ունեն, արդյոք, բնակարանային ապահովության իրավունք

Զինծառայողները, առողջության, տարիքի կամ երկարամյա ծառայության կենսաթոշակի անցնելու կապակցությամբ զինվորական ծառայությունից սահմանված կարգով արձակված այն նախկին զինծառայողները, որոնք ծառայության ընթացքում հաշվառված են եղել որպես բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցողներ, ինչպես նաև հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող զինծառայողները և ծառայության ընթացքում զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքները բնակարանային պայմանների բարելավման կարիք ունենալու դեպքում ապահովվում են բնակարանով կամ տնամերձ հողամասով կամ բնակարան ձեռք բերելու համար ստանում են անհատույց պետական ֆինանսական աջակցություն:

Մինչև բնակարանով ապահովվելը՝ զինծառայողները (բացի ժամկետային պարտադիր զինծառայողներից) և նրանց ընտանիքների անդամներն ապահովվում են ծառայողական բնակելի տարածություններով: Վերջինների բացակայության դեպքում բնակելի տարածությունների վարձակալության համար նրանց վճարվում է դրամական փոխհատու-

ցում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

Պետական սեփականություն հանդիսացող և համապատասխան բնագավառի պետական լիազոր մարմնի հաշվեկշռում գտնվող բնակարանները զինծառայողներին կամ նրանց ընտանիքների անդամներին սեփականության իրավունքով տրամադրվում են Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

Հաշմանդամության զինվորական կենսաթոշակ ստանալու իրավունք ունեցող զինծառայողները, ինչպես նաև ծառայողական պարտականությունների կատարման ժամանակ զոհված (մահացած) զինծառայողի ընտանիքը (ամուսինը, ծնողները, ինչպես նաև ընտանիքի՝ կերակրողին կորցնելու դեպքում զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող անդամները) օգտվում են ջրահեռացման, աղբահանության և ռադիոյի բաժանորդային վարձերը 50 տոկոս զեղչով վճարելու իրավունքից:

Ժամկետային զինծառայողներն ու մարտական գործողությունների մասնակիցներն զբաղեցրած բնակելի տարածության նկատմամբ իրենց իրավունքները՝ անկախ բնակարանի սեփականության ձևից և գերատեսչական պատկանելությունից, պահպանում են ծառայության ու մարտական գործողություններին մասնակցելու ընթացքում:

Զինծառայողներն ունեն, արդյոք, ամենամսյա դրամական օգնության իրավունք

Ամենամսյա դրամական օգնության իրավունք ունեն՝

1) զինվորական կենսաթոշակ ստանալու իրավունք ունեցող՝

- Հայրենական մեծ պատերազմում կամ այլ պետություններում մարտական գործողություններին մասնակցելու հետևանքով, ինչպես նաև ծառայողական պարտականությունները կատարելիս կամ ծառայության ընթացքում հաշմանդամ դարձած զինծառայողները,
- Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ, Հայաստանի Հանրապետության զինված ուժերում ծառայողական պարտականությունները կատարելիս կամ ծառայության ընթացքում հաշմանդամ դարձած զինծառայողները,
- Հայրենական մեծ պատերազմի մասնակիցները կամ այլ պետություններում մարտական գործողությունների մասնակիցները,
- Հայաստանի Հանրապետության պաշտպանության մասնակիցները,
- Հայաստանի Հանրապետության ազգային հերոսները,
- «Մարտական խա»չ շքանշանով պարգևատրված զինծառայողները,
- Հայրենական մեծ պատերազմում, այլ պետություններում ծառայողական պարտականությունները կատարելիս զոհված զինծառայողների ընտանիքների անդամները,

- Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ կամ ծառայողական պարտականությունները կատարելիս զոհված շարքային զինծառայողների ընտանիքների անդամները.

2) զոհված զինծառայողների ընտանիքների այն անդամները, ովքեր ստանում են աշխատանքային կամ սոցիալական կենսաթոշակ և ունեն նաև կերակրողին կորցնելու դեպքում զինվորական կենսաթոշակի իրավունք.

3) Հայրենական մեծ պատերազմում, այլ պետություններում, Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ կամ ծառայողական պարտականությունները կատարելիս զոհված զինծառայողների ընտանիքների անդամները՝ կենսաթոշակ ստանալու իրավունք ունենալու հանգամանքից անկախ:

Ամենամսյա դրամական օգնության չափերը՝ ըստ դրամական օգնություն ստանալու իրավունք ունեցող անձանց կատեգորիաների, դրամական օգնություն նշանակելու և վճարելու կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Զինծառայողներն ունեն, արդյոք, անվճար երթևեկելու իրավունք

Զինծառայողները Հայաստանի Հանրապետության տարածքում օգտվում են քաղաքային ուղևորատար տրանսպորտի բոլոր տեսակներով, անկախ սեփականության ձևից (բացի տաքսիից), անվճար երթևեկելու իրավունքից:

Զինծառայողներին ծառայողական պարտականությունների կատարման նպատակով այլ բնակավայրեր գործուղելու ծախսերը փոխհատուցվում են Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով և պայմաններով:

Զինծառայողներն արձակուրդի անցկացման վայր մեկնելիս և արձակուրդից վերադառնալիս և ընտանիքների՝ նրանց ուղեկցող անդամները քաղաքային, մերձքաղաքային և միջքաղաքային ուղևորատար տրանսպորտի բոլոր տեսակներից, անկախ սեփականության ձևից (բացի տաքսիից), օգտվում են Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

Կրթություն ստանալու ինչ երաշխիքներ կան զինծառայողների համար

Զինծառայողներն իրավունք ունեն սովորելու ռազմաուսումնական հաստատություններում, իսկ սպաներն ու ենթասպաները՝ նաև վերապատրաստման և որակավորման բարձրացման դասընթացներում:

Ռազմաուսումնական հաստատություններից հեռացված ունկնդիրների և կուրսանտների վերականգնումը կատարվում է Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության սահմանած կարգով՝ հեռացվելու օրվանից ոչ ուշ, քան երեք տարվա ընթացքում:

Պետությունը երաշխավորում է՝

- ժամկետային զինվորական ծառայության պարտականությունները կատարելիս հաշմանդամ դարձած քաղաքացիների, զոհված (մահացած) զինծառայողների երեխաների ընդունելությունը պետական ուսումնական հաստատություններ՝ մրցույթից դուրս, պետական բյուջեի միջոցների հաշվին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով.
- պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից զորացրված քաղաքացիների զորացրվելուց հետո՝ երեք տարվա ընթացքում, ընդունելությունը պետական ուսումնական հաստատություններ, մրցույթից դուրս պետական պատվերի շրջանակներում, ուսումնական հաստատություններին Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից ըստ մասնագիտությունների հատկացված տեղերում:

Ուրիշ ինչ երաշխիքներ կան զինծառայողների համար

Զինծառայողները ենթակա են պարտադիր պետական ապահովագրության զոհվելու (մահանալու) դեպքերից՝ տվյալ պահին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հիմնական կենսաթոշակի երեսունհինգապատիկի, իսկ Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ մարտական գործողությունների, մարտական հերթապահության և հատուկ առաջադրանք կատարելու ժամանակ զոհվելու (մահանալու) դեպքերից՝ հիմնական կենսաթոշակի յոթանասունապատիկի չափով:

Նշված ապահովագրությունը տարածվում է նաև հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող զինծառայողների վրա՝ աշխատունակության կորստի չափին համամասնորեն, որը սահմանվում է տոկոսային հարաբերությամբ՝ զոհվելու (մահանալու) դեպքից ապահովագրվելու համապատասխան ընդհանուր գումարների նկատմամբ:

Ապահովագրության և ապահովագրական գումարների վճարման կարգը և պայմանները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Զինծառայության ժամանակ զոհված (մահացած) զինծառայողների հուղարկավորության, գերեզմանների բարեկարգման, տապանաքարերի պատրաստման և տեղադրման հետ կապված ծախսերը կատարվում են

պետական բյուջեի հաշվին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

Հաշմանդամության կենսաթոշակ ստացող զինծառայողների (ինչպես նաև զինծառայությունից սահմանված կարգով արձակված և հետագայում մահացած զինծառայողների, որոնց մահվան պատճառը զինվորական ծառայության ընթացքում ստացած հիվանդությունն է, վնասվածքը կամ խեղումը) մահվան դեպքում գերեզմանների բարեկարգման, տապանաքարերի պատրաստման և տեղադրման հետ կապված ծախսերը նույնպես կատարվում են պետական բյուջեի հաշվին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

Բաժին 3
Զինվորական ծառայություն անցնելը

Ինչ իրավական ակտերով են կարգավորվում զինվորական ծառայություն անցնելու հետ կապված հարցերը

Հայաստանի Հանրապետությունում զինվորական ծառայությունը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, օրենքներով և այլ իրավական ակտերով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

Զինծառայողներին տրվում են «Զինապարտության մասին», «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված իրավունքներ, երաշխիքներ ու փոխհատուցումներ:

Զինվորական ծառայության անցնելու հետ կապված հարցերը կարգավորվում են նաև 2002 թվականի հուլիսի 3-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված «Զինվորական ծառայության անցնելու մասին» ՀՀ օրենքով, որը սահմանում է խաղաղ պայմաններում Հայաստանի Հանրապետության պաշտպանության, ազգային անվտանգության (շարքային կազմի զինծառայողների և «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով չկարգավորված մասերով), ներքին գործերի հանրապետական գործադիր մարմինների (այսուհետ՝ պետական լիազոր մարմիններ) համակարգերում զինվորական ծառայություն անցնելու կարգը, զինծառայողներին զինվորական պաշտոնի նշանակելու և պաշտոնից ազատելու, տեղափոխելու և գործուղելու, որակավորելու, զինվորական կոչում շնորհելու, դրանից զրկելու և վերականգնելու, արձակուրդ տրամադրելու, ծառայությունից արձակելու հետ կապված հարաբերությունները:

Ռազմական դրության ժամանակ զինվորական ծառայություն անցնելու առանձնահատկությունները սահմանվում են Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ իրավական ակտերով:

Ինչ է զինվորական ծառայությունը

Զինվորական ծառայությունը զինված ուժերում և այլ զորքերում պետական ծառայության հատուկ տեսակ է:

Զինծառայողներ են համարվում զինված ուժերում և այլ զորքերում պետական ծառայություն անցնող քաղաքացիներն ու ռազմաուսումնական հաստատությունների կուրսանտները:

Զինվորական ծառայությունը ներառում է՝

- զինվորական պաշտոնի նշանակում.
- զինվորական կոչման շնորհում.
- որակավորում.
- զինվորական ծառայությունից արձակում.
- զինծառայողի կարգավիճակով պայմանավորված այլ հանգամանքներ, որոնք սահմանվում են օրենքով:

Առաջին անգամ զինվորական ծառայություն անցնող քաղաքացիները Հայաստանի Հանրապետության պետական դրոշի և զորամասի մարտական դրոշի առջև տալիս են հավատարմության երդում: Երդման տեքստը հաստատվում է օրենքով:

Զինծառայողն իրավունք չունի՝

1) կատարել այլ վճարովի աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից.
2) լինել Ազգային ժողովի պատգամավոր, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում զբաղեցնել ընտրովի կամ այլ պաշտոններ.
3) անդամակցել որևէ քաղաքական կուսակցության, կրոնական կամ արհեստակցական միության.
4) ոչ ծառայողական նպատակների համար զինված ուժերում և այլ զորքերում օգտագործել նյութական արժեքներ, տեխնիկական, ֆինանսական և տեղեկատվական միջոցներ.
5) կազմակերպել գործադուլներ, հանրահավաքներ, երթեր, ցույցեր կամ մասնակցել դրանց.
6) պաշտոնական դիրքն օգտագործել ի շահ քաղաքական կուսակցությունների, կրոնական, հասարակական միավորումների և դրանց գործունեության օգտին իրականացվող քարոզչության.
7) անձամբ զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ.
8) հոնորար ստանալ ծառայողական պարտականությունների կատարումից բխող հրապարակումների կամ ելույթների համար.
9) ծառայողական պարտականությունների համար այլ անձանցից ստանալ նվերներ, գումար կամ ծառայություններ, բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերի:

Զինծառայողները չեն կարող կազմակերպել քաղաքական կուսակցություններ և կրոնական միավորումներ:

Ինչպես է կազմակերպվում և իրականացվում զինվորական ծառայությունը

Զինվորական ծառայությունը կազմակերպվում է՝

- զորակոչելու միջոցով՝ զորակոչային տարիքի քաղաքացիներին.

- պայմանագրով՝ պահեստազորի շարքայիններին, սերժանտներին և ավագներին.
- պայմանագրով՝ ենթասպաներին.
- զորակոչի միջոցով կամ պայմանագրով՝ սպաներին.
- զորակոչի համար սահմանված կարգով՝ ռազմաուսումնական հաստատություններ ընդունված նախազորակոչային տարիքի քաղաքացիներին:

Հայաստանի Հանրապետությունում զինվորական ծառայությունն իրականացվում է օրինականության, զինծառայողների իրավունքներն ու ազատությունները, պատիվն ու արժանապատվությունը հարգելու, մարդասիրության, միանձնյա ու կենտրոնացված ղեկավարման, կոլեգիալ կառավարման սկզբունքներով:

Զինվորական ծառայության ինչ տեսակներ և ժամկետներ կան

Զինվորական ծառայությունը բաղկացած է ժամկետային և պահեստազորային զինվորական ծառայությունից:

Ժամկետային զինվորական ծառայությունը բաղկացած է պարտադիր և պայմանագրային զինվորական ծառայությունից:

Պարտադիր զինվորական ծառայություն է համարվում զինված ուժեր և այլ զորքեր զորակոչված շարքային ու սպայական կազմերի, ռազմաուսումնական հաստատություններում սովորող կուրսանտների զինվորական ծառայությունը:

Պարտադիր զինվորական ծառայությունը կարող է փոխարինվել այլընտրանքային ծառայությամբ, որն անցնելու կարգը և պայմանները սահմանվում են օրենքով:

Պայմանագրային զինվորական ծառայություն է համարվում զինված ուժերում և այլ զորքերում կամավոր հիմունքներով զինվորական ծառայություն անցնող շարքային, ենթասպայական, սպայական կազմի (այդ թվում՝ ռազմաուսումնական հաստատություններ ավարտած) և կանանց զինվորական ծառայությունը:

Պայմանագրային զինվորական ծառայության ընդունվող քաղաքացիները պետական լիազոր մարմնի հետ կնքում են գրավոր պայմանագիր:

Ռազմաուսումնական հաստատություններ ավարտած զինծառայողների հետուսումնական պայմանագրային զինծառայությունը պարտադիր է:

Հետուսումնական պայմանագրային զինծառայությունից հրաժարվելու դեպքում ռազմաուսումնական հաստատություններ ավարտած զինծառայողները պետական լիազոր մարմնին փոխհատուցում են ուսման հետ կապված ծախսերը՝ օրենքով նախատեսված դեպքերում և կառավարության սահմանած կարգով:

Պարտադիր զինվորական ծառայության ժամկետը սահմանվում է՝

1) շարքային կազմի համար՝ 24 ամիս.
2) առաջին խմբի պահեստազորի սպաների համար՝ 2–3 տարի:

Անհրաժեշտության դեպքում կառավարության որոշմամբ պարտադիր զինվորական ծառայությունը կարող է երկարաձգվել մինչև երկու ամիս ժամկետով:

Պայմանագրային զինվորական ծառայության ժամկետը սահմանվում է՝

1) սպաների համար՝ 3–5 տարի.
2) ենթասպաների համար՝ 3–5 տարի.
3) ավագների, սերժանտների և շարքայինների համար՝ 2-3 տարի, իսկ առանձնահատուկ դեպքերում՝ 3–6 ամիս՝ պետական լիազոր մարմնի ղեկավարի որոշմամբ.
4) ռազմաուսումնական հաստատություններն ավարտած սպաների համար՝ 20 տարի (ներառյալ՝ ուսման ժամկետը՝ որպես պարտադիր զինվորական ծառայություն):

Առանձին զինծառայողների և նրանց խմբերի (կազմերի) պարտադիր և պայմանագրային զինվորական ծառայությունը պետական լիազոր մարմնի ղեկավարը կարող է երկարաձգել մինչև մեկ ամիս ժամկետով:

Որն է զինվորական ծառայության սկիզբը և ավարտը

Զինվորական ծառայության սկիզբ համարվում է՝

- զինվորական ծառայության զորակոչված քաղաքացիների համար՝ ծառայության վայր մեկնելու համար զինվորական կոմիսարիատ ներկայանալու օրը.
- պայմանագրային զինվորական ծառայության ընդունվող քաղաքացիների համար՝ պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը.
- ռազմաուսումնական հաստատություններ ընդունված քաղաքացիների համար՝ տվյալ ռազմաուսումնական հաստատություններում սահմանված կարգով որպես կուրսանտ գրանցվելու օրը:

Զինվորական ծառայությունն ավարտված է համարվում՝

- զորակոչի միջոցով զինծառայողների համար՝ ծառայության ժամկետը լրանալու կապակցությամբ զորամասի անձնակազմի ցուցակներից հանելու օրը.
- պայմանագրային զինծառայողների համար՝ պայմանագրի ժամկետը լրանալու կամ պայմանագրի գործողությունը դադարեցնելու օրը:

Զինծառայողը զորամասի կամ զինվորական կառավարման մարմնի անձնակազմի ցուցակներից հանվում է զինվորական ծառայության ավարտի օրը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

Զինծառայողի ծառայությունն ավարտվում է նրան զորամասի (զինվորական կառավարման մարմնի) անձնակազմի ցուցակներից հանելու

օրը՝ արձակվելու, զոհվելու (մահանալու), դատարանի կողմից անհայտ բացակայող կամ մահացած ճանաչվելու պատճառով:

Զորամասի անձնակազմի ցուցակներից հանվող զինծառայողն արձակվելու օրը լրիվ չափով ապահովվում է դրամական, նյութական բավարարությամբ, պարենի փոխհատուցմամբ:

Ինչպես է հաշվարկվում զինվորական ծառայության ժամկետը

Զինվորական ծառայության ընդհանուր ժամկետում ներառվում է զինծառայողի՝ ժամկետային զինծառայության ամբողջ ժամանակաշրջանը՝ անկախ ընդհատումներից:

Զինվորական ծառայության ընդհանուր ժամկետը որոշվում է օրացուցային հաշվարկով:

Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ իրավական ակտերով նախատեսված դեպքերում սահմանվում է զինվորական ծառայության ժամկետի արտոնյալ հաշվարկի կարգ:

Զինծառայողի զինվորական ծառայության ժամկետում չեն հաշվարկվում՝

- կարգապահական գումարտակում կամ ազատազրկման ձևով պատիժը կրելու ժամանակահատվածը (պարտադիր զինծառայողների համար).
- կալանքի տակ կամ կարգապահական տույժի կարգով մեկուսարանում գտնվելու ժամանակահատվածը (պարտադիր զինծառայողների համար).
- զորամասը և ծառայության վայրն ինքնագլուխ թողնելու կամ օրենքով սահմանված կարգով ապացուցված ինքնախեղման կամ դիտավորությամբ իր առողջական վիճակն այլ եղանակով վատթարացրած զինծառայողի բուժման մեջ գտնվելու ժամանակահատվածը՝ անկախ պատճառներից:

Սույն մասով նախատեսված դեպքերում պարտադիր զինծառայության սահմանված ժամկետը լրացվում է բաց թողնված օրացուցային օրերի քանակով՝ պետական լիազոր մարմնի ղեկավարի հրամանով՝ հաշվի առնելով նաև դատարանի կամ Հայաստանի Հանրապետության զինվորական դատախազության կամ պետական լիազոր մարմնի քննչական ծառայության առաջարկությունը:

Ռազմաուսումնական հաստատություններից անկարգապահության կամ անբավարար առաջադիմության կամ ուսումնառությունից հրաժարվելու համար հեռացված պարտադիր զինծառայողների (կուրսանտների) ուսման ժամանակահատվածը:

Բաժին 4
Զինծառայողների հետ պայմանագիր կնքելը

Ինչ կարգով է կնքվում պայմանագիրը զինծառայողի հետ

Պայմանագիր կնքվում է զինծառայողի և պետական լիազոր մարմնի միջև՝ «Զինապարտության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն և «Զինվորական ծառայության անցնելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

Պայմանագիր չի կարող կնքվել պահեստազորից պայմանագրային զինվորական ծառայության անցնելու ցանկություն հայտնած այն քաղաքացիների հետ, որոնց նկատմամբ կատարվում է հետաքննություն, նախաքննություն, դատական քննություն, ովքեր դատապարտվել են հանցագործություն կատարելու համար, և դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ:

Պայմանագիր չի կարող կնքվել նաեւ այն քաղաքացիների հետ, ովքեր օրենքի խախտումով չեն անցել պարտադիր զինվորական ծառայություն:

Պայմանագրում ամրագրվում են զինվորական ծառայության ընդունվելու կամավորությունը, զինվորական ծառայություն անցնելու ժամկետը, քաղաքացու (զինծառայողի) ընդհանուր և հատուկ պարտականությունները, զինծառայողի կարգավիճակով պայմանավորված՝ նրա իրավունքների և արտոնությունների երաշխիքները, ինչպես նաև օրենքով սահմանված այլ պայմաններ:

Պայմանագրում նշվում են նաև քաղաքացու (զինծառայողի) անունը, ազգանունը, հայրանունը, զինվորական կոչումը, ծննդյան ամիսը, ամսաթիվը, տարեթիվը, գործադիր իշխանության մարմնի անվանումը և նրա անունից պայմանագիր ստորագրող անձի պաշտոնը, զինվորական կոչումը, ազգանունը, անվան և հայրանվան սկզբնատառերը, պայմանագիրն ստորագրելու ամիսը, ամսաթիվը, տարեթիվը:

Համապատասխան պետական լիազոր մարմնի ղեկավարներն իրավասու են պայմանագրում նշել զինծառայողների որոշակի իրավունքները և պարտականությունները, որոնք կապված են ծառայության առանձնահատկությունների հետ եւ նախատեսված են գործող օրենսդրությամբ:

Պայմանագիրը կազմվում է իրավաբանական հավասար ուժ ունեցող երկու օրինակից, որոնք կողմերն ստորագրում են: Պայմանագրի օրինակները կնքվում են պետական լիազոր մարմնի՝ Հայաստանի Հանրապետության պետական զինանշանի պատկերն ունեցող կնիքով:

Երբ է պայմանագիրը մտնում ուժի մեջ

Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրելու դեպքում՝ իրավասու հրամանատարի (պետի) հրամանով հայտարարվելու

օրվանից: Պայմանագրի ժամկետը հաշվարկվում է ուժի մեջ մտնելու օրվանից: Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո առաջին օրինակը կարվում է զինծառայողի անձնական գործում, երկրորդը հանձնվում է նրան:

Երբ է դադարում պայմանագրի գործողությունը

Պայմանագրի գործողությունը դադարում է՝

- զինծառայողին զորամասի (զինվորական կառավարման մարմնի) անձնակազմի ցուցակներից հանելու օրը՝ նրա զինվորական ծառայությունից արձակվելու, զոհվելու (մահանալու), անհայտ բացակայող կամ մահացած ճանաչվելու դեպքում.
- զինծառայողի հետ նոր պայմանագիր կնքելու օրը.
- պետական լիազոր այլ մարմնում զինծառայողին այլ պաշտոնի նշանակելու օրը.
- Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարելու օրը.
- դատական կարգով անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչվելու օրը.
- դատական կարգով զինվորական պաշտոն զբաղեցնելու իրավունքից զրկվելու օրը:

Պայմանագրի գործողությունը դադարեցնելու դեպքում առաջին օրինակում կատարվում է դադարման հիմքի մասին համապատասխան գրառում՝ ամսաթվի և տարեթվի նշումով:

Զինծառայողի ցանկությամբ այդպիսի գրառում կատարվում է նաև պայմանագրի երկրորդ օրինակում:

Ինչ կարգով է կնքվում առաջին պայմանագիրը

Առաջին պայմանագիրը կնքվում է՝

1) նախկինում պայմանագրային զինվորական ծառայություն չանցած քաղաքացիների հետ, այդ թվում՝

- 20-40 տարեկան արական սեռի պահեստազորայինների,
- 18-40 տարեկան կանանց՝ անկախ պահեստազորում գտնվելու հանգամանքից.

2) պարտադիր զինվորական ծառայության զորակոչված բարձրագույն կրթություն ունեցող զինծառայողների հետ՝ համապատասխան ուսումնական հավաքին մասնակցելուց հետո:

Առանձնահատուկ դեպքերում առաջին պայմանագիրը կարող է կնքվել նաև մինչև 45 տարեկան պահեստազորայինների հետ՝ պետական լիազոր մարմնի ղեկավարի սահմանած կարգով:

Ռազմաուսումնական հաստատություններում սովորող զինծառայողի հետ առաջին պայմանագիրը կնքվում է առաջին կուրսն ավարտելուց հետո, բայց ոչ ուշ, քան մինչև երկրորդ կուրսն ավարտելը: Նշված զինծառայողը պայմանագիր կնքելուց հրաժարվելու դեպքում ենթակա է ռազմաուսումնական հաստատությունից հեռացման:

Պարտադիր զինվորական ծառայություն անցած և անցնող զինծառայողը պայմանագիր կնքում է ռազմաուսումնական հաստատությունում կուրսանտ գրանցվելու հետ միաժամանակ:

Կին զինծառայողը պայմանագրային զինվորական ծառայության ընդունվում է, եթե կա թափուր պաշտոն, որը կարելի է համալրել իգական սեռի զինծառայողով: Կին զինծառայողի՝ տվյալ պաշտոնն զբաղեցնելու հարցը որոշում է համապատասխան պետական լիազոր մարմնի ղեկավարը:

Որքան է առաջին պայմանագրի ժամկետը

Առաջին պայմանագրի ժամկետը սահմանվում է՝

- շարքայինի, սերժանտի, ավագի զինվորական կոչումին համապատասխանող հաստիքային զինվորական պաշտոնի ընդունվողի համար՝ 2–3 տարի, իսկ առանձնահատուկ դեպքերում՝ 3–6 ամիս՝ պետական լիազոր մարմնի ղեկավարի որոշմամբ.
- ենթասպայի և սպայի զինվորական կոչումին համապատասխանող հաստիքային զինվորական պաշտոնի ընդունվողի համար՝ 3–5 տարի.
- ռազմաուսումնական հաստատություններ ընդունվածների և այնտեղ սովորողների համար՝ 20 տարի (ներառյալ՝ ուսման ժամկետը՝ որպես պարտադիր զինվորական ծառայություն).
- բարձրագույն ուսումնական հաստատությունների մագիստրատուրայում և ասպիրանտուրայում (ադյունկտուրայում), դոկտորանտուրայում պետական լիազոր մարմնի պատվերով (պետական պատվերի շրջանակներում) սովորողների համար՝ ուսանելու ժամանակաշրջանը և հետուսումնական 5 տարվա զինվորական ծառայությունը.
- պարտադիր զինվորական ծառայություն անցնող զինծառայողի համար՝ 5 տարի (ներառյալ՝ պարտադիր զինծառայության չծառայած ժամկետը):

Որ մարմիններն են ստորագրում առաջին պայմանագիրը

Առաջին պայմանագիրը պետական լիազոր մարմնի անունից ստորագրում է՝

- համապատասխան պետական լիազոր մարմնի ղեկավարի՝ կադրերը վերահսկող տեղակալը՝ ավագ սպայական կազմի զինվորական կոչմանը համապատասխանող հաստիքային զինվորական ղեկավար

պաշտոնի (վարչության, առանձին բաժնի, ծառայության պետ, բրիգադի, զորամասի, առանձին գումարտակի հրամանատար) նշանակելու դեպքում.

- համապատասխան պետական լիազոր մարմնի կադրային մարմնի ղեկավարը՝ սպայական կազմի զինվորական կոչմանը համապատասխանող այլ զինվորական պաշտոնի նշանակելու դեպքում.
- համապատասխան պետական լիազոր մարմնի առանձին ստորաբաժանման (սկսած գնդից և ավելի բարձր) հրամանատարը՝ «ենթասպա» զինվորական կոչմանը համապատասխանող հաստիքային պաշտոնի նշանակելու դեպքում.
- զորամասի և առանձին գումարտակի հրամանատարը՝ շարքայինի, սերժանտի, ավագի զինվորական կոչմանը համապատասխանող հաստիքային պաշտոնի նշանակելու դեպքում.
- ռազմաուսումնական հաստատության պետը՝ ռազմաուսումնական հաստատություն ընդունվածների և այնտեղ սովորողների հետ պայմանագիր կնքելու դեպքում.
- պետական լիազոր մարմնի ռազմական կրթության մարմնի ղեկավարը՝ օտարերկրյա ռազմաուսումնական հաստատություններ ընդունվածների և Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ուսումնական հաստատությունների մագիստրատուրայում և ասպիրանտուրայում (ադյունկտուրայում), դոկտորանտուրայում պետական լիազոր մարմնի պատվերով սովորողների հետ պայմանագիր կնքելու դեպքում:

Համապատասխան պետական լիազոր մարմնի ղեկավարն իրավասու է առանձին դեպքերում սահմանել պայմանագիր ստորագրելու այլ կարգ:

Բարձրագույն սպայական կազմի զինվորական կոչումին համապատասխանող հաստիքային զինվորական պաշտոնի նշանակվող սպաների հետ պայմանագիր կարող է կնքվել Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրի համաձայն:

Առաջին պայմանագիրն ստորագրվում է քաղաքացու՝ զինծառայության ընդունվելու, զինծառայողի՝ ռազմաուսումնական հաստատության կուրսանտ գրանցվելու, ռազմաուսումնական հաստատություն ընդունված նախազորակոչիկի՝ 18 տարին լրանալու (առաջին կուրսն ավարտելուց ոչ շուտ՝ մինչև երկրորդ կուրսի ավարտը) օրը:

Առաջին պայմանագիրը կնքելուց կամ պայմանագրային զինվորական ծառայությունից հրաժարվելու ինչ հիմքեր կան

Առաջին պայմանագիրը կնքելուց և պայմանագրային զինվորական ծառայությունից հրաժարվելու հիմք են՝

- Հայաստանի Հանրապետության զինված ուժերում (այլ զորքերում) թեկնածուի՝ քաղաքացիական կամ զինվորական մասնագիտությանը համապատասխանող զինվորական պաշտոն չլինելը.
- զորամասի, զինվորական կառավարման մարմնի որակավորման հանձնաժողովի որոշմամբ այլ թեկնածուի հետ պայմանագիր կնքելը՝ մրցութային ընտրության արդյունքների հիման վրա.
- թեկնածուի՝ անհամապատասխանությունը պայմանագրային զինվորական ծառայության պահանջներին:

Մրցութային ընտրությունը կազմակերպում և անցկացնում է համապատասխան կադրային մարմինը՝ որակավորման հանձնաժողովի անդամների մեկ երրորդի մասնակցությամբ:

Մերժումը ձևակերպվում է գրավոր, որն ստորագրում և կնքում է պետական լիազոր մարմնի համապատասխան իրավասու պետը: Մերժման որոշումը քաղաքացու խնդրանքով հանձնվում է նրան:

Որ դեպքերում է զինծառայողի հետ կնքվում նոր պայմանագիր

Զինծառայողի հետ նոր պայմանագիր կնքվում է հետևյալ դեպքերում.

- նախորդ պայմանագրի ժամկետը լրանալիս (իր համաձայնությամբ).
- ռազմաուսումնական հաստատություն և քաղաքացիական ուսումնական հաստատության մագիստրատուրա, ասպիրանտուրա (ադյունկտուրա), դոկտորանտուրա, կլինիկական օրդինատուրա ընդունվելիս.
- պետական լիազոր մի մարմնից մյուսը փոխադրվելիս.
- սահմանային տարիքի հասնելու և ծառայությունը շարունակելու ցանկություն հայտնելիս:

Ծառայությունը շարունակելու ցանկություն հայտնած զինծառայողը նոր պայմանագիր կնքելու իրավասություն ունեցող պետի անունով ներկայացնում է զեկուցագիր մինչև նախորդ պայմանագրի ժամկետի ավարտը: Զինծառայողի զեկուցագիրը գրանցվում է սահմանված կարգով: Զեկուցագրերը ժամանակին ներկայացնելու գործընթացը վերահսկում է համապատասխան կադրային մարմինը:

Զինվորական ծառայության սահմանային տարիքի չհասած զինծառայողների հետ կնքվում է նոր պայմանագիր, բացառությամբ այն դեպքերի, երբ նրանք ենթակա են վաղաժամկետ զորացրման:

Օբյեկտիվ պատճառներով (հղիություն, ծննդաբերություն և երեխայի խնամքի համար արձակուրդում գտնվել, գերի կամ պատանդ լինել և այլն) նոր պայմանագիր կնքելու հնարավորություն չունեցող և ծառայությունը շարունակելու ցանկություն հայտնած (գերիներն ու պատանդները՝

անկախ դրանից) պայմանագրային զինծառայողները շարունակում են զինվորական ծառայությունը՝ պայմանագրային հիմունքներով: Նշված հանգամանքների վերացումից հետո՝ ծառայության վայր ներկայանալուց մեկ ամսվա ընթացքում, նրանց հետ կնքվում է նոր պայմանագիր (կամ նրանք զորացրվում են):

Նոր պայմանագիր չկնքող պայմանագրային զինծառայողը ներկայացվում է զորացրման (արձակման):

Ռազմաուսումնական հաստատություններ, ասպիրանտուրա (ադյունկտուրա) կամ դոկտորանտուրա ընդունված պայմանագրային զինծառայողի հետ կնքվում է նոր պայմանագիր, բացառությամբ՝ 20 տարի ընդհանուր տևողությամբ պայմանագիր կնքած անձանց, տվյալ ուսումնական հաստատությունում գրանցվելու դեպքում:

Իգական և արական սեռերի սպայական և ենթասպայական կազմերի այն զինծառայողները, բացառությամբ պարտադիր զինծառայության զորակոչի միջոցով ուսման գործուղվածների, ովքեր հեռացվում են ռազմաուսումնական հաստատություններից, ասպիրանտուրայից (ադյունկտուրայից) կամ դոկտորանտուրայից, ներկայացնում են նոր պայմանագիր կնքելու զեկուցագիր՝ ծառայության վայր ներկայանալու օրը:

Պայմանագիր կնքելու, պայմանագրի գործողության ժամկետի, ինչպես նաև դա չկնքելու մասին որոշում է ընդունում պետական լիազոր մարմնի ղեկավարը:

Բաժին 5
Զինվորական պաշտոնի նշանակելը, ազատելը, տեղափոխելը և կադրերի տրամադրության տակ թողնելը

Ինչ կարգով են նշանակում զինվորական պաշտոնի

Սպայական, ենթասպայական և շարքային կազմերի զինծառայողների զբաղեցրած պաշտոնները և դրանց համապատասխանող զինվորական կոչումները նախատեսվում և սահմանվում են հատուկ հաստիքացուցակներով:

Զինվորական պաշտոնները բաժանվում են հրամանատարականի և ոչ հրամանատարականի:

Հրամանատարական կազմի պաշտոնները դասակարգվում են հետևյալ խմբերի.

1) բարձրագույն հրամանատարական.
2) ավագ հրամանատարական.
3) միջին հրամանատարական.
4) կրտսեր հրամանատարական:

Ոչ հրամանատարական կազմի պաշտոնները դասակարգվում են հետևյալ խմբերի.

1) բարձրագույն սպայական.
2) ավագ սպայական.
3) կրտսեր սպայական.
4) ենթասպայական.
5) շարքային:

Բարձրագույն հրամանատարական և բարձրագույն սպայական պաշտոնների ցանկը հաստատում է Հայաստանի Հանրապետության Նախագահը, իսկ հրամանատարական և ոչ հրամանատարական կազմերի մյուս պաշտոններինը՝ պետական լիազոր մարմնի ղեկավարը:

Բարձրագույն կրթություն չունեցող ենթասպաները միջին հրամանատարական և սպայական պաշտոնի կարող են նշանակվել միայն բացառիկ դեպքերում:

Բարձրագույն հրամանատարական կազմի պաշտոնի կարող է նշանակվել այն զինծառայողը, որը մինչև նշանակումն առնվազն 3 տարի ժամկետով զբաղեցրել է զինված ուժերի (այլ զորքերի) ավագ հրամանատարական կամ բարձրագույն սպայական պաշտոն և ունի գնդապետից ոչ ցածր զինվորական կոչում կամ մինչև նշանակումն այլ պետական մարմիններում առնվազն 3 տարի զբաղեցրել է զինված ուժերի ավագ հրամանատարական կամ բարձրագույն սպայական պաշտոնին համապատասխան պաշտոն և ունի զինված ուժերի գնդապետից ոչ ցածր հա-

մապատասխան կոչում: Ավագ հրամանատարական կազմի պաշտոնի կարող է նշանակվել այն զինծառայողը, որը մինչև նշանակումն առնվազն 3 տարի զբաղեցրել է միջին հրամանատարական կամ ավագ սպայական (ընդհանուրի մեջ 1 տարին միջին հրամանատարական) կազմի պաշտոն կամ մինչև նշանակումն այլ պետական մարմիններում առնվազն 3 տարի զբաղեցրել է զինված ուժերի միջին հրամանատարական կամ ավագ սպայական կազմի պաշտոնին համապատասխան պաշտոն և ունի բարձրագույն զինվորական (մասնագիտական) կրթություն:

Միջին հրամանատարական կազմի պաշտոնի կարող են նշանակվել բարձրագույն կրթությամբ կրտսեր սպայական կոչում ունեցող զինծառայողները:

Կրտսեր հրամանատարական կազմի պաշտոնների նշանակվում են Հայաստանի Հանրապետության զինված ուժեր (այլ զորքեր) զորակոչված բարձրագույն (իսկ ենթասպայական կամ շարքային կոչում ունեցողները՝ միջնակարգ) կրթություն ունեցող և ուսումնական հավաքներն ավարտած զինծառայողները:

Ավագ և միջին հրամանատարական կազմերի զինվորական պաշտոններում առաջխաղացումը կատարվում է որակավորման կարգով:

Այլ պետական մարմինների և զինված ուժերի ավագ և միջին հրամանատարական կամ բարձրագույն և ավագ սպայական պաշտոնների համապատասխանությունը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Շարքային, ենթասպայական և սպայական (կրտսեր և ավագ) կազմերի զինծառայողների հաստիքային պաշտոնի նշանակումները կադրային մարմինը կատարում է պետական լիազոր մարմնի ղեկավարի հրամանով սահմանված կարգով:

Զինվորական պաշտոնի նշանակվում է այն զինծառայողը, որը համապատասխանում է տվյալ պաշտոնին ներկայացվող պահանջներին՝ հաշվի առնելով զինծառայողի համապատասխանությունը, մասնագիտական ու ծառայողական ունակությունները, հոգեբանական որակները, առողջական վիճակը և օրենքով նախատեսված այլ պայմաններ:

Որպես կանոն, զինծառայողը նշանակվում է իր հիմնական կամ հարակից զինվորական մասնագիտությանը համապատասխանող պաշտոնի՝ հաշվի առնելով ծառայողական գործունեության փորձը: Զինծառայողի՝ նոր զինվորական մասնագիտական պաշտոնի նշանակմանը պետք է նախորդի համապատասխան վերապատրաստումը:

Ավագ և միջին հրամանատարական կազմերի պաշտոններ զբաղեցնող զինծառայողները ենթակա են պարտադիր վերապատրաստման առնվազն 5 տարին մեկ անգամ՝ Հայաստանի Հանրապետության կամ օտարերկրյա ռազմաուսումնական հաստատություններում:

Ռազմաուսումնական հաստատություններ, ասպիրանտուրա, դոկտորանտուրա ընդունված կամ 6 ամիսը գերազանցող ժամկետով Հայաստանի Հանրապետության կամ այլ պետության ռազմաուսումնական հաստատությունում վերապատրաստում անցնող զինծառայողներն ազատվում են նախկինում զբաղեցրած պաշտոնից և համապատասխանաբար նշանակվում կուրսանտի, ունկնդրի կամ նշված ուսումնական հաստատության սովորողի համար նախատեսված այլ զինվորական պաշտոնի:

Ռազմաուսումնական հաստատություններ, ասպիրանտուրա, դոկտորանտուրա չընդունված զինծառայողը վերադառնում է նախկին ծառայության վայր և նշանակվում մինչ ուսման գործուղվելն զբաղեցրած պաշտոնում:

Ռազմաուսումնական հաստատություններ, ասպիրանտուրա, դոկտորանտուրա ավարտած զինծառայողը նշանակվում է իր կրթությանը համապատասխանող հաստիքով նախատեսված զինվորական պաշտոնի, իսկ դրա անհնարինության դեպքում՝ նախկինում զբաղեցրածից ոչ ցածր պաշտոնի:

Ինչ պայմաններ պետք է պահպանվեն զինվորական պաշտոնի նշանակելիս

Զինվորական պաշտոնի նշանակելիս պետք է պահպանվեն հետևյալ պայմանները.

- շարքայիններով, սերժանտներով, ավագներով, ենթասպաներով և սպաներով համալրման ենթակա զինվորական պաշտոնների նշանակվում են համապատասխան կազմերի զինծառայողներ: Ենթասպայական և սպայական պաշտոնների համալրումն ստորադաս կազմերի զինծառայողներով թույլատրվում է պետական լիազոր մարմնի ղեկավարի հրամանով սահմանված կարգով.
- կադրային մարմնի տրամադրության տակ գտնվող զինծառայողները պաշտոնի նշանակվում են պետական լիազոր մարմնի ղեկավարի սահմանած կարգով.
- ռազմաբժշկական հանձնաժողովի կողմից զինվորական ծառայության համար պիտանի, սակայն ընտրած զինվորական մասնագիտությանը ոչ պիտանի ճանաչված զինծառայողը, բացառությամբ պարտադիր զինվորական ծառայության զորակոչվածի, իր համաձայնությամբ նշանակվում է այլ պաշտոնի (որով սահմանված պարտականությունները կարող է կատարել) կամ զորացրվում է.
- եթե զինծառայողին չի տրվում պետական գաղտնիք պարունակող տեղեկություններին առնչվելու թույլտվություն, նա նշանակվում է այդպիսի թույլտվություն չպահանջող պաշտոնի կամ զորացրվում է.

- միմյանց հետ մերձավոր ազգակցական կապ ունեցող զինծառայողներին (պապ, տատ, հայր, մայր, ամուսին, կին, հարազատ եղբայր, քույր) չի թույլատրվում ծառայել միևնույն զորամասում (զինվորական կառավարման մարմնում), եթե նրանցից մեկն անմիջականորեն ենթակա է մյուսին կամ ծառայողական պարտականություններ կատարելիս վերահսկվում է նրա կողմից.
- զինծառայողները, բացառությամբ բարձրագույն սպայական կազմի, պաշտոնի նշանակվում են անձնակազմին վերաբերող հրամաններով, որն արձակում է տվյալ զինվորական պաշտոնին նշանակելու իրավասություն ունեցող պետը.
- հաստիքով նախատեսված սպայական պաշտոնները, որպես կանոն, համալրվում են բարձրագույն ռազմական կամ քաղաքացիական կրթություն ունեցող զինծառայողներով:

Զինծառայողը կարող է նշանակվել առաջին պաշտոնի, բարձր պաշտոնի, հավասար պաշտոնի և ցածր պաշտոնի:

Զինվորական պաշտոնը համարվում է բարձր, եթե հաստիքով նախատեսված զինվորական կոչումը բարձր է նախկին պաշտոնի զինվորական կոչումից, իսկ դրանց հավասարության դեպքում՝ ավելի բարձր պաշտոնային դրույքով զինվորական պաշտոնը:

Զինվորական պաշտոնը համարվում է հավասար, եթե նախկին և նոր հաստիքային պաշտոններին համապատասխանում են նույն զինվորական կոչումն ու պաշտոնային դրույքը:

Զինվորական պաշտոնը համարվում է ցածր, եթե այդ հաստիքով նախատեսված զինվորական կոչումն ավելի ցածր է զինծառայողի նախկին պաշտոնի զինվորական կոչումից, իսկ դրանց հավասարության դեպքում՝ ավելի ցածր պաշտոնային դրույքով զինվորական պաշտոնը:

Երբ կարող է զինծառայողը նշանակվել բարձր պաշտոնի

Զինծառայողը նշանակվում է բարձր պաշտոնի՝

- ծառայության մեջ առաջխաղացման կարգով (պայմանագրային զինծառայողը՝ իր համաձայնությամբ).
- մրցույթի արդյունքներով (պայմանագրային զինծառայողը).
- կազմակերպչական-հաստիքային միջոցառումների կապակցությամբ:

Մրցութային կարգով նշանակման ենթակա պաշտոնների ցանկը, նշանակման կարգը և պայմանները սահմանում է պետական լիազոր մարմինը:

Բարձր պաշտոնի նշանակելիս նախապատվությունը տրվում է ծառայողական պարտականությունները կատարելիս մասնագիտական խոր իմացությամբ և կազմակերպչական առավել ունակություններով աչքի

ընկած զինծառայողներին՝ որակավորման հանձնաժողովի եզրակացությամբ պաշտոնի նշանակվելու համար կամ, կազմակերպչական-հաստիքային միջոցառումների հետ կապված, նախկինում ցածր պաշտոնի փոխադրված զինծառայողներին:

Հանցագործության համար ազատության սահմանափակման հետ չկապված պատժի դատապարտված և զինվորական ծառայության մեջ թողնված զինծառայողը բարձր պաշտոնի չի նշանակվում մինչև օրենքով սահմանված կարգով դատվածության հանումը կամ մարումը:

Երբ կարող է զինծառայողը նշանակվել հավասար պաշտոնի

Զինծառայողը նշանակվում է հավասար պաշտոնի՝

- ծառայողական անհրաժեշտությունից (այդ թվում՝ ծառայության մեջ նրա կարողություններն առավել նպատակային օգտագործելու անհրաժեշտությունից) ելնելով.
- կազմակերպչական-հաստիքային միջոցառումների կապակցությամբ.
- ընտանեկան պայմաններից ելնելով (պայմանագրային զինծառայողը՝ իր խնդրանքով).
- առողջական վիճակի պատճառով՝ ռազմաբժշկական հանձնաժողովի եզրակացության համաձայն (պայմանագրային զինծառայողը՝ իր համաձայնությամբ).
- մրցույթի արդյունքներից ելնելով (պայմանագրային զինծառայողը):

Երբ կարող է զինծառայողը նշանակվել ցածր պաշտոնի

Զինծառայողը նշանակվում է ցածր պաշտոնի՝

- կազմակերպչական-հաստիքային միջոցառումների կապակցությամբ, եթե հնարավոր չէ նշանակել բարձր կամ հավասար պաշտոնի (պայմանագրային զինծառայողը՝ իր համաձայնությամբ).
- ընտանեկան պայմաններից ելնելով (պայմանագրային զինծառայողը՝ իր խնդրանքով).
- առողջական վիճակի պատճառով՝ ռազմաբժշկական հանձնաժողովի եզրակացության համաձայն (պայմանագրային զինծառայողը՝ իր համաձայնությամբ).
- անձնական խնդրանքով (պայմանագրային զինծառայողը).
- «պաշտոնի իջեցում» կամ «զինվորական կոչման մեկ աստիճանով իջեցում» կարգապահական տույժեր ստանալու դեպքում, ինչպես նաև, եթե «նախազգուշացում ծառայողական ոչ լրիվ համապատասխանության մասին» կարգապահական տույժ ստանալուց հետո՝

մեկ տարվա ընթացքում, ենթասպան կամ սպան չի ուղղվել՝ օրինակելիորեն կատարելով զինվորական պարտքը.

- եթե դատարանի դատավճռով դատապարտվել է որոշակի պաշտոններ զբաղեցնելու սահմանափակման հետ կապված պատժի:

Կարգապահական տույժ ստանալու հետևանքով ցածր պաշտոնի նշանակված զինծառայողը բարձր պաշտոնի կարող է նշանակվել տույժը հանելուց հետո:

Կին զինծառայողը հղիության շրջանում իր ցանկությամբ նշանակվում է ծառայության ավելի դյուրին պայմաններ ունեցող պաշտոնի՝ բժշկական եզրակացության համաձայն: Այդպիսի դեպքերում պահպանվում են նախկինում զբաղեցրած պաշտոնի համար սահմանված ամսական դրամական բավարարումը և այլ լրացուցիչ վճարներ:

Մինչև 2 տարեկան երեխա ունեցող կին զինծառայողը, եթե չի կարողանում կատարել իր ծառայողական պարտականությունները, նշանակվում է այլ զինվորական պաշտոնի՝ մինչ նշանակումն զբաղեցրած պաշտոնի համար սահմանված ամսական դրամական բավարարման և այլ լրացուցիչ վճարների պահպանմամբ:

Զինծառայողը երբ է նշանակվում պաշտոնեական պարտականությունների ժամանակավոր կատարող

Ծառայողական անհրաժեշտությունից ելնելով՝ զինծառայողը կարող է նշանակվել հավասար կամ բարձր զինվորական պաշտոնի կամ այդ պաշտոնի պարտականությունների ժամանակավոր կատարող՝

- թափուր (ազատ) զինվորական պաշտոնի՝ իր համաձայնությամբ (պաշտոնի ժամանակավոր կատարում).
- զինվորական պաշտոնն զբաղեցնող զինծառայողի ժամանակավոր բացակայության կամ պաշտոնից հեռացվելու դեպքում (պարտականությունների ժամանակավոր կատարում):

Ժամանակավոր զբաղեցվող պաշտոնի կամ պաշտոնեական պարտականությունների կատարման անընդմեջ տևողությունը չպետք է գերազանցի հետևյալ ժամկետները.

- 6 ամիս՝ թափուր պաշտոնի պարտականությունների կատարումը.
- 4 ամիս՝ զբաղեցված պաշտոնի պարտականությունների կատարումը (բացառությամբ երեխայի խնամքի համար արձակուրդում գտնվող զինծառայողի պաշտոնի պարտականությունների կատարման դեպքի):

Զինծառայողը՝ իր համաձայնությամբ, իսկ դրա անհնարինության դեպքում պահեստազորից զորակոչված քաղաքացին նշանակվում է պաշտոնի պարտականությունների կատարող՝ պաշտոնն զբաղեցնողի՝ երեխայի խնամքի համար արձակուրդում գտնվելու ժամկետի ընթացքում:

Զինծառայողին ժամանակավորապես պաշտոնի նշանակում և պաշտոնեական պարտականությունների կատարումից ազատում է տվյալ պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող հրամանատարը (պետը):

Թափուր պաշտոնի կամ երեխայի խնամքի համար արձակուրդում գտնվող կին զինծառայողի պաշտոնեական պարտականությունների ժամանակավոր կատարող նշանակված զինծառայողին վճարվում են տվյալ պաշտոնի համար սահմանված ամսական դրամական բավարարումը և այլ լրացուցիչ վճարներ:

Թափուր և զբաղեցված պաշտոնների պարտականությունների ժամանակավոր կատարող նշանակվում են՝

1) զինվորներ, սերժանտներ և ավագներ՝ այն զինվորական պաշտոններում, որոնց համար հաստիքով նախատեսված են ենթասպայի զինվորական կոչումներ.
2) ենթասպաներ՝ այն զինվորական պաշտոններում, որոնց համար հաստիքով նախատեսված են ենթասպայական և կրտսեր սպայական զինվորական կոչումներ.
3) կրտսեր սպաներ՝ այն զինվորական պաշտոններում, որոնց համար հաստիքով նախատեսված են կրտսեր և ավագ սպայական զինվորական կոչումներ.
4) ավագ սպաներ՝ այն զինվորական պաշտոններում, որոնց համար հաստիքով նախատեսված են ավագ և բարձրագույն սպայական զինվորական կոչումներ.
5) բարձրագույն սպաներ՝ այն զինվորական պաշտոններում, որոնց համար հաստիքով նախատեսված են բարձրագույն սպայական զինվորական կոչումներ:

Զինծառայողները որ դեպքերում կարող են թողնվել կադրերի տրամադրության տակ

Պայմանագրային զինծառայողները թողնվում են պետական լիազոր մարմնի կադրերի (կադրային մարմնի) տրամադրության տակ միայն հետևյալ դեպքերում.

- կազմակերպչական-հաստիքային միջոցառումների կապակցությամբ զինվորական պաշտոնից ազատվելիս՝ 2 ամսից ոչ ավելի.
- զինծառայողի նկատմամբ քրեական գործ հարուցվելիս և կալանքը որպես խափանման միջոց ընտրվելիս, ինչպես նաև նրա պաշտոնավարության ժամանակավոր դադարեցման որոշում կայացնելիս՝ մինչև տվյալ գործով վերջնական որոշման կայացվելը, իսկ զինծառայողի հետախուզման մեջ գտնվելու դեպքում՝ վեց ամսից ոչ ավելի, բացառությամբ ռազմաուսումնական հաստատություններ ավար-

տած զինծառայողների, որոնց պայմանագրով նախատեսված ծառայության ժամկետը չի ավարտվել.

- ստացիոնար բուժման մեջ գտնվող զինծառայողի՝ զինվորական ծառայության համար ոչ պիտանի ճանաչվելիս՝ մինչև բուժման ավարտը (ներառյալ՝ արձակումը ձևակերպելու ժամկետը), բայց ռազմաբժշկական փորձաքննության կանոնադրությամբ սահմանված ժամկետից ոչ ավելի.
- Հայաստանի Հանրապետության զինված ուժերից այլ զորքեր տեղափոխվելիս (և ընդհակառակը)՝ 3 ամսից ոչ ավելի.
- 1 ամսից ավելի անհայտ բացակայելիս՝ մինչև վերադառնալը կամ օրենքով սահմանված կարգով անհայտ բացակայող կամ մահացած ճանաչվելը.
- գերության մեջ գտնվելիս՝ մինչև ազատվելը.
- հղիության և ծննդաբերության կամ երեխայի խնամքի համար արձակուրդում գտնվող կին զինծառայողի զբաղեցրած պաշտոնը կրճատվելիս՝ մինչև արձակուրդի ավարտը.
- ռազմաուսումնական հաստատություն ընդունվելիս կամ նշված հաստատությունից հեռացվելիս կամ վերադառնալիս՝ 2 ամսից ոչ ավելի:

Կադրային մարմնի տրամադրության տակ թողնելու կարգը և պայմանները սահմանում է պետական լիազոր մարմնի ղեկավարը:

Զինծառայողը որ դեպքերում է ազատվում զինվորական պաշտոնից

Զինծառայողը զինվորական պաշտոնից ազատվում է նոր պաշտոնի նշանակվելու, տեղափոխվելու, գործուղվելու կամ զինվորական ծառայությունից արձակվելու դեպքում:

Զինվորական պաշտոնից զինծառայողին ազատում է տվյալ պաշտոնին նշանակելու իրավասություն ունեցող հրամանատարը (պետը):

Զինծառայողը որ դեպքերում է ծառայության նոր վայր տեղափոխվում

Զինծառայողը ծառայության նոր վայր տեղափոխվում (փոխադրվում) է հետևյալ դեպքերում.

- ծառայողական անհրաժեշտությունից ելնելով.
- առաջխաղացման կարգով.
- առողջական վիճակի պատճառով՝ ռազմաբժշկական հանձնաժողովի եզրակացության համաձայն.
- ընտանեկան դրության բերմամբ (պայմանագրային զինծառայողը՝ իր խնդրանքով).

- կազմակերպչական-հաստիքային միջոցառումների կապակցությամբ.
- պլանային փոխարինման կապակցությամբ (պայմանագրային զինծառայողը).
- ռազմաուսումնական հաստատություն, ասպիրանտուրա (ադյունկտուրա), դոկտորանտուրա ընդունվելու կապակցությամբ.
- ռազմաուսումնական հաստատությունից, ասպիրանտուրայից (ադյունկտուրայից), դոկտորանտուրայից հեռացվելու պատճառով.
- եթե կատարած հանցագործության համար նշանակվել է որոշակի պաշտոններ զբաղեցնելու սահմանափակման հետ կապված պատիժ և նրան չի կարելի թողնել զինծառայողներին ղեկավարելու հետ կապված պաշտոնում:

Պայմանագրային զինծառայողը, ծառայողական անհրաժեշտությունից ելնելով, տեղափոխվում է ծառայության նոր վայր՝ հավասար պաշտոնի նշանակմամբ:

Տեղափոխությունը կատարվում է առանց զինծառայողի համաձայնության, բացառությամբ այն դեպքերի, երբ զինծառայողի կամ նրա ընտանիքի անդամի (կին, անչափահաս, մինչև 23 տարեկան՝ սովորող, հաշմանդամ երեխա, խնամքի տակ գտնվող և համատեղ բնակվող անձ) համար, ռազմաբժշկական հանձնաժողովի եզրակացությամբ, տեղափոխման վայրը հակացուցված է:

Պայմանագրային զինծառայողը ծառայության նոր վայր փոխադրվում է նաև առաջխաղացման կարգով՝ իր համաձայնությամբ բարձր պաշտոնի նշանակմամբ:

Պարտադիր զինվորական ծառայության զորակոչված զինծառայողին ծառայության նոր վայր են փոխադրում առանց նրա համաձայնության:

Պայմանագրային զինծառայողի՝ ընտանեկան դրության բերմամբ ծառայության նոր վայր փոխադրումը կատարվում է բնակության վայրի պետական բժշկական-սոցիալական փորձաքննության մարմնի եզրակացության համաձայն՝ առանձին ապրող հոր, մոր, քրոջ, եղբոր, պապի, տատի, որդեգրողի մշտական կողմնակի խնամքի անհրաժեշտությունից ելնելով:

Պայմանագրային զինծառայող ամուսիններից մեկին ծառայության նոր վայր փոխադրելու դեպքում միաժամանակ որոշում է կայացվում նշված բնակավայր փոխադրել նաև ամուսնուն (կնոջը), եթե փոխվում է ընտանիքի բնակության վայրը:

Եթե հնարավոր չէ զինծառայող ամուսիններին միաժամանակ նշանակել զինվորական պաշտոնների, կամ եթե նրանցից մեկը չի զորացրվում, ապա ծառայության նոր վայր փոխադրում չի կատարվում:

Զինծառայողը ծառայության նոր վայր մեկնում է գործերը և պաշտոնը հանձնելուց հետո՝ փոխադրման հրամանն ստանալու օրվանից ոչ ուշ՝

մեկամսյա ժամկետում, բացառությամբ արձակուրդում, գործուղման կամ բուժման մեջ գտնվելու դեպքի:

Անբավարար առաջադիմության, անկարգապահության և ուսումնառությունից հրաժարվելու պատճառով ռազմաուսումնական հաստատությունից հեռացված, ինչպես նաև հետուսումնական զինվորական ծառայությունից հրաժարված՝ 18 տարին լրացած կուրսանտը զորակոչվում կամ ուղարկվում է պարտադիր զինվորական ծառայության՝ ընդհանուր հիմունքներով:

Տվյալ դեպքում ուսումնառության ժամանակաշրջանը պարտադիր զինվորական ծառայություն չի հաշվվում՝ անկախ տևողությունից, իսկ մինչև ռազմաուսումնական հաստատություն ընդունվելը պարտադիր զինվորական ծառայության ժամանակաշրջանը հաշվվում է՝ ելնելով փաստացի տևողությունից:

Ռազմաուսումնական հաստատությունից, ասպիրանտուրայից (ադյունկտուրայից), դոկտորանտուրայից հեռացված պայմանագրային զինծառայողները վերադառնում են ծառայության վայր, և նրանց հետ կնքվում է նոր պայմանագիր կամ նրանք զորացրվում են՝ համապատասխան պաշտոնատար անձի որոշմամբ:

Որ զինծառայողներն են ենթակա պլանային փոխարինման կարգով տեղափոխման

Պլանային փոխարինման կարգով տեղափոխման ենթակա են հատուկ և կլիմայական ծանր պայմաններում ծառայող զինծառայողները:

Վերը նշված պայմաններում ծառայության տևողությունը և զինծառայողների փոխարինման կարգը որոշում է պետական լիազոր մարմնի ղեկավարը:

Զինծառայողների պլանային փոխարինման կազմակերպման և անցկացման մասին որոշում ընդունում է համապատասխան պետական լիազոր մարմինը:

Զինծառայողների պլանային փոխարինումն իրականացվում է մինչև ծառայության սահմանված ժամկետի ավարտը: Տեղափոխվող զինծառայողները չեն օգտվում հետագա ծառայության վայրն ընտրելու իրավունքից: Նրանք նշանակվում են հավասար կամ բարձր զինվորական պաշտոնի՝ համապատասխան պաշտոնատար անձի որոշմամբ:

Զինծառայողը կարող է հրաժարվել պլանային փոխարինումից և շարունակել ծառայությունը հատուկ կամ կլիմայական ծանր պայմաններում, որի դեպքում ծառայության լրացուցիչ ժամկետը սահմանվում է նրա համաձայնությամբ՝ մեկ տարուց ոչ պակաս:

Պլանային փոխարինման կարգով՝ հատուկ և կլիմայական ծանր պայմաններ ունեցող վայրերում զինծառայողին նշանակում են բարձր

զինվորական պաշտոնի՝ իր համաձայնությամբ, հավասար պաշտոնի՝ առանց համաձայնեցման, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

Տեղափոխությունը կարող է կատարվել ծառայության (պայմանագրի) ժամկետը լրանալուց ոչ ուշ, քան մեկ տարի, ինչպես նաև զինծառայողի՝ սահմանային տարիքի հասնելուց ոչ ուշ, քան երեք տարի առաջ:

Չի թույլատրվում զինծառայողին, առանց իր համաձայնության, հատուկ և կլիմայական ծանր պայմաններ ունեցող վայր ծառայության կրկին տեղափոխելը:

Զինծառայողը կարող է, արդյոք, ծառայությունը շարունակել պետական լիազոր այլ մարմիններում

Զինծառայողը կարող է տեղափոխվել հետագա ծառայությունը շարունակելու՝

- Հայաստանի Հանրապետության զինված ուժերից պետական լիազոր այլ մարմին.
- պետական լիազոր այլ մարմնից Հայաստանի Հանրապետության զինված ուժեր.
- պետական լիազոր մի մարմնից պետական լիազոր այլ մարմին:

Զինծառայողի տեղափոխությունը կատարվում է պետական լիազոր համապատասխան մարմինների հետ համաձայնեցված և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Պայմանագրային զինծառայողի՝ վերը նշված կարգով տեղափոխությունը կատարվում է նրա խնդրանքով կամ համաձայնությամբ:

Սպայական և ենթասպայական կազմերի տեղափոխությունը ձևակերպվում է պետական լիազոր մարմնի ղեկավարի, իսկ շարքային կազմինը՝ պետական լիազոր մարմնի ղեկավարի՝ կադրային աշխատանքները համակարգող (կամ համապատասխան) տեղակալի հրամանով:

Տեղափոխվող զինծառայողի անունը հանվում է Հայաստանի Հանրապետության զինված ուժերի (պետական լիազոր այլ մարմնի) անձնակազմի ցուցակներից և գրանցվում պետական լիազոր այլ մարմնում (Հայաստանի Հանրապետության զինված ուժերում): Ընդ որում, մինչև պետական լիազոր համապատասխան մարմնի (Հայաստանի Հանրապետության զինված ուժերի) անձնակազմի ցուցակներում գրանցվելու օրը նա համարվում է Հայաստանի Հանրապետության զինված ուժերի (պետական լիազոր այլ մարմնի) զինծառայող:

Տեղափոխվող զինծառայողի նախկին պայմանագրի գործողությունը դադարում է նոր պայմանագիր կնքելու օրվանից: Նոր պայմանագիր կնքվում է պետական լիազոր այլ մարմնում (Հայաստանի Հանրապետության զինված ուժերում) զինծառայողի գրանցվելու օրը:

Զինծառայողները կարող են, արդյոք, գործուղվել պետական այլ մարմիններ

Սպայական և ենթասպայական կազմի պայմանագրային զինծառայողները գործուղվում են պետական մարմիններ, կազմակերպություններ, հիմնարկներ և ուսումնական հաստատություններ (այսուհետ՝ կազմակերպություններ)՝ հետագա ծառայությունը շարունակելու օրենքով սահմանված կարգով:

Սպաներին և ենթասպաներին գործուղում են նրանց համաձայնությամբ՝ համապատասխան կազմակերպության հարցման հիման վրա: Նշված զինծառայողներն այդ դեպքում ազատվում են զբաղեցրած պաշտոնից:

Գործուղված սպաների և ենթասպաների հետ նոր պայմանագիր կնքում է պետական լիազոր մարմնի կադրային մարմնի ղեկավարը: Ընդ որում, զինվորական ծառայության սահմանային տարիքի հասած սպաների և ենթասպաների հետ նոր պայմանագիր կնքվում է՝ հաշվի առնելով այն կազմակերպության ղեկավարի կարծիքը, որտեղ գործուղվել են:

Գործուղված սպայի և ենթասպայի զինվորական կոչման շնորհումը, զինվորական ծառայությունից արձակումը, շքանշաններով և մեդալներով պարգեւատրումը կատարվում է ընդհանուր հիմունքներով՝ այն կազմակերպության ներկայացմամբ, որտեղ գործուղվել են, իսկ անհրաժեշտության դեպքում՝ գործուղող և ընդունող մարմինների համատեղ ներկայացմամբ:

Զբաղեցրած պաշտոնից ազատված՝ կազմակերպություններ գործուղված սպաներն ու ենթասպաներն ուղարկվում են գործուղող մարմին՝ նրանց հետագա զինվորական ծառայության վերաբերյալ որոշում ընդունելու համար: Զինվորական ծառայությունը շարունակելու ցանկություն չհայտնած սպան և ենթասպան արձակվում են զինվորական ծառայության զբաղեցրած պաշտոնից՝ առանց զինվորական պաշտոնի նշանակվելու:

Գործուղված սպան, ենթասպան զինվորական ծառայությունից արձակվում են անմիջականորեն տվյալ կազմակերպությունից՝ զինվորական ծառայության սահմանային տարիքի հասնելու, ինչպես նաև օրենքով նախատեսված այլ դեպքերում:

Նշված զինծառայողների զինվորական ծառայության ավարտի օր համարվում է Հայաստանի Հանրապետության զինված ուժերից (պետական լիազոր այլ մարմնից) արձակվելու օրը:

Բաժին 6
Որակավորում

Ինչ նպատակով է կատարվում զինծառայողների որակավորումը

Պայմանագրային և պարտադիր զինվորական ծառայության սպայական կազմի զինծառայողների ճիշտ ընտրության, մասնագիտական ունակությունների բազմակողմանի և օբյեկտիվ գնահատման, զբաղեցրած զինվորական պաշտոնին համապատասխանելու և առաջխաղացման հեռանկարը որոշելու, ինչպես նաև պահեստազորում գտնվող քաղաքացիներին նախորոշելու նպատակով կատարվում է որակավորում:

Որակավորման կազմակերպման և անցկացման կարգն ու ժամկետները սահմանում է համապատասխան պետական լիազոր մարմնի ղեկավարը:

Պայմանագրային զինծառայողը որակավորվում է պայմանագրի ժամկետը լրանալուց ոչ ուշ, քան 6 ամիս առաջ, բայց զինվորական ծառայության յուրաքանչյուր 5 տարվա ընթացքում՝ առնվազն մեկ անգամ, ինչպես նաև ռազմաուսումնական հաստատություն, ասպիրանտուրա (ադյունկտուրա), դոկտորանտուրա ավարտելիս:

Զինծառայողին բարձր պաշտոնի նշանակելու, պաշտոնն իջեցնելու, ուսման ուղարկելու, պետական պարգևով պարգևատրելու, վաղաժամկետ կամ զբաղեցրած պաշտոնով նախատեսվածից մեկ աստիճանով բարձր զինվորական կոչում շնորհելու դեպքերում անցկացվում է որակավորում և հանձնաժողովի կարծիքը գրառվում է ներկայացման (պարգևատրման) թերթիկում:

Պարտադիր զինվորական ծառայության զորակոչված սպաների որակավորումն անցկացվում է պահեստազոր արձակելիս կամ նրանց հետ պայմանագիր կնքելիս:

Որակավորման թերթիկը կազմում է զինծառայողին որակավորող սպայական կազմի անմիջական (ուղղակի) պետը:

Զինծառայողը պետք է ծանոթանա որակավորման բովանդակությանը և ստորագրի հաստատված որակավորման թերթիկի համապատասխան մասում:

Ինչ պարտականություններ ունի զինծառայողին որակավորող հրամանատարը

Զինծառայողին որակավորող հրամանատարը (պետը) պարտավոր է՝

- բազմակողմանիորեն ուսումնասիրել և գնահատել որակավորվող զինծառայողի գործնական ու անհատական հատկանիշները.

- կազմել զինծառայողի որակավորման եզրահանգումների տեքստը.
- որակավորման թերթիկի բոլոր օրինակները ներկայացնել հաստատող մարմին՝ եզրակացության և հաստատման համար:

Որակավորվող զինծառայողի գործնական և անհատական հատկանիշներն ուսումնասիրող հրամանատարը (պետը) պարտավոր է՝

- վերլուծել և գնահատել զինծառայողի պաշտոնեական պարտականությունների կատարման գծով աշխատանքային ստույգ ցուցանիշները, ենթակա զորամասի (ստորաբաժանման) կամ վստահված տեղամասի գործերի վիճակը.
- որակավորվող զինծառայողի հետ անցկացնել անհատական զրույց՝ զինվորական ծառայության, մասնագիտական պատրաստության կատարելագործման, աշխատանքի ազդակների և մեթոդների վերաբերյալ.
- որակավորվող զինծառայողին տալ անհրաժեշտ խորհուրդներ և հանձնարարականներ՝ թերությունները վերացնելու, անհատական պատրաստության, ծառայողական և պաշտոնեական պարտականությունների արդյունավետ կատարման վերաբերյալ:

Հրամանատարները (պետերը) անձնական պատասխանատվություն են կրում որակավորման օբյեկտիվության, հետևությունների և հանձնարարականների հիմնավորվածության համար:

Անմիջական պետերը պարտավոր են ապահովել որակավորման հետևությունների իրականացումը, ենթականերից պահանջել վերացնելու թերությունները և այդ գործում օժանդակել նրանց, կանխել չհիմնավորված ձգձգումներն՝ օրինակելի զինծառայողներին բարձր պաշտոնի նշանակելիս:

Որակավորման անցկացման կարգը և արդյունքները կարելի է բողոքարկել վերադաս հրամանատարին (պետին)՝ արդյունքները հայտարարելու օրվանից հետո՝ մեկ ամսվա ընթացքում: Բողոքը հիմնավորելու դեպքում որակավորման թերթիկում կատարվում է համապատասխան փոփոխություն կամ լրացվում է նոր թերթիկ:

Ովքեր են ընդգրկվում որակավորման հանձնաժողովներում

Որակավորում անցկացնելու համար զորամասերում և զինվորական կառավարման մարմիններում (սկսած առանձին գումարտակից և ավելի բարձր) ստեղծվում են որակավորման հանձնաժողովներ:

Որակավորման հանձնաժողովները ենթարկվում են դրանք կազմավորող հրամանատարներին (պետերին):

Որակավորման հանձնաժողովի կազմը հայտարարվում է համապատասխան հրամանատարի (պետի) հրամանով: Հանձնաժողովի կազմում ընդգրկվում են հրամանատարի առաջին տեղակալը (նախագահ),

հրամանատարի տեղակալները, կադրային, համալրման և դաստիարակչական աշխատանքի գծով ներկայացուցիչները (անդամներ) և քարտուղարը (զորամասի սպաներից):

Որակավորման հանձնաժողովի նիստում քննարկվում են՝

1) զինծառայողի որակավորման արդյունքները.
2) պայմանագրային զինվորական ծառայության ընդունվելու մասին դիմումները.
3) զինվորական պաշտոնի նշանակվելիք թեկնածությունները, ինչպես նաև նոր պայմանագիր կնքելու նպատակահարմարությունը (այդ թվում՝ զինվորական ծառայության սահմանային տարիքի հասած զինծառայողների հետ).
4) ուսման ուղարկվող թեկնածուների հարցը.
5) զինծառայողների և զորամասերի (զինվորական կառավարման մարմինների) քաղաքացիական անձնակազմին պետական և գերատեսչական պարգևներով պարգևատրելու ներկայացումները.
6) վաղաժամկետ և զբաղեցրած հաստիքային զինվորական պաշտոնից մեկ աստիճանով բարձր զինվորական կոչում շնորհելու ներկայացումները.
7) այլ հարցեր, որոնց լուծման համար օրենքով և այլ նորմատիվ ակտերով պահանջվում է որակավորման հանձնաժողովի եզրակացությունը.
8) զինվորական ծառայության անցնելու հետ կապված այլ հարցեր՝ հրամանատարի (պետի) որոշմամբ:

Բոլոր քննարկված հարցերի վերաբերյալ որակավորման հանձնաժողովը կազմում է գրավոր եզրակացություն՝ հրամանատարի (պետի) որոշմանը ներկայացնելու համար:

Պետական լիազոր մարմնում ստեղծվում է կենտրոնական որակավորման հանձնաժողով:

Կենտրոնական որակավորման հանձնաժողովի աշխատակարգը, կազմը և խնդիրները որոշում է պետական լիազոր մարմնի ղեկավարը:

Բաժին 7
Զինծառայողներին տրվող արձակուրդը

Զինծառայողներին տրվող արձակուրդի ինչ տեսակներ կան

Զինծառայողներին տրվում են՝

- հերթական (հիմնական) արձակուրդ.
- ուսումնական (ռազմական ուսումնական հաստատություններում սովորելու ընթացքում և ավարտելու կապակցությամբ) արձակուրդ.
- լրացուցիչ (կարճաժամկետ) արձակուրդ.
- հիվանդության պատճառով արձակուրդ.
- կին զինծառայողներին՝ հղիության և ծննդաբերության, ինչպես նաև երեխայի խնամքի համար արձակուրդ:

Զինծառայողներին տրվում է նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ արձակուրդ:

Զինծառայողներին հերթական, լրացուցիչ, հիվանդության և ռազմաուսումնական հաստատություններն ավարտելու կապակցությամբ արձակուրդ տալու դեպքում լրացուցիչ տրվում է արձակուրդի անցկացման վայր մեկնելու և այնտեղից վերադառնալու համար անհրաժեշտ ժամանակ՝ մինչև 3 օր:

Որքան է հերթական արձակուրդի տևողությունը

Հերթական արձակուրդի տևողությունը սահմանվում է՝

- մինչև 15 օրացուցային տարի ծառայած զինծառայողներինը՝ 30 օր,
- 15–25 օրացուցային տարի ծառայած զինծառայողներինը՝ 40 օր,
- 25 և ավելի օրացուցային տարի ծառայած զինծառայողներինը՝ 45 օր:

Զինծառայողներին հերթական արձակուրդը տրվում է օրացուցային տարվա ընթացքում՝ պետական լիազոր մարմնի ղեկավարի սահմանած կարգով և այդ իրավունքն ունեցող հրամանատարի (պետի) հրամանով:

Հերթական արձակուրդը պայմանագրային զինծառայողի խնդրանքով կամ պետական լիազոր մարմնի ղեկավարի որոշմամբ կարող է տրվել մաս-մաս:

Ռազմաուսումնական հաստատությունն ավարտած զինծառայողին հերթական արձակուրդը տրվում է ուսումն ավարտելու տարում:

Զինծառայող ամուսինների ցանկությամբ՝ նրանց հերթական արձակուրդը տրվում է միաժամանակ:

Զինծառայողին երբ է տրվում լրացուցիչ արձակուրդ

Լրացուցիչ արձակուրդը տրվում է՝

- ծառայության հատուկ պայմաններ ունեցող և վնասակար աշխատանք կատարող զինծառայողին՝ 10 օր տևողությամբ.
- ընտանեկան հանգամանքների բերմամբ, ուսման կապակցությամբ և այլ հարգելի պատճառներով՝ մինչև 10 օր տևողությամբ:

Զինծառայողի ցանկությամբ լրացուցիչ արձակուրդը միացվում է հերթականին, որի դեպքում արձակուրդի ընդհանուր տևողությունը չպետք է գերազանցի 55 օրը:

Որքան կարող է լինել պարտադիր զինծառայողի արձակուրդի տևողությունը

Պարտադիր զինծառայողի ծառայության ընթացքում խրախուսման կարգով՝ ոչ պակաս, քան 6 ամսվա բարեխիղճ ծառայության դեպքում, կարող է տրվել մեկ հիմնական արձակուրդ՝ հետևյալ տևողությամբ.

- զինվորներին՝ 15 օր.
- սերժանտներին և ավագներին՝ 20 օր.
- սպայական կազմին՝ յուրաքանչյուր լրիվ ծառայած ամսվա համար երկու և կես օր հաշվարկով:

Պարտադիր զինվորական ծառայության շարքային կազմին լրացուցիչ արձակուրդ տրվում է՝

1) հրամանատարի (պետի) որոշմամբ՝ մինչև 5 օր տևողությամբ՝

- զինվորական ուսման կամ ծառայության բարձր ցուցանիշների համար,
- ելնելով ընտանեկան պայմաններից (ամուսնացածներին՝ 6 ամիսը մեկ անգամ).

2) պաշտպանության հանրապետական գործադիր մարմնի ղեկավարի կողմից նախատեսված այլ դեպքերում:

Ինչ առանձնահատկություններ ունի հերթական արձակուրդը

Հերթական արձակուրդը տրվում է օրացուցային տարվա ընթացքում՝ համաձայն հաստատված պլանի: Արձակուրդ տալու հերթականությունը սահմանում է համապատասխան հրամանատարը (պետը)՝ զորամասերի (զինվորական կառավարման մարմինների) մարտական պատրաստության ապահովման շահերը և արձակուրդի հավասարաչափ օգտագործման անհրաժեշտությունը հաշվի առնելով:

Հերթական արձակուրդից զինծառայողին կանչել թույլատրվում է միայն ծառայողական ծայրահեղ անհրաժեշտության դեպքում՝ արձակուրդ տրամադրած հրամանատարի (պետի) հրամանով: Նման դեպքում չօգտագործած արձակուրդի մասը տրամադրվում է նույն տարում, եթե կազմում է 15 օր և ավելի:

Չօգտագործած արձակուրդի օրերը զինծառայողի ցանկությամբ միացվում են հաջորդ տարվա հերթական արձակուրդի օրերին:

Հերթական արձակուրդի ժամանակը որոշելու իրավունք վերապահվում է՝

- մարտական գործողությունների մասնակիցներին.
- մինչև 16 տարեկան 3 և ավելի երեխա ունեցող զինծառայողներին.
- հաշմանդամ ամուսին կամ երեխա ունեցող զինծառայողներին:

Եթե հիվանդության կամ այլ հարգելի պատճառով զինծառայողը չի օգտվել հերթական արձակուրդից, դա տրվում է հաջորդ տարվա առաջին կիսամյակի ընթացքում:

Հերթական արձակուրդի ընթացքում հիվանդացած զինծառայողի արձակուրդը երկարաձգվում է հիվանդության պատճառով չօգտագործած օրերի թվով՝ հիմք ընդունելով բուժող բժշկի և բուժհիմնարկի պետի (գլխավոր բժշկի) համապատասխան տեղեկանքը:

Պայմանագրային զինծառայողների ծառայության ընդունվելու և ծառայությունից արձակվելու տարում հերթական արձակուրդը հաշվարկվում է օրենքով հասանելիք արձակուրդի ընդհանուր տևողությունը 12-ի բաժանելու և ստացված օրերը լրիվ ծառայած ամիսների թվով բազմապատկելու միջոցով: Ընդ որում, ոչ լրիվ ամիսներն ու օրերը կլորացվում են՝ ավելացման միտումով:

Զինծառայողի՝ պայմանագրի ժամկետը լրանալու կապակցությամբ կամ մինչև պայմանագրի ժամկետը լրանալը վաղաժամկետ զորացրվելու (անձնակազմի ցուցակներից հանվելու) դեպքերում չօգտագործված հերթական արձակուրդի փոխարեն վճարվում է դրամական փոխհատուցում՝ օրենքով սահմանված կարգով և չափով:

Զինծառայողին երբ է տրվում հիվանդության արձակուրդ

Հիվանդության պատճառով զինծառայողին արձակուրդ տրվում է ռազմաբժշկական հանձնաժողովի եզրակացության հիման վրա:

Հիվանդության պատճառով զինծառայողին տրվում է արձակուրդ 30–60 օր տևողությամբ:

Պարտադիր զինծառայողի հիվանդության արձակուրդը կարող է երկարաձգվել մինչև 60, պայմանագրային զինծառայողինը՝ մինչև 30 օր:

Բուժման և հիվանդության պատճառով տրված արձակուրդում անընդմեջ գտնվելու ժամանակն ընդհանուր առմամբ չպետք է անցնի չորս ամսից, բացառությամբ այն դեպքերի, երբ օրենսդրությամբ առանձին հիվանդությունների բուժման համար սահմանվում են ավելի երկարատև ժամկետներ:

Նշված ժամկետը կարող է երկարաձգվել պետական լիազոր մարմնի ղեկավարի և նրա տեղակալների որոշմամբ՝ բժշկական հիմնարկի եզրակացության հիման վրա:

Բուժման կամ հիվանդության պատճառով տրված արձակուրդի անընդմեջ ժամկետն ավարտվելուց հետո զինծառայողները ենթակա են ռազմաբժշկական հանձնաժողովի հետազոտման՝ զինվորական ծառայությանը պիտանիությունը որոշելու համար:

Ժամկետային զինվորական ծառայությունից հիվանդության պատճառով արձակման ժամանակ արձակուրդ չի տրվում:

Հիվանդության պատճառով արձակուրդը հերթական արձակուրդում չի հաշվարկվում:

Զինծառայողի առողջարանային բուժումը կազմակերպվում է հերթական արձակուրդի ընթացքում:

Որքան կարող է լինել ուսումնական արձակուրդի տևողությունը

Ռազմաուսումնական հաստատությունում սովորող զինծառայողին ուսման ընդմիջումների ընթացքում տրվում է՝

- ձմեռային արձակուրդ՝ 15 օր.
- ամառային արձակուրդ՝ 30 օր:

Ուսումնական արձակուրդի անցկացման վայր մեկնելու և վերադառնալու համար զինծառայողներին լրացուցիչ օրեր չեն տրամադրվում:

Կին զինծառայողներին հղիության, ծննդաբերության և երեխայի խնամքի համար արդյոք տրվում է արձակուրդ

Կին զինծառայողին հղիության և ծննդաբերության, ինչպես նաև երեխայի խնամքի համար տրվում է արձակուրդ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հղիության և ծննդաբերության արձակուրդի ընթացքում դրամական և նյութական բավարարումները պահպանվում են: Դրանից առաջ կամ անմիջապես հետո կին զինծառայողին, իր դիմումի համաձայն, տրվում է հերթական տարեկան արձակուրդ:

Մինչև երեխայի 2 տարին լրանալը, կին զինծառայողին, իր ցանկությամբ, տրվում է արձակուրդ: Այդ ժամկետում կին զինծառայողին տրվում է երեխայի խնամքի համար նախատեսված նպաստ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած չափով և կարգով:

Մինչև երեխայի 2 տարեկան դառնալն աշխատանքը շարունակող կին զինծառայողի համար դրամական բավարարումից բացի վճարվում է նաև սահմանված նպաստի կեսը:

Կին զինծառայողի դիմումի հիման վրա, երեխայի 2 տարեկան դառնալուց հետո, նրան տրվում է լրացուցիչ անվճար արձակուրդ՝ մինչև երեխայի երեք տարեկան դառնալը, որը նա կարող է օգտագործել լրիվ կամ մաս-մաս:

Հղիության և ծննդաբերության, ինչպես նաև երեխայի խնամքի համար արձակուրդը հաշվարկվում է կին զինծառայողի անընդհատ ծառայության ստաժում՝ պաշտոնային դրույքաչափը սահմանելու, երկարամյա ծառայության համար հավելավճար վճարելու, միանվագ դրամական պարգևատրման, կենսաթոշակ հաշվարկելու և զինվորական կոչում շնորհելու համար:

Երեխայի խնամքի համար տրված արձակուրդի ընթացքում կին զինծառայողի ծառայության տեղն ու պաշտոնը պահպանվում են:

Հղիության և ծննդաբերության տարում կին զինծառայողին հերթական արձակուրդ տրվում է ընթացիկ տարվա արձակուրդի տեւողությամբ, երեխայի խնամքի համար արձակուրդն ավարտվելու տարում՝ ավարտվելու օրվանից համամասնաբար մինչև օրացուցային տարվա ավարտը՝ ծառայության յուրաքանչյուր լրիվ ամսվա դիմաց երկու և կես օր հաշվարկով:

Բաժին 8
Զինծառայողին ծառայությունից ազատելը

Որ դեպքերում է զինծառայողն ազատվում ծառայությունից

1. Զինծառայողն արձակվում է ծառայությունից, երբ՝

- պահեստազոր, եթե պահեստազորում գտնվելու սահմանային տարիքի չի հասել և պիտանի կամ սահմանափակ պիտանի է զինվորական ծառայությանը.
- պաշտոնաթողության, եթե հասել է պահեստազորում գտնվելու սահմանային տարիքի կամ առողջական վիճակի պատճառով ռազմաբժշկական հանձնաժողովը ճանաչել է զինվորական ծառայությանը ոչ պիտանի.
- զինվորական ծառայությունից, եթե դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտվել է ազատազրկման կամ ազատության սահմանափակմամբ այլ պատժի կամ զրկվել է զինվորական կոչումից:

Զինծառայողը ծառայությունից արձակվում է «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածում նախատեսված հիմքերից որևէ մեկի առկայության դեպքում, այդ թվում՝ մինչև զինվորական ծառայության համար սահմանված ժամկետի ավարտը կամ վաղաժամկետ:

Պարտադիր զինվորական ծառայության շարքային կազմը վաղաժամկետ զորացրվում է «Զինապարտության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 2–3-րդ, իսկ սպայական կազմը՝ 12-րդ հոդվածի առաջին մասի 1-ին և 3-րդ կետերի հիմքերով:

Զինծառայողին ծառայությունից ազատելու ինչ հիմքեր կան

Զինծառայողը ենթակա է զինվորական ծառայությունից արձակման՝

- երկարամյա ծառայության կամ զինվորական ծառայության մեջ գտնվելու սահմանային տարիքը լրանալու դեպքերում.
- պայմանագրի կամ պարտադիր զինվորական ծառայության ժամկետը լրանալու կապակցությամբ.
- առողջական վիճակի պատճառով՝ ռազմաբժշկական հանձնաժողովի եզրակացությամբ զինվորական ծառայության համար ոչ պիտանի կամ սահմանափակ պիտանի ճանաչվելիս, եթե համապատասխան զորատեսակում չկան թափուր տեղեր և պահեստազոր արձակելու այլ հիմքեր.

- դատարանի դատավճռով զինվորական կոչումից զրկվելու դեպքում.
- դատարանի դատավճռով ազատազրկման կամ ազատության սահմանափակմամբ այլ պատժի դատապարտվելու դեպքում.
- ռազմաուսումնական հաստատություններից հեռացվելու դեպքում 18 տարին չլրացած կուրսանտը (պարտադիր զինվորական ծառայության զորակոչելու համար), ինչպես նաև սպայի կամ ենթասպայի զինվորական կոչում չունեցող կին զինծառայողը.
- ռազմաուսումնական հաստատությունն ավարտելուց հետո 10 տարվա, իսկ պետական լիազոր մարմնի պատվերով ակադեմիական կրթություն (այդ թվում՝ ադյունկտուրա կամ օրդինատուրա) ստանալուց հետո՝ 5 տարվա ընթացքում պայմանագրային զինծառայությունից հրաժարվելու դեպքում՝ ուսման հետ կապված ծախսերը փոխհատուցելու պայմանով.
- հաստիքների կամ զինված ուժերի թվակազմի կրճատման դեպքում (պայմանագրային զինծառայողը).
- պայմանագրի՝ զինվորական ծառայության անցման պայմանները չկատարելու կամ զինծառայողի պատիվն արատավորող արարք կատարելու դեպքերում.
- իր հիմնավորված զեկուցագրով՝ այլ աշխատանքի անցնելու կամ ընտանեկան հանգամանքների կապակցությամբ (պայմանագրային զինծառայողը).
- զինծառայողի հետախուզման մեջ գտնվելու դեպքում՝ կադրերի տրամադրության տակ թողնելու առավելագույն ժամկետը լրանալու կապակցությամբ:

Պայմանագրային զինծառայողն արձակվում է նաև, եթե՝

- կրճատվել է հաստիքային զինվորական պաշտոնը (այդ թվում՝ զորամասի կամ ստորաբաժանման լուծարման պատճառով), և համաձայն չէ նշանակվելու այլ զինվորական պաշտոնի.
- լրացել է կազմակերպչահաստիքային միջոցառումների կապակցությամբ կադրերի տրամադրության տակ գտնվելու ժամկետը, և համաձայն չէ նշանակվելու այլ զինվորական պաշտոնի.
- ռազմաբժշկական հանձնաժողովի կողմից ճանաչվել է ոչ պիտանի՝ ռազմահաշվառական մասնագիտությամբ ծառայությունը շարունակելու համար, բայց զինվորական ծառայության համար պիտանի է կամ պիտանի՝ աննշան սահմանափակումներով, և համաձայն չէ նշանակվելու այլ զինվորական պաշտոնի.
- իջեցվել է զինվորական պաշտոնին համապատասխանող զինվորական կոչումը կամ փոխվել է (վերանվանվել է) զինվորական հաշվառման մասնագիտությունը, և նա համաձայն չէ նշանակվելու այլ զինվորական պաշտոնի:

Ընտանեկան հանգամանքների կապակցությամբ պայմանագրային զինծառայողը զինվորական ծառայությունից արձակվում է որակավորման հանձնաժողովի եզրակացությամբ, եթե՝

- փոխվում է ամուսնու (կնոջ) ծառայության վայրը.
- համապատասխան բժշկական փորձաքննության մարմնի եզրակացության համաձայն, մշտական կողմնակի խնամքի կարիք ունի նրա առանձին ապրող հայրը, մայրը, կինը (ամուսինը), հարազատ քույրը, եղբայրը, և չկա այլ անձ, որը, ըստ օրենքի, պարտավոր է խնամել նրանց.
- ըստ բժշկական ցուցումների՝ ընտանիքի անդամի՝ տվյալ տեղանքում ապրելը հակացուցված է, և հնարավոր չէ նրան փոխադրել ընտանիքի բնակության համար բարենպաստ տեղանք՝ շարունակելու ծառայությունը.
- խնամում է մինչև 18 տարեկան առանց հոր (մոր) մեծացող երեխա:

Որ մարմիններն են իրավասու զինծառայողին արձակելու զինվորական ծառայությունից

Զինվորական ծառայությունից արձակվում են՝

- Հայաստանի Հանրապետության զինված ուժերի բարձրագույն հրամանատարական կազմը՝ Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրով.
- Հայաստանի Հանրապետության զինված ուժերի (այլ զորքերի) ավագ, միջին և կրտսեր հրամանատարական կազմերը, ինչպես նաև բարձրագույն հրամանատարական կազմի պաշտոն չզբաղեցնող մյուս սպաներն ու զինծառայողները՝ պետական լիազոր մարմնի ղեկավարի հրամանով սահմանած կարգով:

Եթե առկա են պայմանագրային ծառայությունից արձակելու մեկից ավելի հիմքեր, զինծառայողն արձակվում է իր ընտրած հիմքով, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

Զինծառայողին, որպես կանոն, արձակում են նրա զեկուցագրի հիման վրա, բացառությամբ, երբ արձակումն իրականացվում է առանց նրա հետ համաձայնեցնելու:

Պարտադիր զինվորական ծառայության ընթացքում պայմանագրային զինվորական ծառայության փոխադրված զինծառայողը չի կարող վաղաժամկետ արձակվել մինչև պարտադիր զինվորական ծառայության սահմանված ժամկետի ավարտը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

Ընդ որում, պարտադիր զինվորական ծառայության ընդհանուր ժամկետների հաշվարկում պայմանագրային զինվորական ծառայության 2 ամիսը հաշվվում է պարտադիր մեկ ամիս:

Զինվորական ծառայության մեջ 20 և ավելի տարի (արտոնյալ հաշվարկով) անբասիր ծառայած, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությանն առանձնակի ծառայություններ մատուցած սպաներին ու ենթասպաներին, անկախ ծառայության ընդհանուր ժամկետից, արձակելու իրավունք ունեցող պետի հրամանով կարող է վերապահվել զինվորական համազգեստ կրելու իրավունք:

Զինվորական համազգեստ կրելու իրավունք ունեն նաեւ ռազմամարզական կամ ուսումնական հաստատություններում ուսումնական գործընթացին ներգրավված պահեստազորի սպաները՝ պետական լիազոր մարմնի ղեկավարի սահմանած կարգով:

Անհիմն դատապարտված և արդարացված զինծառայողը զինվորական ծառայությունում վերականգնվում է զինվորական ծառայությունից արձակելու վերաբերյալ հրամանը չեղյալ համարելու միջոցով՝ արձակման հրամանը տված հրամանատարի (պետի) հրամանով: Այդ դեպքում բաց թողնված զինվորական ծառայության ժամկետը հաշվարկվում է զինծառայողի զինվորական ծառայության ընդհանուր ստաժում:

Զինվորական ծառայությունից արձակվող զինծառայողը զորամասի անձնակազմի ցուցակներից հանվում է զինվորական ծառայության ավարտի օրը (վաղաժամկետ զորացրվողները՝ զինվորական ծառայության ավարտի օրվանից ոչ ուշ), բայց ոչ ուշ, քան արձակման հրամանի քաղվածքը զորամաս (զինվորական կառավարման մարմին) հասնելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում:

Բացառություն են կազմում այն դեպքերը, երբ զինծառայողն ստացիոնար բուժման մեջ է, հղիության, ծննդաբերության և երեխայի խնամքի համար օրենքով նախատեսված արձակուրդում է (կին զինծառայողը), գերի (պատանդ) է կամ անհայտ կորած:

Հղիության և ծննդաբերության, ինչպես նաև երեխայի խնամքի համար նախատեսված արձակուրդում գտնվող կին զինծառայողը չի հանվում զորամասի անձնակազմի ցուցակներից:

Զոհված (մահացած) զինծառայողը զորամասի անձնակազմի ցուցակներից հանվում է զոհվելու (մահանալու), իսկ անհայտ կորածը՝ անհայտ բացակայող կամ մահացած ճանաչվելու վերաբերյալ դատարանի որոշումն օրինական ուժի մեջ մտնելու հաջորդ օրը:

Ազատազրկման, ազատության սահմանափակման դատապարտված կամ զինվորական կոչումից զրկված զինծառայողն արձակվում է դատարանի դատավճռի հիման վրա՝ պատիժը կրելու սկիզբ նշված օրվանից:

Ազատազրկման հետ չկապված պատժի դատապարտված (այդ թվում՝ դատավճռի կատարման հետաձգմամբ) կամ պատժի կրումից ազատված (այդ թվում՝ համաներում կիրառելու միջոցով) զինծառայողը կարող է շարունակել զինվորական ծառայությունն այն հրամանատարի (պետի) որոշմամբ, որին տրված է նրան արձակելու իրավունք:

Բաժին 9
Զինապարտության մասին

Ինչով են կարգավորվում զինապարտության մասին հարցերը

Զինապարտության մասին հարցերը կարգավորվում են 1998 թվականի սեպտեմբերի 16-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված «Զինապարտության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, որն էլ սահմանում է Հայաստանի Հանրապետությունում քաղաքացիների զինվորական հաշվառումը, զինվորական ծառայության նախապատրաստությունը, զորակոչը, զինվորական ծառայությունը, պահեստազորում պատրաստությունը կազմակերպելու և անցկացնելու հետ կապված հարաբերությունները:

Ինչ է զինապարտությունը և ովքեր են համարվում զինապարտներ

Զինապարտությունը Հայաստանի Հանրապետության պաշտպանությանը մասնակցելու՝ քաղաքացիների սահմանադրական պարտականությունն է:

Զինապարտներ են համարվում նախազորակոչային, զորակոչային տարիքի և պահեստազորում հաշվառված արական, ինչպես նաև զինվորական մասնագիտություն ունեցող կամ զինվորական ծառայություն անցած իգական սեռի քաղաքացիները:

Քաղաքացիների զինապարտությունն ընդգրկում է՝

- զինվորական հաշվառումը.
- զինվորական ծառայության նախապատրաստությունը.
- զորակոչը և զինվորական ծառայությունը.
- պահեստազորում գտնվելը:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ընդունած այլ պետության քաղաքացին ազատվում է պարտադիր զինվորական ծառայությունից, եթե մինչև Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ընդունելը ոչ պակաս, քան 12 ամիս ծառայել է այլ պետության զինված ուժերում կամ այլ պետությունում ոչ պակաս, քան 18 ամիս անցել է այլընտրանքային զինվորական ծառայություն, բացառությամբ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած պետությունների:

Այլ պետության քաղաքացիություն ընդունած Հայաստանի Հանրապետության քաղաքացին չի ազատվում պարտադիր զինվորական ծառայությունից, անկախ այն հանգամանքից՝ ծառայել է նա այլ պետությունում, թե՝ ոչ:

Երկքաղաքացին չի ազատվում զորահավաքից և վարժական հավաքից:

Որ մարմիններն են պարտավոր ապահովել զինապարտությունը

Պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների, անկախ կազմակերպական-իրավական ձևից գործատու կազմակերպությունների և ուսումնական հաստատությունների պաշտոնատար անձինք պարտավոր են՝

ա) ժամանակին և սահմանված ձևով վարել զինապարտների գրանցամատյանը, զինվորական հաշվառման ենթակա անձանց ցուցակները ներկայացնել նրանց հաշվառման (հաշվառում չունեցողներինը՝ փաստացի բնակության վայրի) զինվորական կոմիսարիատներ, ինչպես նաև տրամադրել հաշվառումից հանվելու, աշխատանքի (ուսումնական հաստատություն) ընդունվելու, տեղափոխվելու, ազատվելու (հեռացվելու) վերաբերյալ տվյալները.

բ) համապատասխան զինվորական կոմիսարիատի պահանջով զինապարտներին ծանուցել զինվորական կոմիսարիատ կանչվելու մասին.

գ) զինապարտներին ազատել աշխատանքից կամ արձակել ուսումից՝ զինվորական ծառայության կամ զինվորական կոմիսարիատի ծանուցագրում նշված անհրաժեշտ ժամանակով:

Հայաստանի Հանրապետության ոստիկանության մարմինները պարտավոր են՝

ա) զինապարտներին անձնագիր տալու կամ փոխանակելու (բացառությամբ արտերկրում գտնվող պահեստազորայինների), ըստ բնակության վայրի հաշվառելու կամ հաշվառումից հանելու գործողությունները կատարել նրանց զինվորական փաստաթղթերում համապատասխան զինվորական կոմիսարիատի կողմից զինվորական հաշվառման վերաբերյալ նշումների առկայության դեպքում: Նախազորակոչային տարիքի զինապարտների անձնագրերն օտարերկրյա պետություններում վավերական լինելու մասին նշումը կատարել մինչև նրանց զորակոչային տարիքը լրանալը, իսկ զորակոչային տարիքը լրանալու դեպքում՝ պարտադիր զինվորական ծառայության զորակոչից ստացած տարկետման ժամանակով.

բ) զինվորական կոմիսարիատներին աջակցել զինապարտներին զորակոչելու, վարժական հավաքի կանչելու եւ հաշվառելու գործում:

Բժշկական-աշխատանքային փորձաքննական հանձնաժողովները մեկշաբաթյա ժամկետում պարտավոր են համապատասխան զինվորական կոմիսարիատ հայտնել հաշմանդամ ճանաչված բոլոր զինապարտների մասին՝ անկախ հաշմանդամության խմբից:

Քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմինները պարտավոր են մեկշաբաթյա ժամկետում համապատասխան զինվորական կոմիսարիատ հայտնել քաղաքացիական կացության ակտերում զինապարտների կողմից իրենց ազգանունը, անունը, հայրանունը, ծննդյան տարեթիվը փոխելու, ինչպես նաև նրանց մահվան գրանցման մասին տվյալները:

Հետաքննության և նախաքննության մարմինները պարտավոր են մեկշաբաթյա ժամկետում համապատասխան զինվորական կոմիսարիատ հայտնել այն զորակոչիկների մասին, որոնց մեղադրանք է առաջադրվել, իսկ դատարանները՝ նշված անձանց վերաբերյալ՝ օրինական ուժի մեջ մտած դատավճիռների և վերջնական որոշումների մասին:

Ազատազրկման կալանքի և ազատության սահմանափակման դատապարտված զորակոչիկների հաշվառման վկայականները, զինծառայողների և պահեստազորայինների զինվորական գրքույկներն ու դատավճռի պատճենները դատարաններն ուղարկում են համապատասխան զինվորական կոմիսարիատ՝ դատավճիռներն օրինական ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկշաբաթյա ժամկետում:

Քրեակատարողական հիմնարկները պարտավոր են ազատազրկման դատապարտված կամ ազատազրկման վայրից արձակված զինապարտների մասին մեկշաբաթյա ժամկետում հայտնել նրանց հաշվառման (հաշվառում չունեցողներինը՝ փաստացի բնակության վայրի) զինվորական կոմիսարիատներ:

Հայաստանի Հանրապետության դիվանագիտական և հյուպատոսական մարմինները պարտավոր են՝

ա) Հայաստանի Հանրապետության զինվորական կոմիսարիատից ստացված իրազեկման հիման վրա դիվանագիտական մարմնում կամ հյուպատոսական հիմնարկում հաշվառման կանգնած զորակոչիկին ծանուցել դիվանագիտական մարմին կամ հյուպատոսական հիմնարկ ներկայանալու համար և ներկայացած անձանց ստորագրությամբ ծանուցագիր հանձնել պարտադիր զինվորական ծառայության զորակոչվելու մասին.

բ) դիվանագիտական մարմնում կամ հյուպատոսական հիմնարկում հաշվառման կանգնած զինապարտի վերաբերյալ տվյալները հաշվառման կանգնելուց հետո՝ երկշաբաթյա ժամկետում հայտնել Հայաստանի Հանրապետության զինվորական կոմիսարիատ.

գ) իրենց իրավասությունների շրջանակներում աջակցել նախազորակոչիկների և զորակոչիկների վերադարձին Հայաստանի Հանրապետություն:

Պաշտոնատար անձանց կողմից զինապարտության կատարման ապահովմանը խոչընդոտելն առաջացնում է պատասխանատվություն՝ օրենքով սահմանված կարգով:

Բաժին 10
Զինվորական հաշվառում

Որ մարմիններն են իրականացնում զինվորական հաշվառում

Զինվորական հաշվառումը նախազորակոչիկների (16–18 տարեկան), զորակոչիկների (18–27 տարեկան) և պահեստազորում գտնվող քաղաքացիների հաշվառման ու հանրապետության զորակոչային, վարժահավաքային և զորահավաքային ռեսուրսների վերլուծության պետական համակարգն է:

Զինվորական հաշվառման կարգը սահմանում է կառավարությունը:

Զինվորական հաշվառում իրականացնում են՝

ա) զինապարտի մշտական բնակության հաշվառման (հաշվառում չունեցողներինը՝ փաստացի բնակության) վայրի զինվորական կոմիսարիատը.

բ) Հայաստանի Հանրապետության զինվորական կոմիսարիատը՝ Հայաստանի Հանրապետության մշտական հաշվառում չունեցող և օտարերկրյա պետությունում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական մարմնում կամ հյուպատոսական հիմնարկում հաշվառված զինապարտներինը:

Նախազորակոչային տարիքի քաղաքացիների զինվորական հաշվառումը համարվում է կցագրում: Կցագրման ենթակա են տվյալ տարվա ընթացքում 16 տարին լրացող արական սեռի քաղաքացիները:

Զինապարտների զինվորական հաշվառման լրիվությունն ապահովելու նպատակով պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, անկախ կազմակերպական-իրավական ձևից գործատու կազմակերպություններն ու ուսումնական հաստատությունները վարում են աշխատող կամ սովորող զինապարտների վերաբերյալ գրանցամատյան, որի վարման կարգը սահմանում է կառավարությունը:

Զինվորական հաշվառման նպատակով զինվորական կոմիսարիատում կազմվում է զինապարտի անձնական գործ, որում գրառվում են զինապարտի հաշվառման վայրի, ընտանեկան դրության, կրթության, առողջական վիճակի, դատվածության վերաբերյալ տվյալները, ինչպես նաև կցվում են այդ տվյալների վերաբերյալ համապատասխան փաստաթղթերը:

Ինչ պարտականություններ ունեն քաղաքացիները զինվորական հաշվառման գործընթացում

Քաղաքացիները պարտավոր են զինվորական հաշվառման, ինչպես նաև պարտադիր զինվորական ծառայության զորակոչվելու համար ներ-

կայանալ իրենց հաշվառման (հաշվառում չունեցողները՝ փաստացի բնակության) վայրի զինվորական կոմիսարիատ (դիվանագիտական, հյուպատոսական մարմիններ):

Զինվորական ծառայությունից պահեստ արձակված քաղաքացիները պարտավոր են յոթնօրյա ժամկետում ներկայանալ հաշվառման (հաշվառում չունեցողները՝ փաստացի բնակության) վայրի զինվորական կոմիսարիատ՝ զինվորական հաշվառման համար:

Հաշվառման (հաշվառում չունեցողները՝ փաստացի բնակության) վայրը փոխելու դեպքում զինապարտները զինվորական հաշվառման կանգնելու համար պարտավոր են ներկայանալ համապատասխան զինվորական կոմիսարիատ (դիվանագիտական, հյուպատոսական մարմիններ)՝ հաշվառման (հաշվառում չունեցողները՝ փաստացի բնակության) նոր վայր ժամանելուց հետո՝ յոթնօրյա ժամկետում: Օտարերկրյա պետություն մշտական բնակության մեկնող Հայաստանի Հանրապետության քաղաքացին հաշվառման (հաշվառում չունեցողը՝ փաստացի բնակության) վայրի զինվորական կոմիսարիատում պարտավորագիր է ստորագրում սույն մասով նախատեսված դեպքում և ժամկետում օտարերկրյա պետությունում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական մարմնում կամ հյուպատոսական հիմնարկում հաշվառման կանգնելու վերաբերյալ:

Զինվորական ծառայության ընթացքում դատապարտված և ազատազրկման ձևով պատիժ կրած անձինք պարտավոր են պատժի կրումից ազատվելու պահից յոթնօրյա ժամկետում ներկայանալ հաշվառման (հաշվառում չունեցողները՝ փաստացի բնակության) վայրի զինվորական կոմիսարիատ:

Զինապարտներն իրենց ընտանեկան դրության, հաշվառման (հաշվառում չունեցողները՝ փաստացի բնակության) վայրի, կրթության աշխատավայրի և պաշտոնի փոփոխությունների մասին պարտավոր են յոթնօրյա ժամկետում հայտնել հաշվառման (հաշվառում չունեցողները՝ փաստացի բնակության) վայրի զինվորական կոմիսարիատ (դիվանագիտական, հյուպատոսական մարմիններ):

Բաժին 11
Զորակոչ

Ովքեր են զորակոչվում պարտադիր զինվորական ծառայության

Պարտադիր զինվորական ծառայության են զորակոչվում 18-ից մինչև 27 տարեկան արական սեռի զորակոչիկներն ու մինչև 35 տարեկան առաջին խմբի պահեստազորի սպաները, ովքեր առողջական վիճակի պատճառով ճանաչվել են զինծառայության համար պիտանի՝ խաղաղ պայմաններում:

Պարտադիր զինվորական ծառայության զորակոչվելու ենթակա չեն այն անձինք, որոնց նկատմամբ կատարվում է հետաքննություն (նախաքննություն, դատաքննություն) կամ ովքեր նախկինում դատապարտվել են ազատազրկման՝ ծանր կամ առնվազն երկու անգամ դիտավորյալ հանցագործություն կատարելու համար և ազատազրկման վայրում պատիժը կրել են երեք տարուց ոչ պակաս, ինչպես նաև, եթե կատարել են Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության և Հայաստանի Հանրապետության դատախազության հաստատած ցանկում նշված հանցագործություն:

Նախկինում ազատազրկման դատապարտված և ազատազրկման վայրում երեք տարուց պակաս ժամկետով պատիժ կրած անձանց պարտադիր զինվորական ծառայության զորակոչելու կամ պահեստազորում հաշվառելու կարգը սահմանում է պաշտպանության նախարարը:

Շարքային կազմի զորակոչը և զորացրումը կատարվում է Հանրապետության Նախագահի հրամանագրով՝ տարին երկու անգամ՝ ապրիլ-հունիս և հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին:

Պահեստազորի սպաների զորակոչը և զորացրումը կատարվում է Հանրապետության Նախագահի հրամանագրով սահմանված ժամկետում: Զորակոչից տարկետում ստացող սպաների կատեգորիաների ցանկը հաստատում է կառավարությունը:

Զորակոչի ենթակա շարքային կազմի և պահեստազորի սպաների թվաքանակը սահմանում է կառավարությունը:

Պարտադիր զինվորական ծառայության զորակոչը հայտարարվելուց հետո բոլոր զորակոչիկները, ինչպես նաև 27 տարեկանից բարձր տարիքի զորակոչիկները՝ օրենքով նախատեսված դեպքում, պարտավոր են ծանուցագրում նշված ժամկետում ներկայանալ այն զինվորական կոմիսարիատ, որտեղ նրանք հաշվառված են:

Պարտադիր զինվորական ծառայության զորակոչի ժամանակ բնակության վայրին մոտ գտնվող զորամասում ծառայելու արտոնությունից օգտվում են՝

ա) միայնակ և տարիքային կենսաթոշակի անցած կամ երրորդ խմբի հաշմանդամ հոր կամ մոր միակ զավակը.

բ) Հայաստանի Հանրապետության սահմանների պաշտպանության, զինված ուժերում և այլ զորքերում ծառայության ընթացքում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով Հայաստանի Հանրապետությունում տեղակայված օտարերկրյա պետությունների զինվորական ստորաբաժանումներում ծառայողական պարտականություններ կատարելիս զոհված (մահացած) հայր (մայր) կամ եղբայր (քույր) ունեցող զորակոչիկները.

գ) ամուսնացած և մեկ երեխա ունեցող զորակոչիկները.

դ) երկկողմ և միակողմ ծնողազուրկ զորակոչիկները.

ե) Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի հրամանով՝ այլ զորակոչիկները:

Բնակության վայրին մոտ գտնվող զորամաս է համարվում զորակոչիկի հաշվառման (հաշվառում չունեցողները՝ փաստացի բնակության) վայրից մինչև 100 կմ տեղակայված զորամասը:

Զինված ուժեր կամ այլ զորքեր միաժամանակ զորակոչվող եղբայրները, իրենց ցանկությամբ, ծառայության են զորակոչվում միևնույն զորամաս:

Ով կարող է ազատվել պարտադիր զինվորական ծառայությունից

Պարտադիր զինվորական ծառայությունից ազատվում է՝

ա) հանրապետական զորակոչային հանձնաժողովի կողմից առողջական վիճակի պատճառով զինծառայության համար ոչ պիտանի ճանաչված քաղաքացին՝ հանվելով զինվորական հաշվառումից.

բ) այն քաղաքացին, ում հայրը (մայրը) կամ հարազատ եղբայրը (քույրը) զոհվել (մահացել) է Հայաստանի Հանրապետության պաշտպանության կամ զինված ուժերում և այլ զորքերում ծառայողական պարտականություններ կատարելու ժամանակ, և նա այդ ընտանիքի միակ արու զավակն է.

գ) քաղաքացին՝ կառավարության որոշմամբ.

դ) մինչև Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունն ընդունելն օտարերկրյա պետությունների զինված ուժերում պարտադիր զինվորական ծառայություն անցած քաղաքացին.

ե) գիտական աստիճան (գիտության թեկնածու կամ գիտության դոկտոր) ունեցող քաղաքացին, եթե նա զբաղվում է մասնագիտական, գիտական կամ մանկավարժական գործունեությամբ:

Ընտանեկան դրության բերումով որ զորակոչիկին է զորակոչից տարկետում տրվում

Պարտադիր զինվորական ծառայության զորակոչից ընտանեկան դրության բերումով տարկետում տրվում է այն զորակոչիկին, որն ունի՝

ա) անաշխատունակ հայր և մայր կամ միայնակ անաշխատունակ հայր կամ մայր, եթե նրանք չունեն Հայաստանի Հանրապետության քաղաքացի համարվող աշխատունակ, պարտադիր զինվորական ծառայության մեջ չգտնվող այլ զավակ:

Անաշխատունակ ծնողներն են՝

- ծերության կենսաթոշակի իրավունք տվող տարիքի հասած հայրը և մայրը,
- առաջին կամ երկրորդ խմբի հաշմանդամ հայրը և մայրը.
- դատարանի վճռով անգործունակ ճանաչված հայրը և մայրը.

բ) առանց մոր մեծացող երեխա.

գ) երկու և ավելի երեխա.

դ) առաջին կամ երկրորդ խմբի հաշմանդամ կին.

ե) մինչև 18 տարեկան կամ 18 տարեկանից բարձր, բայց առաջին կամ երկրորդ խմբի հաշմանդամ կամ դատարանի վճռով անգործունակ ճանաչված հարազատ քույր կամ եղբայր, եթե չկա նրա հետ բնակվող ընտանիքի անդամ համարվող աշխատունակ այլ անձ:

Զորակոչիկին տարկետում տրվում է նաև վերջինիս կնոջ՝ 2-րդ երեխայով կամ զույգ երեխայով վեցամսյա հղիության դեպքում:

Եթե քաղաքացին մինչև զորակոչային տարիքի հասնելն առնվազն հինգ տարի եղել է որդեգրված, կամ ծնողներն ամուսնալուծվել են առնվազն հինգ տարի առաջ, և կան նշված պայմաններից որևէ մեկը, ապա նա օգտվում է պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում ստանալու իրավունքից:

Պարտադիր զինվորական ծառայության զորակոչից օրենքով չնախատեսված դեպքերում ընտանեկան դրության բերումով տարկետում տալու մասին որոշումն ընդունում է պաշտպանության նախարարը՝ հանրապետական զորակոչային հանձնաժողովի եզրակացության առկայության դեպքում:

Նշված դեպքերում զորակոչիկին տարկետում տրվում է մինչև նրա 27 տարեկան դառնալը: Եթե մինչև 27 տարեկան դառնալը նա չի կորցնում տարկետում ստանալու իրավունքը, ապա խաղաղ ժամանակ ազատվում է պարտադիր զինվորական ծառայությունից և հաշվառվում պահեստազորում:

Ուսումը շարունակելու համար ում է տրվում տարկետում

Պարտադիր զինվորական ծառայության զորակոչից ուսումը շարունակելու համար տարկետում տրվում է՝

ա) պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների (այդ թվում՝ օրդինատուրա, ինտերնատուրա և մագիստրատուրա) ցերեկային ուսուցման ուսանողներին, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատած ցանկում ընդգրկված միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատությունների ցերեկային ուսուցման ուսանողներին.

բ) պետական գիտակրթական համակարգի ասպիրանտուրայում պետական պատվերով առկա ուսուցմամբ սովորողներին.

գ) պետական պատվերով, միջպետական և միջգերատեսչական համաձայնագրերով օտարերկրյա պետությունների բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողներին, օրդինատուրայում, ինտերնատուրայում, մագիստրատուրայում կամ ասպիրանտուրայում սովորողներին.

դ) դատական դպրոցի ունկնդիրներին:

Ասպիրանտուրա եւ մագիստրատուրա ընդունվելու կարգը և պայմանները հաստատվում են կառավարության որոշմամբ:

Ատենախոսությունը պաշտպանած, բայց ԲՈՀ-ի հաստատումը դեռ չստացած և ասպիրանտուրան ավարտած ու ատենախոսության պաշտպանության օրը պաշտոնապես նշանակված անձանց պարտադիր զինվորական ծառայության զորակոչվելու կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Ուսումը շարունակելու համար տարկետում ստացած և նշված ուսումնական հաստատություններից հեռացված կամ ազատված (բացառությամբ ուսման վարձը չվճարելու պատճառով ուսումնական հաստատությունից հեռացված և մինչև պարտադիր զինվորական ծառայության զորակոչի հայտարարվելն ուսման վարձը վճարելու հիման վրա ուսումնառությունը վերականգնած) կամ անբավարար առաջադիմության պատճառով նույն կուրսում մնացած 18 տարին լրացած քաղաքացիները կորցնում են տարկետման իրավունքը և ենթակա են զորակոչի, եթե չեն օգտվում օրենքով նախատեսված պարտադիր զինվորական ծառայությունից ազատվելու կամ պարտադիր զինվորական ծառայության զորակոչից այլ հիմքով տարկետում ստանալու իրավունքից:

Սահմանված կարգով պարտադիր զինվորական ծառայության զորակոչի ենթակա պահեստազորի առաջին խմբի սպաները, որոնք ավարտել են ասպիրանտուրան կամ ունեն գիտական աստիճան, պարտադիր զինվորական ծառայության են կանչվում ըստ իրենց մասնագիտացումների:

Առողջական վիճակի պատճառով զորակոչիկներին արդյոք տարկետում տրվում է

Առողջական վիճակի պատճառով բուժման կարիք ունեցող զորակոչիկներին պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տրվում է 3 անգամ՝ մինչև 1 տարի ժամանակով: Երրորդ անգամ տրված տարկետման ժամկետը լրանալուց հետո զորակոչիկը բժշկական քննության արդյունքներով կամ ճանաչվում է պիտանի զինվորական ծառայության համար և զորակոչվում է զինվորական ծառայության, կամ ճանաչվում է խաղաղ պայմաններում զինվորական ծառայության համար ոչ պիտանի և հաշվառվում պահեստազորում, կամ ճանաչվում է զինվորական ծառայության համար ոչ պիտանի և հանվում զինվորական հաշվառումից:

Առողջական վիճակի պատճառով պարտադիր զինվորական ծառայության համար ժամանակավորապես ոչ պիտանի զորակոչիկներին զորակոչից տարկետում տրվում է 1 անգամ՝ 3 տարի ժամանակով: Տարկետման ժամկետը լրանալուց հետո զորակոչիկը բժշկական քննության արդյունքներով կամ ճանաչվում է պիտանի զինվորական ծառայության համար և զորակոչվում է զինվորական ծառայության, կամ ճանաչվում է խաղաղ պայմաններում զինվորական ծառայության համար ոչ պիտանի և հաշվառվում պահեստազորում, կամ ճանաչվում է զինվորական ծառայության համար ոչ պիտանի և հանվում զինվորական հաշվառումից:

Ասպիրանտուրայում կամ դատական դպրոցում սովորելու կապակցությամբ տարկետում ստացած և 27 տարեկանից բարձր տարիքում ուսումն ավարտած զորակոչիկներին առողջական վիճակի պատճառով բուժման նպատակով տարկետում կարող է տրվել 1 անգամ՝ մինչև 6 ամիս ժամկետով, իսկ պարտադիր զինվորական ծառայության համար ժամանակավորապես ոչ պիտանի ճանաչելու դեպքում՝ մինչև 1 տարի ժամկետով: Տարկետման ժամկետը լրանալուց հետո զորակոչիկը բժշկական քննության արդյունքներով կամ ճանաչվում է պիտանի զինվորական ծառայության համար և զորակոչվում զինվորական ծառայության, կամ ճանաչվում է խաղաղ պայմաններում զինվորական ծառայության համար ոչ պիտանի և հաշվառվում պահեստազորում, կամ ճանաչվում է զինվորական ծառայության համար ոչ պիտանի եւ հանվում զինվորական հաշվառումից:

Ազգային ժողովի պատգամավորներին, իրենց լիազորությունների ողջ ժամկետում, տրվում է պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում ստանալու իրավունք:

Առանձին դեպքերում կառավարությունը որոշում է քաղաքացիների կատեգորիաներն ու առանձին քաղաքացիներին, որոնց տարկետում է տրվում պարտադիր զինվորական ծառայության զորակոչից:

Պարտադիր զինվորական ծառայության զորակոչն անցկացնելու համար ինչ հանձնաժողովներ են ստեղծվում

Պարտադիր զինվորական ծառայության զորակոչն անցկացնելու համար կառավարության սահմանած կարգով ստեղծվում են զորակոչային հանձնաժողովներ՝ ըստ զինվորական կոմիսարիատների կողմից սպասարկվող տարածքների՝ տեղական, և ըստ մարզերի՝ մարզային (Երևանի քաղաքային):

Տեղական զորակոչային հանձնաժողովների կազմը հաստատում է մարզպետը (Երևանի քաղաքապետը)՝ համապատասխան զինվորական կոմիսարի ներկայացմամբ:

Հանձնաժողովի նախագահ է համարվում զինվորական կոմիսարը:

Տեղական զորակոչային հանձնաժողովները՝

- կազմակերպում են զորակոչիկների բժշկական քննությունը,
- որոշումներ են ընդունում զորակոչի եւ զորակոչիկներին՝ ըստ զորատեսակների զինված ուժերում և այլ զորքերում զինվորական ծառայության ուղարկելու մասին, որոշում են ընդունում և մարզային (Երևանի քաղաքային) զորակոչային հանձնաժողովի հաստատմանն են ներկայացնում զորակոչիկներին՝ ընտանեկան դրության բերումով և ուսումը շարունակելու համար տարկետում տալու վերաբերյալ փաստաթղթերը,
- նախապատրաստման և մարզային (Երևանի քաղաքային) զորակոչային հանձնաժողով են ներկայացնում օրենքով չնախատեսված դեպքերում զորակոչիկներին ընտանեկան դրության բերումով տարկետում տալու վերաբերյալ փաստաթղթերը,
- կայացնում են նախնական եզրակացություն և կենտրոնական բժշկական հանձնաժողով են ներկայացնում զորակոչիկներին բժշկական քննության արդյունքներով տարկետում տալու և պարտադիր զինվորական ծառայությունից ազատելու վերաբերյալ փաստաթղթերը՝ եզրակացության համար,
- քննարկում են ռազմատնտեսական հաստատություններ ընդունելու մասին դիմումները և կայացնում որոշում:

Մարզային (Երևանի քաղաքային) զորակոչային հանձնաժողովները կազմում է կառավարությունը: Հանձնաժողովի նախագահ է համարվում համապատասխան մարզպետը (Երևանի քաղաքապետը):

Մարզային (Երևանի քաղաքային) զորակոչային հանձնաժողովները՝

- համակարգում են տեղական զորակոչային հանձնաժողովների գործունեությունը,
- հաստատում են զորակոչիկներին ընտանեկան դրության բերումով և ուսումը շարունակելու համար տարկետում տալու մասին տեղական զորակոչային հանձնաժողովների որոշումները,

- որոշում են ընդունում զորակոչիկներին ընտանեկան դրության բերումով օրենքով չնախատեսված դեպքերում տարկետում տալու վերաբերյալ և դա ներկայացնում հանրապետական զորակոչային հանձնաժողով:

Տեղական և մարզային (Երևանի քաղաքային) զորակոչային հանձնաժողովների որոշումներն ընդունվում են հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

Զորակոչի ժամանակաշրջանում տեղական և մարզային (Երևանի քաղաքային) զորակոչային հանձնաժողովների աշխատանքը ղեկավարելու և գործունեությունը վերահսկելու համար կառավարությունն ստեղծում է հանրապետական զորակոչային հանձնաժողով:

Հանրապետական զորակոչային հանձնաժողովը՝

- քննարկում է տեղական կամ մարզային (Երևանի քաղաքային) զորակոչային հանձնաժողովների որոշումների վերաբերյալ գանգատները,
- որոշում է ընդունում առողջական վիճակի պատճառով պարտադիր զինվորական ծառայությունից ազատելու, բուժման կամ պարտադիր զինվորական ծառայության համար ժամանակավորապես ոչ պիտանիության կապակցությամբ տարկետում տալու մասին,
- եզրակացություն է տալիս ընտանեկան դրության բերումով՝ օրենքով չնախատեսված դեպքերում տարկետում տալու մասին մարզային (Երևանի քաղաքային) զորակոչային հանձնաժողովների որոշումների վերաբերյալ և ներկայացնում պաշտպանության նախարարին:

Տեղական կամ մարզային (Երևանի քաղաքային) զորակոչային հանձնաժողովի որոշման վերաբերյալ զորակոչիկի կամ այլ անձանց գանգատը, մինչև դրա վերանայումը, չի կասեցնում որոշման կատարումը:

Գանգատների վերաբերյալ որոշումները հանրապետական զորակոչային հանձնաժողովն ընդունում է մեկամսյա ժամկետում՝ ձայների պարզ մեծամասնությամբ:

Հանրապետական զորակոչային հանձնաժողովի որոշումները, դրանց ընդունման օրվանից մեկամսյա ժամկետում, կարող են գանգատարկվել դատարան՝ օրենքով սահմանված կարգով:

Բաժին 12
Զինծառայողների պատասխանատվությունը

Պատասխանատվության ինչ տեսակների կարող են ենթարկվել զինծառայողները

Բոլոր զինծառայողները, անկախ զինվորական կոչումից ու պաշտոնից, հավասար են օրենքի առջև և կրում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիների համար սահմանված պատասխանատվություն՝ հաշվի առնելով նրանց իրավական վիճակի առանձնահատկությունները:

Հասարակական ներգործության միջոցներ կարող են գործադրվել զինվորական կարգապահության և հասարակական կարգի խախտման հետ կապված զանցանքների համար: Զանցանքների քննարկումը կատարվում է. ենթասպաներինը՝ ժողովներում, սպաներինը՝ սպայական ժողովներում: Բացի դրանից, սպաների զանցանքները կարող են քննարկվել պատվո դատարանների կողմից:

Կարգապահական պատասխանատվություն զինծառայողները կրում են Հայաստանի Հանրապետության զինված ուժերի Կարգապահական կանոնադրությամբ սահմանված կարգով՝ զինվորական կարգապահության խախտման համար:

Վարչական պատասխանատվություն զինծառայողները կրում են ընդհանուր հիմունքներով՝ վարչական իրավախախտումների մասին օրենսդրությանը համապատասխան:

Քաղաքացիաիրավական պատասխանատվություն զինծառայողները կրում են քաղաքացիական օրենսդրությամբ նախատեսված պարտականությունները չկատարելու կամ անբարեխիղճ կատարելու, պետությանը, իրավաբանական անձանց, քաղաքացիներին վնաս հասցնելու և օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում:

Նյութական պատասխանատվություն զինծառայողները կրում են զինվորական ծառայության կատարման ժամանակ պետությանը հասցված նյութական վնասի համար՝ զինծառայողների նյութական պատասխանատվության մասին կանոնակարգին համապատասխան:

Քրեական պատասխանատվություն զինծառայողները կրում են հանցագործություն կատարելու համար՝ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսդրությանը համապատասխան:

Թույլ տված իրավախախտումների համար զինծառայողները, որպես կանոն, ենթարկվում են մեկ տեսակի պատասխանատվության:

Իրավախախտում թույլ տալու կապակցությամբ կարգապահական տույժի ենթարկված զինծառայողները չեն ազատվում այդ իրավախախտման համար քրեական պատասխանատվությունից:

Նյութական վնաս պատճառելու հետ կապված իրավախախտում թույլ տալու դեպքում զինծառայողները հատուցում են վնասը, անկախ

պատասխանատվության այլ ձևերի ենթարկվելուց կամ հասարակական ներգործության միջոցների գործադրումից:

Զինծառայողների նկատմամբ հասարակական ներգործության միջոցներ կարող են կիրառվել զինվորական կարգապահության և հասարակական կարգի խախտումների հետ կապված զանցանքների համար:

Պատասխանատվության ենթարկելիս չի թույլատրվում վիրավորել զինծառայողների պատիվն ու արժանապատվությունը:

ՀՀ քրեական օրենսգիրքը պատասխանատվություն նախատեսում է, արդյոք, զինծառայողների համար

Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի բաժին 12-ը, որը նվիրված է զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործություններին, ընդգրկում է համանման անվանումով մեկ գլուխ, որում տեղ գտած հանցագործությունները ոտնձգում են միաբնույթ հասարակական հարաբերությունների դեմ: Այս բաժնում ներկայացված հանցագործությունների սեռային և տեսակային օբյեկտներն այն հասարակական հարաբերություններն են, որոնք առաջանում են զինվորական ծառայության՝ որպես պետական ծառայության հատուկ տեսակի, իրականացման ընթացքում:

ՀՀ Սահմանադրության հոդված 46-ի համաձայն՝ յուրաքանչյուր քաղաքացի պարտավոր է օրենքով սահմանված կարգով մասնակցել Հայաստանի Հանրապետության պաշտպանությանը: ՀՀ զինված ուժերի հզորությունը պայմանավորված է ոչ միայն ժամանակակից զինատեսակներով և տեխնիկայով, այլև զինծառայողների մարտական պատրաստվածությամբ, ընդ որում, այստեղ խոսքը վերաբերում է և՛ ֆիզիկական, և՛ բարոյահոգեբանական (հատկապես՝ հայրենասիրական) պատրաստվածությանը: Շատ կարևոր է նաև զինծառայողների կողմից զինվորական կարգապահության խստիվ պահպանումը: ՀՀ կառավարության 1996թ. օգոստոսի 12-ի թիվ 247 որոշմամբ հաստատված՝ ՀՀ զինված ուժերի կարգապահական կանոնադրության համաձայն՝ զինվորական կարգապահությունը ՀՀ օրենքներով, զինվորական կանոնադրություններով և հրամանատարների (պետերի) հրամաններով սահմանված կարգուկանոնի խստիվ և ճշգրիտ պահպանումն է բոլոր զինծառայողների կողմից, որի նպատակը ոչ թե մարդու իրավունքները սահմանափակելն է, այլ զինծառայողների համախմբվածությունը, մարտական պատրաստվածությունն ապահովելը՝ Հայաստանի Հանրապետության զինված ուժերի առջև ծառացած խնդիրները լուծելու համար: Զինծառայողների մեջ բարձր կարգապահություն դաստիարակելու հիմնական մեթոդը համոզելն է, սակայն սա չի բացառում հարկադրանքի միջոցների կիրառումը նրանց նկատմամբ, ովքեր անբարեխղճորեն են վերաբերվում իրենց զինվորական

պարտքի կատարմանը: Զինվորական կարգապահության խախտումների դեմ պայքարն իրականացվում է ինչպես զինվորական կանոնադրությունների, այնպես էլ քրեական օրենսդրության հիման վրա: Այս պայքարի նպատակը ՀՀ զինված ուժերի մարտունակության բարձրացումն ու ռազմական հզորության ամրապնդումն է:

Որ հանցագործություններն են համարվում զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված

Զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործություններ են համարվում քրեական օրենքով նախատեսված այն հանցագործությունները, որոնք ուղղված են զինվորական ծառայության սահմանված կարգի դեմ և կատարվում են զինծառայողների, ինչպես նաև պահեստազորում ընդգրկված այն քաղաքացիների կողմից, ովքեր անցնում են վարժական հավաքներ:

Քրեական օրենսգիրքը չի սահմանում զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործության հասկացությունը, քանի որ այն դիտարկվում է որպես ընդհանուր հանցագործության հասկացության մասնավոր դրսևորում, և այդ իսկ պատճառով վերջինիս բնորոշ են հանցագործության բոլոր հատկանիշները: Սակայն զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործությունները բնութագրվում են նաև որոշակի առանձնահատկություններով: Դրանք են՝

1. Ոտնձգության առանձնահատուկ օբյեկտը. դա զինվորական ծառայության՝ օրենքներով, զինվորական կանոնադրություններով, կանոնագրքերով, պետերի հրամաններով և այլնով սահմանված կարգն է: Զինվորական ծառայության կարգը ներառում է ռազմահրավական հարաբերությունների բոլոր տեսակները և ծառայության ամբողջ ընթացքում հանդիսանում է բոլոր «զինվորական» հանցագործությունների համար ընդհանուր հանդիսացող օբյեկտ: Ըստ անմիջական օբյեկտի՝ զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված բոլոր հանցագործությունները բաժանվում են որոշակի խմբերի, որոնք էլ կազմում են այս տիպի հանցագործությունների համակարգը:

2. Զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործությունների օբյեկտիվ կողմն առանձնահատուկ չէ և դրսևորվում է արարքի (գործողության) կատարմամբ կամ անգործությամբ: Որոշ հանցակազմերի առաջացման համար պարտադիր է վնասակար հետևանքների առաջացումը: Նման դեպքերում անհրաժեշտ է պարզել պատճառական կապի առկայությունը կատարված արարքի և առաջացած հետևանքների միջև:

3. Հանցագործության հատուկ սուբյեկտը. ՀՀ քր. օր.-ի հոդված 356-ի 5-րդ մասի համաձայն՝ զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործությունների սուբյեկտներն են ՀՀ զինված ուժերում,

ՀՀ այլ զորքերում զորակոչի հիման վրա կամ պայմանագրով զինվորական ծառայություն անցնող անձինք, ինչպես նաև ռազմական հավաքներ անցնելու ժամանակ՝ զինապարտները:

4. Զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործությունների սուբյեկտիվ կողմը բնութագրվում է ինչպես դիտավորությամբ, այնպես էլ անզգուշությամբ: Մի շարք հանցակազմերում սուբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ է հանցագործության շարժառիթը կամ նպատակը (օրինակ՝ դասալքության դեպքում՝ զինվորական ծառայությունից վերջնականապես խուսափելու նպատակը):

Քանի խմբի են դասակարգվում զինվորական կարգի դեմ ուղղված հանցագործությունները

Զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործությունները դասակարգվում են հետևյալ խմբերի՝

1. ***Զինվորական ենթակայության կարգի և զինծառայողների կանոնագրքային փոխհարաբերությունների դեմ ուղղված հանցագործություններ:*** Այս խմբին են պատկանում՝

ա. հրամանը չկատարելը (քր. օր.-ի հոդված 356),

բ. պետին դիմադրելը կամ նրան զինվորական ծառայության պարտականությունները խախտելուն հարկադրելը (քր. օր.-ի հոդված 357),

գ. պետի նկատմամբ բռնի գործողություններ կատարելը (քր. օր.-ի հոդված 358),

դ. զինծառայողների փոխհարաբերությունների կանոնագրքային կանոնները խախտելը նրանց միջև ստորադասության հարաբերությունների բացակայության դեպքում (քր. օր.-ի հոդված 359),

ե. զինծառայողին վիրավորանք հասցնելը (քր. օր.-ի հոդված 360):

2. Զինվորական ծառայություն անցնելու կարգի դեմ ուղղված հանցագործություններ: Այս խմբին են պատկանում այն հանցագործությունները, որոնք ուղղված են զինվորական ծառայությունից այս կամ այն կերպ խուսափելուն: Դրանք են՝

ա. զորամասը կամ ծառայության վայրն ինքնակամ թողնելը (քր. օր.-ի հոդված 361),

բ. դասալքությունը (քր. օր.-ի հոդված 362),

գ. անդամախեղելու, հիվանդության սիմուլյացիայի կամ ապօրինի այլ եղանակով զինվորական ծառայությունից խուսափելը (քր. օր.-ի հոդված 363),

դ. զինվորական ծառայության պարտականությունները կատարելուց հրաժարվելը (քր. օր.-ի հոդված 364):

3. Ռազմական գույքն օգտագործելու և պահպանելու կարգի դեմ ուղղված հանցագործություններ: Այս խմբի մեջ են մտնում հետևյալ հանցագործությունները՝

ա. ռազմական գույքը դիտավորությամբ ոչնչացնելը կամ վնասելը (քր. օր.-ի հոդված 369),

բ. ռազմական գույքն անզգուշությամբ ոչնչացնելը կամ վնասելը (քր. օր.-ի հոդված 370),

գ. ռազմական գույքը վատնելը (քր. օր.-ի հոդված 371),

դ. ռազմական գույքը կորցնելը կամ փչացնելը (քր. օր.-ի հոդված 372):

4. Զենքի, ռազմամթերքի, ինչպես նաև շրջապատի համար առավել վտանգ ներկայացնող առարկաների, նյութերի հետ վարվելու կանոնների խախտման հետ կապված հանցագործություններ: Այս խմբում ընդգրկված են հետևյալ հանցագործությունները՝

ա. զենքի, ռազմամթերքի և շրջապատի համար առավել վտանգ ներկայացնող առարկաների, նյութերի հետ վարվելու կանոնները խախտելը (քր. օր.-ի հոդված 373),

բ. զենքը, ռազմամթերքը, ռազմական այլ գույքը, ինչպես նաև շրջապատի համար առավել վտանգ ներկայացնող նյութերը կամ առարկաները մեկ ուրիշին հանձնելը (քր. օր.-ի հոդված 374):

*5. **Ռազմական տեխնիկայի շահագործման կարգի դեմ ուղղված հանցագործություններ:*** Զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործությունների այս խմբին են պատկանում՝

ա. մեքենաներ վարելու կամ շահագործելու կանոնները խախտելը (քր. օր.-ի հոդված 377),

բ. թռիչքների կամ դրանց նախապատրաստման կանոնները խախտելը (քր. օր.-ի հոդված 378):

6. Հատուկ ծառայություններ կրելու կարգի դեմ ուղղված հանցագործություններ: Դրանք են՝

ա. մարտական հերթապահություն կամ մարտական ծառայություն կրելու կանոնները խախտելը (քր. օր.-ի հոդված 365),

բ. սահմանապահ ծառայություն կրելու կանոնները խախտելը (քր. օր.-ի հոդված 366),

գ. պահակային կամ կայազորային ծառայության կանոնագրքային կանոնները խախտելը (քր. օր.-ի հոդված 367),

դ. ներքին ծառայության կանոնագրքային կանոնները խախտելը (քր. օր.-ի հոդված 368):

7. Զինվորական պաշտոնեական հանցագործություններ: Այս խմբում ընդգրկված հանցագործություններն են՝

ա. իշխանությունը չարաշահելը, իշխանազանցությունը կամ իշխանության անգործությունը (քր. օր.-ի հոդված 375),

բ. անփույթ վերաբերմունքը ծառայության նկատմամբ (քր. օր.-ի հոդված 376):

8. Հատուկ պայմաններում զինվորական պարտքի կատարման կարգի դեմ ուղղված հանցագործություններ: Դրանք են՝

ա. մարտ վարելու միջոցները հակառակորդին հանձնելը կամ թողնելը (քր. օր.-ի հոդված 379),

բ. մարտադաշտն ինքնակամ լքելը կամ զենքով գործելուց հրաժարվելը (քր. օր.-ի հոդված 380),

գ. կամովին գերի հանձնվելը (քր. օր.-ի հոդված 381),

դ. հանցավոր գործողությունները գերության մեջ գտնվող զինծառայողի կողմից (քր. օր.-ի հոդված 382),

ե. դիակապտությունը (քր. օր.-ի հոդված 383):

Ինչ է սահմանում ՀՀ քրեական օրենսգրքի 356-րդ հոդվածը

ՀՀ քր. օր.-ի հոդված 356-ի առաջին մասում հրամանը չկատարելը բնորոշվում է հետևյալ կերպ. «Պետի՝ օրինական և սահմանված կարգով տրված հրամանը ստորադասի կողմից չկատարելը, որն էական վնաս է պատճառել ծառայության շահերին»:

Այս հանցագործության անմիջական օբյեկտը զինվորական ենթակայության կարգն է, որը սահմանվում է օրենքներով, զինվորական կանոնադրություններով, կանոնագրքերով: Քննարկվող հանցագործությունը զինվորական ենթակայության կարգի դեմ ուղղված ամենավտանգավոր հանցագործություններից մեկն է: Այս հանցագործությամբ խախտվում է զինված ուժերի կազմակերպման և գործունեության այնպիսի կարևոր սկզբունք, ինչպիսին է միանձնյա ղեկավարումը: Պետի հրամանը ստորադասի համար օրենք է և պետք է կատարվի անվերապահորեն ու ժամանակին:

Պետն այն անձն է, ում մշտապես կամ ժամանակավորապես ենթակա են այլ զինծառայողները: ՀՀ զինված ուժերի ներքին ծառայության կանոնագրքի համաձայն՝ պետերը, որոնց զինծառայողները ենթարկվում են ծառայության բերումով, թեկուզ և՝ ժամանակավորապես, համարվում են ուղղակի պետեր, իսկ ենթակային ամենամոտ ուղղակի պետը կոչվում է անմիջական պետ:

Հրամանը պետի կողմից կոնկրետ ստորադասին կամ ստորադասների խմբին ուղղված պարտադիր պահանջն է՝ կատարելու կամ չկատարելու այս կամ այն գործողությունը: Հրամանը կարող է տրվել գրավոր, բանավոր, ինչպես նաև կապի տեխնիկական միջոցներով: Եթե ծառայության կոնկրետ խնդիրների լուծման համար սահմանված է հրաման տալու միայն գրավոր ձև (օրինակ՝ ֆինանսական միջոցների տնօրինման կապակցությամբ), ապա այս դեպքում բանավոր կամ այլ կերպ տրված հրամանը չկատարելը քրեական պատասխանատվություն չի առաջացնում: Հրամանից պետք է տարբերել այն պահանջները, որոնք նախատեսված են զինվորական կանոնադրություններում ու կանոնագրքերում

և ուղղված են զինծառայողների անորոշ շրջանակի: Այս նորմերի խախտումները կարող են քրեական պատասխանատվություն առաջացնել քրեական օրենսգրքի այլ հոդվածներով (օրինակ՝ մարտական հերթապահություն կամ մարտական ծառայություն կրելու կանոնները խախտելը):

Հոդվածի երկրորդ մասով որպես ծանրացնող հանգամանք նախատեսված է. «նույն արարքը, որը կատարվել է մի խումբ անձանց կողմից, կամ առաջացրել է ծանր հետևանքներ»:

Ծանր հետևանքներ ասելով՝ պետք է հասկանալ մարդու մահ կամ առողջությանը ծանր վնաս պատճառելը կամ մի քանի անձանց առողջությանը տարբեր աստիճանի վնաս պատճառելը, ռազմական գույքի և տեխնիկայի ոչնչացումը կամ վնասումը, խոշոր գույքային վնասները, ինչպես նաև նախատեսված ռազմական միջոցառումների (զորավարժություններ, շքերթներ և այլն) խափանումը և այլն:

Ինչ է սահմանում ՀՀ քրեական օրենսգրքի 357-րդ հոդվածը

ՀՀ քր. օր.-ի հոդված 357-ի առաջին մասը պատասխանատվություն է սահմանում պետին, ինչպես նաև զինվորական ծառայության գծով նրա պարտականությունները կատարող այլ անձին դիմադրելու կամ նրան այդ պարտականությունները խախտելուն հարկադրելու համար, որը զուգորդվել է բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով:

Այս հանցագործությունը դրսևորվում է հետևյալ արարքների կատարմամբ՝

Պետին, ինչպես նաև զինվորական ծառայության գծով նրա պարտականությունները կատարող անձին դիմադրելը:

1. Նշված անձանց իրենց ծառայողական պարտականությունները խախտելուն հարկադրելը:

Դիմադրելն արտահայտվում է նրանում, որ ստորադաս զինծառայողը բացահայտ խոչընդոտում է պետին կամ նրա պարտականությունները կատարող անձին (այսուհետ՝ պետին) իրականացնելու զինվորական ծառայության հետ կապված օրինական իրավունքներն ու պարտականությունները, թույլ չի տալիս նրանց կոնկրետ իրադրությունում գործել օրենքներին և զինվորական կանոնագրքերին համապատասխան: Նման գործողություններին շատ հաճախ նախորդում են ստորադաս զինծառայողի կողմից այս կամ այն խախտումները, և դիմադրությունը վերջինս ցույց է տալիս՝ ի պատասխան պետի նախազգուշացումների, դիտողությունների կամ այլ օրինական արարքների:

Բռնությունը կարող է դրսևորվել անձին ծեծելով, խոշտանգելով, առողջությանը թեթև, միջին ծանրության կամ ծանր վնաս պատճառելով: Եթե բռնության գործադրման արդյունքում անձի առողջությանը դիտավորությամբ պատճառվել է միջին ծանրության կամ ծանր վնաս, ապա

արարքը պետք է որակվի քննարկվող հոդվածի երկրորդ մասի 3-րդ կետով: Եթե քննարկվող հանցագործության ժամանակ գործադրված բռնության արդյունքում անձը զրկվի կյանքից, ապա արարքը պետք է որակվի հանցագործությունների համակցությամբ՝ քննարկվող հոդվածով և քր. օր.-ի հոդված 104-ով:

Հոդված 357-ի երկրորդ մասում նախատեսված են հետևյալ ծանրացնող հանգամանքները, այն է՝ արարքի կատարումը՝

- մի խումբ անձանց կողմից,
- զենք գործադրելով,
- առողջությանը միջին ծանրության կամ ծանր վնաս կամ այլ ծանր հետևանքներ պատճառելով:

Այստեղ մի խումբ անձանց կողմից հանցանքը կատարելու հասկացությունը համընկնում է նախորդ հանցակազմում քննարկված խմբի հասկացությանը:

Զենքը կենդանի նշանակակետ խոցելու համար նախատեսված ցանկացած հարմարանքն է: Դա կարող է լինել ինչպես մարտական, այնպես էլ ցանկացած ուրիշ զենք, ինչպես հրազեն, այնպես էլ սառը զենք (ֆինական դանակ, կաստետ, սվին և այլն):

Հոդվածի երրորդ մասում որպես ծանրացնող հանգամանք նախատեսված է առաջին կամ երկրորդ մասով նախատեսված արարքների կատարումը ռազմական դրության, պատերազմի ժամանակ կամ մարտի պարագաներում:

Ինչ է սահմանում ՀՀ քրեական օրենսգրքի 358-րդ հոդվածը

ՀՀ քր. օր.-ի հոդված 358-ը պատասխանատվություն է նախատեսում զինվորական ծառայության պարտականությունները կատարելու կապակցությամբ պետին ծեծելու կամ նրա նկատմամբ այլ բռնություն գործադրելու համար:

Այս հանցագործությունը դրսևորվում է հետևյալ արարքների կատարմամբ՝

1. պետին ծեծելը,
2. նրա նկատմամբ այլ բռնություն գործադրելը:

Ծեծի հասկացությունը տրված է «Կյանքի և առողջության դեմ ուղղված հանցագործություններ» գլխում:

Այլ բռնություն ասելով՝ հասկանում ենք պետին խոշտանգելը, նրա առողջությանը թեթև վնաս հասցնելը: Եթե բռնությունը դրսևորվում է առևանգելով, ազատությունն ապօրինի սահմանափակելով, ապա արարքը պետք է որակվի համակցությամբ: Ընդ որում, այս արարքները պետք է կատարվեն՝ կապված պետի կողմից զինվորական ծառայության պարտականությունները կատարելու հետ: Այս հանցագործությունը կարող է

կատարվել ինչպես պետի կողմից իր պարտականությունները կատարելու ընթացքում, այնպես էլ դրանից հետո (հնարավոր է այս գործողությունների կատարումը նաև զորամասից դուրս):

Հոդվածի երկրորդ մասով նախատեսված են հետևյալ ծանրացնող հանգամանքները, այն է՝ արարքի կատարումը՝

1. մի խումբ անձանց կողմից,
2. զենք գործադրելով,
3. առողջությանը միջին ծանրության կամ ծանր վնաս կամ այլ ծանր հետևանքներ պատճառելով:

ՀՀ քր. օր.-ի հոդված 358-ի երրորդ մասը որպես ծանրացնող հանգամանք նախատեսում է առաջին երկու մասերով նախատեսված արարքների կատարումը ռազմական դրության, պատերազմի ժամանակ կամ մարտի պարագաներում: Վերը նշված ծանրացնող հանգամանքներին անդրադարձել ենք նախորդ հոդվածները քննարկելիս:

Ինչ է սահմանում ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածը

Քր. օր.-ի հոդված 359-ը պատասխանատվություն է սահմանում զինծառայողների փոխհարաբերությունների կանոնագրքային կանոնները նրանց միջև ստորադասության հարաբերությունների բացակայության դեպքում խախտելու համար, որն արտահայտվել է անձի պատիվն ու արժանապատվությունը ստորացնելով, նրան ծաղրուծանակի ենթարկելով կամ հալածելով կամ զուգորդվել է բռնություն գործադրելով:

Այս հոդվածում նախատեսված արարքը դրսևորվում է հետևյալ արարքներից որևէ մեկի կատարմամբ՝

1. զինծառայողի պատիվն ու արժանապատվությունը ստորացնելն,
2. զինծառայողին ծաղրուծանակի կամ հալածանքի ենթարկելը,
3. զինծառայողի նկատմամբ բռնություն գործադրելը:

Զինծառայողի պատիվն ու արժանապատվությունն ստորացնելը ոչ այլ ինչ է, քան վիրավորանք, որը նախատեսված է ՀՀ քր. օր.-ի հոդված 136-ով: Սակայն այստեղ առանձնահատկությունն այն է, որ վիրավորանքն անձին հասցվում է նրա կողմից զինվորական ծառայության պարտականությունները կատարելու ընթացքում կամ կապված նրա ծառայողական գործունեության հետ: Ծաղրուծանակը ևս ներառվում է վիրավորանքի հասկացության ներքո, իսկ հալածանքը ենթադրում է բռնության, սեռական անձեռնմխելիությունը խախտելու, ազատությունից զրկելու և այլ անբարենպաստ հետևանքներ առաջացնելու սպառնալիքներ: Բռնությունը կարող է դրսևորվել ծեծով, խոշտանգմամբ, իսկ այլ բռնությունը՝ ապօրինի ազատությունից զրկելով, սեռական բնույթի բռնի գործողություններ կատարելով (մեր կարծիքով, սեռական բնույթի բռնի գործողությունների կատարումը դուրս է այս հանցագործության շրջանակներից ու պետք է

առանձին որակվի քր. օր.-ի հոդված 139-ով), ինչպես նաև բռնի կերպով զինծառայողի համազգեստը, ուտելիքը վերցնելով և այլն: Այս հանցագործությունը կարող է կատարվել ինչպես զորամասի տարածքում, այնպես էլ դրա տարածքից դուրս, ինչպես բուն ծառայության ընթացքում, այնպես էլ հանգստի ժամանակ:

Հոդվածի երկրորդ մասով նախատեսված են հետևյալ ծանրացնող հանգամանքները, այն է՝ արարքի կատարումը՝

1. երկու կամ ավելի անձանց նկատմամբ,
2. մի խումբ անձանց կողմից,
3. զենք կամ մարմնական վնասվածքներ պատճառելու համար հատուկ հարմարեցված այլ առարկաներ գործադրելով,
4. անձի առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելով:

Երկու կամ ավելի անձանց նկատմամբ. արարքն այս ծանրացնող հանգամանքով որակելու համար պարտադիր չէ, որ այն միաժամանակ երկու կամ ավելի անձանց նկատմամբ կատարվի: Արարքը երկու կամ ավելի անձանց նկատմամբ կարող է կատարվել տարբեր ժամանակահատվածներում, բայց անհրաժեշտ է, որ դրանց նկատմամբ հանցավորը դրսևորի միասնական դիտավորություն: Հաճախ արարքը կարող է պարբերական բնույթ կրել, երբ հանցավորը, ամեն անգամ հանդիպելով տարբեր զինծառայողների, նրանց նկատմամբ բռնություն է գործադրում:

Մի խումբ անձանց կողմից արարքի կատարումը բացատրվել է այլ հանցագործությունների քննարկման ժամանակ:

Հոդվածի չորրորդ մասում որպես որակյալ հանգամանք նախատեսված է առաջին, երկրորդ կամ երրորդ մասում նախատեսված արարքների կատարումը ռազմական դրության, պատերազմի ժամանակ կամ մարտի պարագաներում:

Ինչ է սահմանում ՀՀ քրեական օրենսգրքի 360-րդ հոդվածը

ՀՀ քր. օր.-ի հոդված 360-ում ներկայացված են երկու հանցակազմեր, որոնցից առաջինը վերաբերում է զինծառայողի կողմից զինծառայողին վիրավորելուն, իսկ երկրորդը՝ ստորադրյալի կողմից պետին կամ պետի կողմից ստորադրյալին վիրավորելուն, որը կատարվել է զինվորական ծառայության պարտականությունները կատարելու կապակցությամբ:

Քննարկվող հոդվածի առաջին մասի դիսպոզիցիան ձևակերպված է հետևյալ կերպ՝ «Զինծառայողին վիրավորանք հասցնելը՝ զինվորական ծառայության պարտականությունները կատարելու կապակցությամբ զինծառայողի պատիվն ու արժանապատվությունն անպարկեշտ ձևով ստորացնելը մեկ այլ զինծառայողի կողմից»:

Այս արարքի կատարումը կոպիտ կերպով խախտում է զինվորական ենթակայության կարգը և կասկածի տակ է դնում զինվորական ծառա-

յության խնդիրների պատշաճ իրականացումը: Կարևոր է այն հանգամանքը, որ այստեղ հավասար պատասխանատվություն է սահմանվում ինչպես ստորադրյալի կողմից՝ պետին, այնպես էլ պետի կողմից ստորադրյալին զինվորական ծառայության պարտականությունները կատարելու կապակցությամբ վիրավորելու համար, ինչը վկայում է պետության կողմից զինվորական ծառայության սահմանված կարգը խախտող յուրաքանչյուր անձի նկատմամբ հավասար և խիստ վերաբերմունքի մասին:

Օբյեկտիվ կողմից քր. օր.-ի հոդված 360-ի երկրորդ մասում նկարագրված հանցագործությունը դրսևորվում է զինծառայողի կողմից ցանկացած եղանակով մեկ այլ զինծառայողի վիրավորելով՝ նրանց միջև ստորադասության հարաբերությունների առկայության պարագայում: Վիրավորանքը կարող է հասցվել այլ զինծառայողների բացակայությամբ կամ ներկայությամբ, ինչպես անձամբ զինծառայողի, այնպես էլ այլ անձանց մոտ տվյալ զինծառայողի պատիվն ու արժանապատվությունը ստորացնելու միջոցով և այլն:

Ինչ է սահմանում ՀՀ քրեական օրենսգրքի 361-րդ հոդվածը

/Զորամասը կամ ծառայության վայրն ինքնակամ թողնելը)

Զորամասի մարտական պատրաստության ապահովման համար կարևոր է, որ զինծառայողը միշտ գտնվի ծառայության վայրում, կատարի պետի հրամանը, հանդիսանա ռազմահրավական հարաբերությունների սուբյեկտ: ՀՀ զինված ուժերի ներքին ծառայության կանոնագիրքը սահմանում է, որ գնդի (զորամասի) բոլոր շինություններն ու ամբողջ տարածքը բաժանում է գնդի (զորամասի) հրամանատարը: Զորամասի տարածքն ընդգրկում է զորանոցները, վրանները, այլ կառույցները, ուր մշտապես կամ ժամանակավորապես տեղակայվում և ծառայություն են անցնում զինծառայողները: Ժամկետային ծառայության զինծառայողները տեղավորվում են զորանոցներում, իսկ պայմանագրով ծառայության ընդունված սպաներն ու ենթասպաները, ինչպես նաև զինվորներն ու սերժանտները տեղավորվում են՝ ընտանիքավորները՝ գնդից դուրս, իսկ ընտանիք չունեցողները կարող են տեղավորվել գնդի տարածքում գտնվող հանրակացարաններում կամ զորանոցի առանձին շինություններում (սենյակներում):

Այս հանցագործությունը դրսևորվում է հետևյալ արարքներից որևէ մեկի կատարմամբ՝

1. զորակոչի կամ պայմանագրային հիմունքներով զինվորական ծառայության անցնող զինծառայողի կողմից զորամասը կամ ծառայության վայրն ինքնակամ թողնելը,
2. առանց հարգելի պատճառների ժամանակին ծառայության չներկայանալը:

Զորամասը կամ ծառայության սահմանված վայրը կարելի է թողնել միայն հրամանատարի (պետի) թույլտվությամբ: Այս դեպքում զինծառայողին տրվում է պետի ստորագրությամբ արձակման գրություն: Այս հանցակազմը բացակայում է այն դեպքում, երբ զինծառայողը թողել է ծառայության վայրը պետի թույլտվությամբ, եթե անգամ այդ պետը նման թույլտվություն տալու իրավունք չի ունեցել:

Զորամասից արձակվելիս, նշանակվելիս, գործուղումից, արձակուրդից կամ բուժական հաստատությունից առանց հարգելի պատճառների չներկայանալն առկա է այն դեպքում, երբ օրինական հիմքերով ծառայության վայրից բացակայող զինծառայողը ժամանակին չի վերադառնում ծառայության վայր, ընդ որում, նրա նման վարքագիծը չպետք է ունենա հարգելի պատճառներ: Հարգելի պատճառների տակ այստեղ նկատի է առնվում՝

1. զինծառայողի կամ մերձավորի այնպիսի հիվանդությունը, որի պատճառով նա օբյեկտիվորեն չի կարողացել ժամանակին ներկայանալ,
2. անհաղթահարելի ուժը (տարերային աղետ, տրանսպորտի աշխատանքի գրաֆիկի խախտում և այլն),
3. ծայրահեղ անհրաժեշտությունը, ինչպես նաև այն դեպքերը, երբ զինծառայողը մասնակցել է հանցանք կատարած անձին բռնելուն կամ պահի թելադրանքով մասնակցել է հասարակական կարգի պաշտպանությանը:

Հոդվածի առաջին մասով նախատեսված հանցակազմի առկայության համար անհրաժեշտ է, որ զինծառայողը բացակայի զորամասից կամ առանց հարգելի պատճառների ծառայության չներկայանա երեք օրից ավելի, բայց մեկ ամսից պակաս ժամկետով կամ նույն արարքները կատարի երեք ամսվա ընթացքում երեք և ավելի անգամ՝ մեկից երեք օր տևողությամբ: Զորամասը կամ ծառայության վայրն ինքնակամ թողնելու պահը համարվում է զինծառայողի այնտեղից դուրս գալու պահը, իսկ առանց հարգելի պատճառների ծառայության չներկայանալու պահ է համարվում սահմանված ժամկետում զորամաս կամ սահմանված ծառայության վայր չներկայանալու պահը:

Հոդվածի երկրորդ մասում որպես ծանրացնող հանգամանք նախատեսված է նույն արարքի կատարումը պատիժը կարգապահական գումարտակում կրող զինծառայողի կողմից:

Հոդվածի երրորդ մասը նախատեսում է ավելի խիստ պատասխանատվություն սպայի կամ ենթասպայի կողմից հոդվածի առաջին մասով նախատեսված արարքների կատարման համար: Նշված անձինք պետք է ծառայության ժամանակ գտնվեն զորամասում և կատարեն իրենց պարտականությունները՝ օրվա վերակարգի համաձայն: Այս զինծառայողները զորամասի տարածքից առանց թույլտվության կարող են դուրս գալ միայն օրվա վերակարգով սահմանված ծառայության ժամկետից հետո,

իսկ մինչ այդ սպաները և ենթասպաները կարող են թողնել ծառայության վայրը միայն հրամանատարի (պետի) թույլտվությամբ:

Հոդվածի չորրորդ մասով որպես ծանրացնող հանգամանք նախատեսվում է հոդվածի առաջին, երկրորդ և երրորդ մասերով նախատեսված արարքների կատարումը մեկ ամսից ավելի ժամկետով, բայց զինվորական ծառայությունից ժամանակավորապես խուսափելու նպատակով: Այստեղ որոշիչ հանգամանք է հանդիսանում ծառայությունից խուսափելու նպատակը, որը պետք է լինի ժամանակավորապես: Եթե զինծառայողը ծառայությունից խուսափում է վերջնականապես, ապա առկա է դասալքության հանցակազմը:

Հոդվածի հինգերորդ մասով որպես ծանրացնող հանգամանք նախատեսված է առաջին, երկրորդ, երրորդ, չորրորդ մասերով նախատեսված արարքների կատարումը մի խումբ անձանց կողմից՝ նախնական համաձայնությամբ: Քրեական օրենսգրքի հոդված 41-ի երկրորդ մասի համաձայն՝ հանցանքը համարվում է մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ կատարված, եթե դրան մասնակցել են այնպիսի համակատարողներ, ովքեր նախապես՝ մինչև հանցագործությունն սկսելը, պայմանավորվել են հանցանքը համատեղ կատարելու մասին:

Հոդվածի վեցերորդ մասով որպես ծանրացնող հանգամանք նախատեսվում է հոդվածի առաջին, երկրորդ, երրորդ կամ չորրորդ մասով նախատեսված արարքների կատարումը ռազմական դրության, պատերազմի ժամանակ կամ մարտի պարագաներում: Այս մասին խոսվել է զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործությունների առաջին պարագրաֆում:

Հոդվածի յոթերորդ մասում նախատեսված է, որ հոդվածի առաջին, երկրորդ, երրորդ կամ չորրորդ մասով նախատեսված արարքներն առաջին անգամ կատարած զինծառայողը կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից, եթե դրանք կատարել է ծանր հանգամանքների զուգորդման հետևանքով կամ ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե նա ծառայությունից խուսափելու պահից երեք օրվա ընթացքում մեղայականով ներկայացել է զորամաս, ծառայության վայր, իրավապահ կամ պետական այլ մարմիններ:

Ինչ է սահմանում ՀՀ քրեական օրենսգրքի 362-րդ հոդվածը

(Դասալքությունը)

ՀՀ քր. օր.-ի հոդված 362-ում դասալքությունը բնորոշվում է որպես զինվորական ծառայությունից վերջնականապես խուսափելու նպատակով զորամասը կամ ծառայության վայրն ինքնակամ թողնելը, ինչպես նաև նույն նպատակով ծառայության չներկայանալը: Պետք է նշել, որ

դասալքությունը զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված ամենավտանգավոր հանցագործություններից մեկն է: Այս հանցագործությամբ զինծառայողն իր առջև նպատակ է դնում խուսափել զինվորական ծառայության սահմանադրական պարտականությունից: Նա ոչ թե չի ցանկանում կատարել զինվորական ծառայության այս կամ այն պարտականությունը, ոչ թե խուսափում է ծառայությունը կրել տվյալ զորամասում, այլ ընդհանրապես հրաժարվում է ծառայել զինված ուժերում:

Դասալքության ***օբյեկտիվ կողմը*** ոչնչով չի տարբերվում զորամասը կամ ծառայության վայրն ինքնակամ թողնելու օբյեկտիվ կողմից: Այն նույնպես դրսևորվում է նրանում, որ զինծառայողը ինքնակամ թողնում է ծառայության վայրը, ինչպես նաև զորամասից արձակվելիս, նշանակվելիս, գործուղումից, արձակուրդից կամ բուժական հաստատությունից ծառայության չի ներկայանում:

Հոդվածի երկրորդ մասում որպես ծանրացնող հանգամանք նախատեսված է քննարկվող հոդվածի առաջին մասով նախատեսված արարքի կատարումը ծառայության համար վստահված զենքով կամ մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ, կա՛մ մարտական հերթապահություն կատարող զինծառայողի կողմից:

Մարտական հերթապահությունն իրականացվում է Հայաստանի Հանրապետության վրա անակնկալ հարձակումը ժամանակին հայտնաբերելու և դրան դիմակայելու, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության անվտանգությունն ապահովելու նպատակով: Ինքնին հասկանալի է, որ մարտական հերթապահություն կատարող զինծառայողի դասալքությունն ավելի վտանգավոր է, քանզի ուղղակիորեն սպառնում է ՀՀ անվտանգությանը:

Հոդվածի երրորդ մասը որպես ծանրացնող հանգամանք նախատեսում է դասալքությունը, որը կատարվել է ռազմական դրության, պատերազմի ժամանակ կամ մարտի պարագաներում:

Ինչ է սահմանում ՀՀ քրեական օրենսգրքի 363-րդ հոդվածը

(Անդամախեղելու, հիվանդության սիմուլյացիայի կամ ապօրինի այլ եղանակով զինվորական ծառայությունից խուսափելը)

ՀՀ քր. օր-ի հոդված 363-ի առաջին մասը պատասխանատվություն է սահմանում իրեն որևէ վնասվածք պատճառելու (անդամախեղելու), հիվանդության սիմուլյացիայի, կեղծ փաստաթղթեր օգտագործելու կամ խաբեության այլ միջոցով կամ ապօրինի այլ եղանակով զինծառայողի կողմից զինվորական ծառայության պարտականությունները կատարելուց ժամակավորապես խուսափելու համար: Այս հանցագործությունը բավականաչափ տարածված է և հանդիսանում է զինվորական ծառա-

յություն անցնելու կարգի դեմ ուղղված ամենավտանգավոր հանցագործություններից մեկը:

Նշված հանցագործության ***օբյեկտիվ կողմը*** դրսևորվում է հետևյալ արարքներից որևէ մեկի կատարմամբ՝

1. զինվորական ծառայության պարտականությունները կատարելուց ժամանակավորապես խուսափելը զինծառայողի կողմից իրեն վնասվածք պատճառելու (անդամախեղելու) միջոցով,

2. զինվորական ծառայության պարտականությունները կատարելուց ժամանակավորապես խուսափելը, որը կատարվում է զինծառայողի կողմից հիվանդության սիմուլյացիայի միջոցով,

3. զինվորական ծառայության պարտականությունները կատարելուց ժամանակավորապես խուսափելը, որը կատարվում է զինծառայողի կողմից կեղծ փաստաթղթեր օգտագործելու կամ խաբեության այլ միջոցով կամ ապօրինի այլ եղանակով:

Զինծառայողի կողմից իրեն որևէ վնասվածք պատճառելու միջոցով զինվորական ծառայության պարտականությունները կատարելուց խուսափելը կարող է կատարվել ցանկացած օրգանին վնաս պատճառելով, որը կարող է խոչընդոտել վերջինիս կողմից զինվորական ծառայության պարտականությունները կատարելուն:

Փաստորեն զինծառայողն իրեն վնաս հասցնելով՝ արհեստականորեն ստեղծում է այնպիսի պայմաններ, որոնք անհնարին են դարձնում նրա հետագա ծառայությունը: Իրեն վնասվածք պատճառել նշանակում է նաև զինծառայողի կողմից դիտավորյալ որևէ վարակիչ հիվանդությամբ վարակվելը:

Հիվանդության սիմուլյացիայի դեպքում զինծառայողն իրեն հիվանդ է ձևացնում, երբ իրականում նա հիվանդ չէ կամ հիվանդ է, բայց ոչ այն աստիճանի, ինչ ցույց է տալիս (ագռավացիա): Նա այդ անում է զինվորական ծառայության պարտականությունները կատարելուց խուսափելու նպատակով:

Կեղծ փաստաթղթեր օգտագործելու միջոցով զինվորական ծառայության պարտականություններից ազատվելը դրսևորվում է նրանում, որ զինծառայողն օգտագործում է իր կամ այլ անձանց կողմից կեղծված փաստաթղթերը: Կեղծ փաստաթղթերը կարող են լինել ամենատարբեր բնույթի:

Խաբեության այլ միջոցով կամ ապօրինի այլ եղանակով զինվորական ծառայության պարտականություններից խուսափելը դրսևորվում է նրանում, որ զինծառայողը բանավոր կամ գրավոր կերպով սուտ տեղեկություններ է հայտնում այն մարմիններին կամ անձանց, որոնք կարող են ազատել նրան ծառայության պարտականություններից կամ այլ ապօրինի եղանակով փորձում է ազատվել այդ պարտականություններից: Հնարավոր է նաև, որ զինծառայողը չհայտնի կարևոր տեղեկություններ,

որոնք նա պարտավոր էր հայտնել: Ամեն դեպքում, այս բոլորը նա կատարում է մի նպատակով՝ խուսափել զինվորական ծառայության պարտականությունները կատարելուց:

Ինչ է սահմանում ՀՀ քրեական օրենսգրքի 364-րդ հոդվածը

(Զինվորական ծառայության պարտականությունները կատարելուց հրաժարվելը)

Քրեական օրենսգրքի հոդված 364-ը պատասխանատվություն է նախատեսում զինվորական ծառայությունից կամ դրա առանձին պարտականությունները կատարելուց զինծառայողի հրաժարման համար, որը զուգորդվել է այդ պարտականությունների փաստացի դադարեցմամբ:

Հանցագործությունը դրսևորվում է նրանում, որ զինծառայողը բացահայտ, առանց խաբեության կամ կեղծիքի, գրավոր, բանավոր կամ այլ կերպով հայտարարում է այն մասին, որ ինքը չի ցանկանում զինվորական ծառայություն անցնել կամ հրաժարվում է դրա հետ կապված առանձին պարտականությունների կատարումից (օրինակ՝ զենք վերցնել, զինվորական երդում տալ և այլն), և փաստացի դադարեցնում է դրանց կատարումը: Զինվորական ծառայության պարտականությունները կրելուց հրաժարվելը հնարավոր է երկու ձևով՝

1. Զինծառայողը բացահայտ հայտարարում է այդ մասին և փաստացի դադարեցնում է իր պարտականությունների կատարումը: Միայն ծառայության պարտականությունները կատարելուց հրաժարվելու մասին հայտարարությունը բավարար չէ այս հանցակազմի առաջացման համար, անհրաժեշտ է, որ զինծառայողը փաստացի դադարեցնի դրանց կատարումը:

2. Զինծառայողը փաստացի դադարեցնում է զինվորական ծառայության հետ կապված պարտականությունների կատարումը, սակայն բացահայատ չի հայտարարում այդ մասին: Այսպես, եթե զինծառայողը կամ սպան որևէ բացահայտ հայտարարություն չի անում, որ դադարեցնում է զինվորական ծառայության պարտականությունների կատարումը, սակայն ցուցադրաբար և առանց որևէ պատճառ նշելու փաստացի դադարեցնում է այդ պարտականությունների կատարումը, ապա նման վարքագիծը ևս առաջացնում է այս հանցակազմը:

Ինչ է սահմանում ՀՀ քրեական օրենսգրքի 369-րդ հոդվածը

(Ռազմական գույքը դիտավորությամբ ոչնչացնելը կամ վնասելը)

Այս հանցագործության էությունը զենքը, ռազմամթերքը, ռազմական տեխնիկան կամ ռազմական այլ գույքը դիտավորությամբ ոչնչացնելը կամ վնասելն է:

Քննարկվող հանցագործության օբյեկտիվ կողմն արտահայտվում է ռազմական գույքը ոչնչացնելով կամ վնասելով: Ոչնչացնել նշանակում է ռազմական գույքին այնպիսի վնաս հասցնել, որից հետո այն ենթակա չէ վերականգնման և այլևս չի կարող օգտագործվել իր նպատակային նշանակությամբ, իսկ վնասելու դեպքում այդ գույքը հնարավոր է վերանորոգել և օգտագործել իր նշանակությանը համապատասխան: Վնասելու դեպքում ռազմական գույքը կարող է որոշ չափով կորցնել իր գործառնական նշանակությունը կամ կարող է փոխվել դրա արտաքին տեսքը: Ռազմական գույքը ոչնչացնելու կամ վնասելու ձևերը կարող են տարբեր լինել: Դա կարող է կատարվել պայթյունի, հրկիզման, խորտակման, ինչպես նաև այլ մեխանիկական, քիմիական, թերմալ կամ այլ միջոցներով: Ռազմական գույքը կարող է ոչնչացվել կամ վնասվել նաև այդ գույքի մի մասը հափշտակելու նպատակով (օրինակ՝ մարտական մեքենայի շարժիչը քանդելը՝ այն հետագայում վաճառելու նպատակով): Նման դեպքերում արարքը պետք է որակել համակցությամբ՝ հափշտակություն և ռազմական գույքը դիտավորությամբ ոչնչացնելը կամ վնասելը: Արդեն հափշտակված ռազմական գույքի դիտավորյալ ոչնչացումը կամ վնասումը համակցություն չի առաջացնում և որակվում է միայն որպես հափշտակություն:

Հոդվածի երկրորդ մասով որպես ծանրացնող հանգամանք նախատեսված է նույն արարքի կատարումը, որն առաջացրել է ծանր հետևանքներ: Օրենքի ձևակերպումից երևում է, որ ծանր հետևանքների նկատմամբ հանցավորը կարող է դրսևորել դիտավորություն:

Ծանր հետևանքներ են համարվում մեծ նյութական կորուստները, մարտական առաջադրանքի խափանումը, մարդու առողջությանը ծանր վնաս պատճառելը և այլն:

Հոդվածի երրորդ մասով որպես ծանրացնող հանգամանք նախատեսված է առաջին կամ երկրորդ մասով նախատեսված արարքների կատարումը ռազմական դրության, պատերազմի ժամանակ կամ մարտի պարագաներում:

Ինչ է սահմանում ՀՀ քրեական օրենսգրքի 370-րդ հոդվածը

(Ռազմական գույքն անզգուշությամբ ոչնչացնելը կամ վնասելը)

ՀՀ քր. օր.-ի հոդված 370-ը պատասխանատվություն է սահմանում զենքը, ռազմամթերքը, ռազմական տեխնիկան կամ ռազմական այլ գույքն ինքնավստահությամբ կամ անփութությամբ ոչնչացնելու կամ վնասելու համար, որն առաջացրել է ծանր հետևանքներ: Այս հանցակազմի առկայության համար անհրաժեշտ է ծանր հետևանքների առաջացումը:

Այս հանցակազմի համար ծանրացնող հանգամանքներ նախատեսված չեն:

Ինչ է սահմանում ՀՀ քրեական օրենսգրքի 371-րդ հոդվածը

(Ռազմական գույքը վատնելը)

Ռազմական գույքը տրվում է զինծառայողներին անձնական կամ ծառայողական օգտագործման նպատակով: Անձնական օգտագործման համար զինծառայողներին տրամադրվում է միայն համազգեստը և ռազմական հանդերձանքի առարկաները, իսկ ծառայողական օգտագործման համար՝ զենքը և ռազմական այլ գույքը:

ՀՀ քր. օր.-ի հոդված 371-ի առաջին մասով նախատեսված հանցագործությունը դրսևորվում է զինծառայողի կողմից անձնական օգտագործման համար իրեն տրամադրված համազգեստը, ռազմական հանդերձանքի առարկաները կամ ռազմական այլ գույքը իրացնելով: Իրացնելը ենթադրում է այդ գույքի վաճառքը, նվիրատվությունը, գրավը, այլ անձի օգտագործմանը հանձնելը և այլն:

Քննարկվող հոդվածի երկրորդ մասով պատասխանատվություն է նախատեսված զենքը կամ ռազմամթերքը վատնելու համար: Զենքը կամ ռազմամթերքը զինծառայողին ծառայողական օգտագործման համար տրամադրված զենքն է (ինքնաձիգ, ատրճանակ, կարաբին և այլն) և ռազմամթերքը (փամփուշտներ, նռնակներ, պայթուցիկ սարքեր և այլն):

Հոդվածի երրորդ մասով որպես ծանրացնող հանգամանք նախատեսված է առաջին կամ երկրորդ մասով նախատեսված արարքների կատարումը ռազմական դրության, պատերազմի ժամանակ կամ մարտի պարագաներում:

Ինչ է սահմանում ՀՀ քրեական օրենսգրքի 379-րդ հոդվածը

(Մարտ վարելու միջոցները հակառակորդին հանձնելը կամ թողնելը)

Այս հանցագործությունը դրսևորվում է պետի կողմից առանց մարտի պարագաներով հարկադրված լինելու՝ ամրությունները, մարտական տեխնիկան և մարտ վարելու այլ միջոցները հակառակորդին հանձնելով կամ թողնելով: Նշված միջոցները հակառակորդին թողնելը կարող է կատարվել ինչպես գործողությամբ, այնպես էլ անգործությամբ: Հանցակազմն առաջանում է այն դեպքում, երբ նշված արարքի կատարումը հարկադրված չէ մարտի պարագաներով: Օրենսդիրը նախատեսում է այս բացառությունը, քանի որ հնարավոր է, որ վերը նշված միջոցները հակառակորդին թողնելը տվյալ պահին մարտավարական առումով արդարացված լինի կամ նպատակ ունենա կանխելու ավելի մեծ վտանգը: Արարքն այս հոդվածով որակելու համար անհրաժեշտ է, որ բացակայեն պետական դավաճանության հատկանիշները, այսինքն՝ պետն այդ գործողությունների կատարմամբ չպետք է նպատակ ունենա օգնել կամ օժանդակել հակառակորդին:

Ինչ է սահմանում ՀՀ քրեական օրենսգրքի 380-րդ հոդվածը

(Մարտադաշտն ինքնակամ լքելը կամ զենքով գործելուց հրաժարվելը)

Զինվորական երդում տալով՝ զինծառայողը պարտավորվում է անձնվիրաբար ծառայել Հայաստանի Հանրապետությանը և հանուն նրա չխնայել կյանքը: Զինված ընդհարման ժամանակ զինծառայողը պարտավոր է հստակ կատարել մարտական բոլոր առաջադրանքները, արիաբար մարտնչել թշնամու դեմ: Քննարկվող հանցագործությունը իջեցնում է ՀՀ զինված ուժերի մարտունակությունը, խարխլում է մարտական գործողությունների կազմակերպումը, խուճապ է առաջացնում զինվորների շրջանում:

Այս հանցագործությունը դրսևորվում է զինծառայողի կողմից մարտի ժամանակ մարտադաշտն ինքնակամ լքելով կամ զենքով գործելուց հրաժարվելով: Մարտադաշտ է ցանկացած տարածություն՝ ցամաքային, օդային, ջրային, որտեղ զինված ընդհարում է տեղի ունենում հակառակորդի հետ: Մարտադաշտը լքելու ժամանակահատվածը արարքի որակման վրա չի ազդում և կարող է հաշվի առնվել պատիժը նշանակելիս:

Հոդվածի երկրորդ մասով որպես ծանրացնող հանգամանք նախատեսված է նույն արարքի կատարումը մի խումբ անձանց կողմից՝ նախնական համաձայնությամբ: Այս դեպքում երկու և ավելի զինծառայողներ նախապես համաձայնության են գալիս՝ մարտի ժամանակ մարտադաշտն ինքնակամ լքելու կամ զենքով գործելուց հրաժարվելու կապակցությամբ: Ընդ որում, այս համաձայնությունը կարող է կայացվել ինչպես մարտական գործողություններն սկսվելուց առաջ, այնպես էլ անմիջապես մարտի ընթացքում:

Ինչ է սահմանում ՀՀ քրեական օրենսգրքի 381-րդ հոդվածը

(Կամովին գերի հանձնվելը)

Կամովին գերի հանձնվելը զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված ամենավտանգավոր հանցագործություններից մեկն է: Զինծառայողի նման վարքագիծը կարող է ամբողջովին ապակազմակերպել մարտական առաջադրանքի կատարումը, խուճապ առաջացնել այլ զինծառայողների շրջանում, նվազեցնել զորամասի մարտունակությունը:

ՀՀ քր. օր.-ի հոդված 381-ով նախատեսված հանցագործությունը կարող է դրսևորվել ինչպես գործողությամբ, այնպես էլ անգործությամբ, որն ուղղված է այս կամ այն կերպ գերի ընկնելուն: Ակտիվ գործողությունները դրսևորվում են զինծառայողի կողմից հակառակորդի զորամաս ինքնակամ ներկայանալով, գրավոր, բանավոր կամ այլ կերպ հակառակորդին իր հանձնվելու մասին տեղեկացնելով և այլն: Անգործությունը

կարող է արտահայտվել հակառակորդին դիմակայելուն ուղղված միջոցներ չձեռնարկելու և գերի հանձնվելու կամավորություն դրսևորելու մեջ: Կամովին գերի հանձնվելու իրադրությունը հանցագործության որակման վրա չի ազդում և կարող է հաշվի առնվել պատիժը նշանակելիս: Հանցագործությունն ավարտված է համարվում հակառակորդին գերի հանձնվելու պահից: Քրեական պատասխանատվություն է նախատեսվում միայն կամովին գերի հանձնվելու համար: Եթե զինծառայողը գերեվարվել է չունենալով դիմադրելու հնարավորություն (նրան կապել են, բռնություն են գործադրել, վիրավոր է եղել և այլն), ապա հանցակազմը բացակայում է:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ

ՎԱՀԵ ԵՆԳԻԲԱՐՅԱՆ
ԱՐԹՈՒՐ ՉԱԽՈՅԱՆ

ԶԻՆՇԱՌԱՅՈՂԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

ԸՆՏԱՆԵԿԱՆ ՀԱՆՐԱՄԱՏՉԵԼԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Խմբագիր՝ **Հրաչիկ ՍԱՐԳՍՅԱՆ**

Լեզվաոճական խմբագիր՝ **Արմինե ՆԱԶԱՐՅԱՆ**

Տեխն. խմբագիր՝ **Արարատ ԹՈՎՄԱՍՅԱՆ**

Կազմի ձևավորող՝ **Գագիկ ՍԱՐՈՅԱՆ**

«Անտարես» հրատարակչատուն
Երևան 0009, Մաշտոցի 50ա/1
Հեռ.՝(+374 10) 58 10 59, 56 15 26
Հեռ./ֆաքս՝ (+374 10) 58 76 69
antares@antares.am
www.antares.am